

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

Հակոբյան Միեր Կարենի

**«ԱՐԵՎԵԼ ՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ
ԳՈՐԾԱՌՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒ ԾՈՒ ԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ
ՕՐԻՆԱԿՈՎ**

Առեւտրաբանական

**ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ,
միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի համար**

**Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա. Ա. Մարգարով**

Երևան - 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ1. «ԵՎՐՈՊԱԿԱՆԱՑՈՒՄԸ»՝ ՈՐՊԵՍ ԵՄՅԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ	15
1.1. «Եվրոպականացում» հասկացություն ծագումը, զարգացումը և սահմանումները	16
1.2. Եվրոպականացման գործիքները, մակարդակները և դե տերմինատները	35
ԳԼՈՒԽ2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾԱՌՄԱՆ ՆԱԽԱՐՅԱԼ ՆԵՐՇ ԵՎ ՆԵՐԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	49
2.1. Եվրոպական հարևանություն քաղաքականություն ծագումը և իրականացումը Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում մինչև և 2008 թ. 49	
2.2. Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում 2009-2017 թթ. «Արևելյան գործընկերություն» գործառնական նախադրյալներն ու արդյունքները	68
2.3. Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում «Արևելյան գործընկերություն» իրականացման վրա ազդող գործոնները	92
ԳԼՈՒԽ3. «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.....	104
3.1. «Արևելյան գործընկերություն» տեղը Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարանական դիսկուրսում	104
3.2. ԵՄ-ի հետ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հարաբերությունները զարգացման հեռանկարները	116
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	126
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....	132
ՀԱՎԵԼՎԱՃՆԵՐ	148
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	154

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Չետագոտության թեմայի արդիականության ու նշը: ԽՍՀՄ փլուզման արդյունքում ձևավորված նորանկախ հանրապետության ներքին համար արտաքին քաղաքական կողմնորոշումը եղել է պետականության կայացման կարևորագույն խնդիրներից մեկը: Չատկապես փոքր պետության ներքին պարագայում տարածաշրջանային հարափոփոխագարգացումների համատեքստում շահավետ աշխարհաքաղաքական դիրքավորումը վճռական նշանակության է ունեցել ազգային անվտանգության ապահովման, տնտեսական առաջընթացի, ժողովրդավարացման ու սոցիալական բարեփոխումների տեսանկյունից: Եվրոպական Միությանը (ԵՄ) եղել է հետխորհրդային տարածաշրջանի հիմնական արտաքին քաղաքական դերակատարներից մեկը, որը, հետաքրքրված լինելով նորանկախ պետության ներքին սեփական ազդեցության ավելացմամբ, կիրառել է տարաբնույթ մեխանիզմներ, այդ թվում՝ Եվրոպական հարևանության քաղաքականության ու նշը (ԵՉՔ) և Արևելյան գործընկերության ու նշը (ԱԷԳ):

ԱԷԳ-ի հիմնման և Չայաստանում, Վրաստանում և Մոլդովայում դրա գործառման համեմատական վերլուծությանը կարևոր ու արդիական է այդ երկրների արտաքին քաղաքական կողմնորոշման առանձնահատկության ներքին վերհանելու և հետագա զարգացման հեռանկարներն ուրվագծելու տեսանկյունից: Երեք երկրները, չունենալով ինքնաբավ արտաքին քաղաքականության վարելու համար անհրաժեշտ ռեսուրսներ, ստիպված են եղել խորը գործընկերային հարաբերության ներքին զարգացնել այս կամ այն տարածաշրջանային ու ժ(եր)ի հետ: Եթե մինչև ԱԷԳ մեկնարկը դեռևս չէին կիրառվում ինտեգրման գործունե մեխանիզմներ, ապա դրանից հետո ԵՄ-ն հետամուտ եղավ շահառու երկրներում քաղաքական, տնտեսական, իրավական ու սոցիալական փոփոխության առաջ բերելու միջոցով այդ երկրների Եվրոպականացմանը՝ ձգտելով դրանց ներառել իր տնտեսաքաղաքական ուղեծրում: Ասոցացման համաձայնագրերի (ԱՅ), Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիների (ԽՅԱԱԳ) և այլ գործիքների միջոցով ԵՄ-ն վերջին տարիներին

փորձել է Յայաստանի, Վրաստանի և Մոլդովայի արտաքին քաղաքականությանը կողմնորոշել դեպի ԵՄ: ԵՄ այս քաղաքականությանն ի պատասխան ՌԴ-ի գլխավորությամբ առաջ քաշվեց Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հիմնման գաղափարը՝ տարածաշրջանային երկու հիմնական դերակատարների՝ ԵՄ-ի և ՌԴ-ի միջև ստեղծելով որոշակի նորմատիվ հակամարտության, ինչն Ալ Գում ներառված երկրներին դրեց բարդ աշխարհաքաղաքական դրության մեջ:

Չաշվի առնելով Ալ Գ հիմնումից հետո ԵՄ-ի հետ Յայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հարաբերությունների զարգացման դինամիկան, ներկայում կարևոր է կատարել դրանց համեմատական վերլուծություն՝ հասկանալու երեք երկրներում արտաքին քաղաքական տարամետ զարգացումների դետերմինանտները և ուսումնասիրելու դրանց արդյունքում ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները: Միայն ընդգրկուն հետազոտության միջոցով է հնարավոր համապարփակ քննարկման ենթարկել Յայաստանում, Վրաստանում և Մոլդովայում արտաքին քաղաքական տեղաշարժերի վրա ազդող գործոնները, ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման քաղաքական, տնտեսական, անվտանգային ու այլ բաղադրիչները և առանձնացնելու երեք երկրների արտաքին քաղաքական հետագա զարգացման հեռանկարները:

Ալ Գ-ն ներկայում թևակոխել է զարգացման նոր փուլ. Յայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ պայմանագրային հարաբերությունների «թարմացման» շրջանը համընկնում է նաև երեք երկրներից առնվազն երկուսում (Յայաստան և Մոլդովա) ներքաղաքական տեղաշարժերի հետ, որոնց համատեքստում կարևոր է թեմայի շուրջ գիտական ուսումնասիրությունների իրականացումը:

Չաշվի առնելով ներկա շրջանում տարածաշրջանային դերակատարների հետ սերտ համագործակցությանը և/կամ ինտեգրմանը Յայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի արտաքին քաղաքական օրակարգում տրվող կարևորության աստիճանը, ինչպես նաև թե՛ ԵՄ-ի, թե՛ Ռուսաստանի հետաքրքրվածությունը

տարածաշրջանում սեփական դերի ու ազդեցության բարձրացմամբ՝ կարելի է պնդել, որ սույն աշխատանքում ուսումնասիրվող թեման խիստ արդիական է և ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Յիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: ԵՄ հարևանության քաղաքականության տեսական վերլուծությանն ու հայեցակարգայնացմանը, Ալ Գ ծագմանն ու գործառման վրա ազդող գործոններին, տարբեր համատեքստերում ԵՄ-ի հետ հարաբերությաններին և ներքին զարգացմանը տարբեր ժամանակներում անդրադարձել են տարբեր հեղինակներ:

Հարևան տարածաշրջաններում ԵՄ-ի եվրոպականացման քաղաքականությունն ու փոխադրման ավորումը՝ որպես դրա հիմնական գործիք, գերազանցապես քննարկվում են արևմտյան հեղինակների կողմից: Ընդ որում, քանզի ԵՄ հարևանության քաղաքականությունն ու եվրոպականացումն ինքնին համեմատաբար նոր երևույթներ են, խնդրի շուրջ առկա գիտական աշխատությունները ևս պատկանում են ժամանակակից շրջանին: Խնդրի վերաբերյալ հատկապես նշանակալի են Յ. Կոնի [67], Ս. Անդերսենի և Կ. Էլիասենի [7], Ռ. Լադրեի [71], Նիլի և Լեմկոլի [66], Տ. Բյորգելի [40, 41, 42, 43], Կ. Ռադալի [84], Յ. Ուլասի [99], Ս. Յիքսի և Կ.Յ. Գյոցի [64], Ս. Քոուլեսի [10], Թ. Ռիսեի [25], Ջ. Օլսենի [80], Մ. Ջիոլիանիի [23], Մ. Վինկի [98], Ս. Լավենեքսի [72, 73], Ֆ. Շիմմելֆենիգի [89] և Ու. Սեդելմայերի [91, 92], Թ. Ֆրեյբուրգի [57], Յ. Գրաբբեի [15], Կ. Վեբերի [20], Ս. Գենցլեի [58], Ռ. Յանգսի [101], Ռ. Ուոնգի [27] և այլոց հրապարակումները: Նշված հեղինակները եվրոպականացումը հիմնականում դիտարկում են որպես ԵՄ ներսում կառավարման որոշակի սկզբունքների, նորմերի ու արժեքների ամրագրում, այնուհետև՝ դրանց «արտահանում» դեպի երրորդ երկրներ, որի միջոցով ԵՄ-ն կարողանում է ընդլայնել իր արտաքին կառավարման սահմանները և լուծել աշխարհաքաղաքական գերակայության խնդիրը: Այնուամենայնիվ, մասնագիտական գրականությունում առկա չէ անվերապահ դրական կամ բացասական մոտեցում եվրոպականացման՝ որպես քաղաքական համակարգի փոխակերպման գործիքի վերաբերյալ: Ռուսալեզու գրականությունում խնդիրն էապես

ավելի նվազ չափով է արժարժված: Թերևս, կարելի է առանձնացնել Վ. Բենյունկի [5] և Ե. Գրոմոզլասովայի [6, 36] հրապարակումները:

ԵՄ արտաքին քաղաքականության նունում ԵՅԲ-ի և Ալ Գ-ի տեղին և դրա աշխարհաքաղաքական նշանակությունն անդրադարձել են Կ. Սմիթը [18], Մ. Էմերսոնը [53] և Գ. Նութջևան [55], Բրեթերթոնը և Վոգլերը [8], Ս. Լեսթերը [16], Բեչևը և Նիկոլաիդիսը [38], Գ. Սասսեն [88], Ս. Պոլին [82] և այլք: Նշված աշխատություններում ԵՅԲ-ն և Ալ Գ-ն դիտարկվում են որպես ԵՄ-ի կողմից սեփական շահերի ու անվտանգության ապահովման միջոց: Ընդ որում, մասնագիտական գրականությունում ընդունված է այն մոտեցումը, որ Ալ Գ-ի շրջանակներում ԵՄ-ն չափազանց ընդգրկուն պահանջներ է ներկայացնում շահառու երկրներին՝ փոխարենն առաջարկելով փոքր «վարձատրություն», ինչը նվազեցնում է ծրագրի գրավչությունը: Խոսքը մասնավորապես Ալ Գ-ին մասնակցող երկրների համար ԵՄ-ին անդամակցության հեռանկարի բացակայության մասին է:

Մասնագիտական գրականությունում լայնորեն տարածված է նաև Ալ Գ իրականացման քննարկումը թե՛ ԵՄ-ի, թե՛ առանձին երկրների անվտանգային շահերի ապահովման համատեքստում: Անմիջականորեն չառնվելով ատենախոսության որոշ խնդիրների՝ այնուամենայնիվ, պրոֆեսոր Զ. Քոթանջյանի բազմաթիվ աշխատություններ [1, 2, 3, 35] կարևոր ներդրում ունեն անվտանգության լույսի Չայաստանի արտաքին քաղաքական գործընթացների քննարկման մեջ: Այս առումով նշանակալի են նաև Վ. Յունանյանի [33], Զ. Թորոսյանի [32], Գ. Նոդիայի [79], Թ. Դիզի [51], Դ. Յելլի [62], Գ. Սասսենի [87], Ն. Պոպսկուի [17], Պ. Ռիկերի [21] և այլոց աշխատությունները: Խնդրի շուրջ առկա է այն գերակադիրքորոշումը, որ ԵՄ-ն իր ունեցած ռեսուրսներով չգորու չէ Էական դեր ունենալ Չայաստանում, Վրաստանում և Մոլդովայում առկա հակամարտությունների կարգավորմանը, ուստի անվտանգության քաղաքականության ԵՄ-ի ներգրավվածությունը ոչ միայն չի նպաստում Ալ Գ հեղինակության բարձրացմանը, այլ և նեղացնում է ԵՄ-ի դերը շահառու երկրների արտաքին քաղաքականությունում:

Ալ Գ-ի գործառման շուրջ մասնագիտական քննարկումներում մշտապես կարևոր տեղ է հատկացվել ԵՄ-ՌԴ հարաբերություններին և Ալ Գ-ի նկատմամբ Ռուսաստանի ունեցած դիրքորոշումներին: Առկա

գրականությանը ունում դժվար է գտնել միանշանակ պնդումներ Ալ Գ-ի իրականացման վրա Ռուսաստանի ազդեցության վերաբերյալ: Որոշ հեղինակներ [47, 48, 50, 53, 65] պնդում են, որ Ռուսաստանն ապակառուցողական դերակատարում ունի և նպաստում է Ալ Գ-ի հեղինակագրկմանը, մինչդեռ այլք [97, 52, 86] Ռուսաստանին համարում են տարածաշրջանում ԵՄ-ին նորմատիվ հակակշիռ, որը ևս ձգտում է փոքր պետությանն ներին իր ուղեծրում տեղավորել ու միջոցով իրականացնել սեփական արտաքին քաղաքական շահերը:

Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում Ալ Գ-ի գործառնումն ու դրա առանձնահատկությունները լայնորեն քննարկվում են թե՛ տեղական, թե՛ արտասահմանյան հեղինակների կողմից: Հայաստանում Ալ Գ գործառնման ուսումնասիրման հարցում առավել նշանակալի են Կ. Բեքարյանի [30], Ա. Բայբուրդյանի [29], Ա. Աթայանի և Ա. Սեթաղյանի [28], Ռ. Գիրագոսյանի [61], Ս. Մինասյանի [78], Ա. Թերզյանի [94], Ն. Գևորգյանի [31, 60], Վ. Տեր-Մաթևոսյանի [95], ինչպես նաև Լ. Սիմաոյի [93] և Մ. Ֆրեյրեի [56], Լ. Դելկուրի և Կ. Վոլչուկի [49] հրապարակումները: Հատկապես Գիրագոսյանի, Թերզյանի, Տեր-Մաթևոսյանի աշխատանքներում առանձնակի ուշադրություն է դարձվում Հայաստանի արտաքին քաղաքական «շրջադարձին» ու դրա պատճառներին, ինչպես նաև ԵԱՏՄ-ին միանալու նախադրյալներին: Եվրոպական հեղինակների հրապարակումներում խնդիրը դիտարկվում է ոչ թե Հայաստանի արտաքին քաղաքականության, այլ ԵՄ արտաքին քաղաքականությանը ունում Հայաստանին վերապահվող նշանակության և դրան համապատասխան կիրառվող գործիքազմի տեսանկյունից:

Վրաստանում և Մոլդովայում Ալ Գ իրականացումը քննարկվում է առավել ասես ԱՅ-ի իրագործման, ԵՄ-ի հետ հարաբերությունների հետագա խորացման և ԵՄ-ին հնարավոր անդամակցության լույսի ներքո: Երկու երկրներում Ալ Գ իրականացումը քննարկվում է Կ. Բուկվաձեի և Բ. Լեբանիձեի [21], Ջ. Մելիքյանի [34], Լ. Տուլաձեի [19], Դ. Ռիզեսկուի [85], ինչպես նաև Ե. Կորոստելևայի [68], Գ. Բոսսեի [39], Ն. Շապովալովայի և Յ. Բուլստրայի [26], Լ. Դելկուրի [46] և Բ. Հագեմանի [63] հրապարակած աշխատանքներում:

Վրաստանին վերաբերող աշխատություններում առավել ասես քննարկվում է այդ երկրի լիարժեք եվրոպականացման հնարավորու-

թյուրևը և ԵՄ-ի կողմից Վրաստանին տրամադրվող աջակցության համապատասխանությունը վերջինիս կողմից արձանագրվող առաջընթացին: Խնդիրը հատկապես քննարկված է Բուկվաձեի ու Լեբանիձեի և Տուլաձեի հրապարակումներում: Թեև մասնագիտական գրականությունում ՌԴ ազդեցությունը Վրաստանի «եվրոպական ձգտումների» վրա համարվում է ոչ էական, այնուամենայնիվ, Դելկուրի ծավալուն հրապարակումում ուսումնասիրվում է Ռուսաստանի միջամտությունը՝ այն գնահատելով որպես «ապակառուցողական»:

Մուլդովայի պարագայում հեղինակներն առավելապես ուշադրություն են դարձնում Ռուսաստանի հետ վերջինիս կապվածությանն ու արտաքին քաղաքականության շուրջ Մուլդովայի ներքին տարածայնություններին՝ չնայած ԵՄ պահանջների կատարման բարձր աստիճանին: Բոսսեի և Շապովալովայի ու Բունստրայի աշխատանքները կենտրոնանում են ԵՄ-ի կողմից Մուլդովայի նկատմամբ կիրառվող քաղաքականության առանձնահատկությունների, Կորոստելայի և Ռիգեսկուլի հրապարակումները՝ Մուլդովայի ներքաղաքական անկայունության վրա, իսկ Չագեմանի աշխատանքը մասնավորապես անդրադառնում է Մուլդովայի արտաքին քաղաքականությունում Ռուսաստանի դերին՝ այն դիտարկելով որպես եվրոպականացման էական խոչընդոտ:

Չեստագոտության օբյեկտը ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրի գործառնումն է Չայաստանում, Վրաստանում և Մուլդովայում:

Չեստագոտության առարկան ԱլԳ ծագումը և 2009-2017 թթ. Չայաստանում, Վրաստանում և Մուլդովայում դրա գործառման առանձնահատկություններն են, ինչպես նաև երեք երկրներում ծրագրի խորհրդարանական դիսկուրսը:

Չեստագոտության նպատակն է վերհանել ԱլԳ ծագման և Չայաստանում, Վրաստանում ու Մուլդովայում դրա գործառման նախադրյալներն ու արդյունքները և ԱլԳ-ի շուրջ երեք երկրների խորհրդարանական դիսկուրսը:

Ատենախոսության նպատակին հասնելու համար առաջադրվող **խնդիրներն** են.

▪ ուսումնասիրել ԵՄ հարևանության քաղաքականության հիմնական բնութագրիչներն ու հարևան երկրների հետ հարաբերության ունենների կառուցման սկզբունքները,

▪ վերլուծել ԱԳ զարգացման Էվոլյուցիան, առանձնացնել ԵՅԹ-ի և ԱԳ-ի տեսական ու նորմատիվ հիմքերը և հետխորհրդային տարածաշրջանում դրանց գործառման պատմությունը,

▪ վերլուծել ԱԳ-ին Յայաստանի, Վրաստանի և Մոլդովայի մասնակցության և ԵՄ-ի հետ հարաբերության ունենների զարգացման առանձնահատկությունները,

▪ առանձնացնել Յայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ԱԳ-ի գործառման վրա ազդող հիմնական գործոնները,

▪ բովանդակային վերլուծության ենթարկել ԵՄ-ի և ուսումնասիրվող երեք երկրների միջև ԱԳ-ի շրջանակներում կնքված շրջանակային փաստաթղթերը, այն է՝ Յայաստան-ԵՄ Յամպարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՅԸԳՅ), Վրաստան-ԵՄ ԱՅ-ն և Մոլդովա-ԵՄ ԱՅ-ն, և վերհանել դրանց առավելություններն ու թերությունները,

▪ համադրաբար վերլուծել երեք երկրների խորհրդարաններում ներկայացված քաղաքական ուժերի դիրքորոշումները ԵՄ-ի հետ հարաբերության ունենների զարգացման վերաբերյալ, ցույց տալ դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, ինչպես նաև ակնկալիքներն առկա մակարդակում համագործակցության ծավալումից:

Յետագոտությունում

Կիրառված

մեթոդները:

Ատենախոսությունում օգտագործվել են թե՛ համագիտական, թե՛ մասնավոր գիտական մեթոդներ: Կիրառված համագիտական մեթոդներն են համեմատականը, համակարգայինը, կառուցվածքային-ֆունկցիոնալը, նկարագրականը, դիալեկտիկականը, անալոգիան, անալիզը, սինթեզը: Աշխատանքի մասնավոր նպատակներից էլ նեղ կիրառվել են փաստաթղթերի բովանդակային վերլուծության, գործընթացային վերլուծության և դիսկուրս վերլուծության մեթոդները: ԱԳ զարգացման Էվոլյուցիայի ուսումնասիրման, ԵՅԹ-ի ու ԱԳ-ի տեսական ու նորմատիվ հիմքերն առանձնացնելու, ինչպես նաև ուսումնասիրվող երեք երկրների ու ԵՄ-ի միջև առկա

պայ մանագրայ ին հարաբերությունների քննարկման նպատակով կիրառվել է փաստաթղթերի վերլուծության մեթոդը՝ ընդգրկելով եվրոպական հանձնաժողովի (ԵՀ), ԵՄ խորհրդի, եվրոպական խորհրդարանի և ԵՄ այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթերը, ինչպես նաև ԵՄ-ի հետ Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի կնքած շրջանակային համաձայնագրերի էլեկտրոնային բնօրինակների ամբողջական տեքստերը: Ուսումնասիրվող երեք երկրների խորհրդարանական խմբակցություններում ԱլԳ-ի շրջանակներում ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման շուրջ առկա մոտեցումների ուսումնասիրման և այդպիսով հետազոտությունն էմպիրիկ տվյալներով համալրելու նպատակով ընտրվել է կիսաձևայնացված խորին հարցազրույցների մեթոդը: 2017 թ. նոյեմբերից մինչև 2018 թ. փետրվար ընկած ժամանակահատվածում երեք երկրների խորհրդարանական խմբակցությունների տասնմեկ ներկայացուցիչների հետ անցկացվել են հարցազրույցներ: Ռեսպոնդենտների համաձայնության դեպքում հարցազրույցները ձայնագրվել են: Որոշ մեջբերումներ աշխատանքում կատարված են անանուն՝ ելնելով ռեսպոնդենտների պահանջից: Հարցազրույցների տևողությունը եղել է 30-45 րոպե: Հայաստանցի ռեսպոնդենտների հետ հարցազրույցներն անկացվել են հայերենով, Վրաստանում և Մոլդովայում՝ անգլերենով կամ ռուսերենով: Հարցազրույցների հարցաշարերը ներկայացված են հավելված 1-ում:

Դեպքերի ընտրությունը կատարվել է հաշվի առնելով Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի ֆիզիկական ու ժողովրդագրական նմանությունները, ինչպես նաև տնտեսական զարգացման ցուցանիշները և էթնոքաղաքական հակամարտությունների առկայությունը, որն արտաքին քաղաքական կողմնորոշումը գուճորդում է անվտանգության ապահովման հետ: Մեկ այլ չափանիշ է ԵՄ-ի հետ հարաբերությունների բնույթն ու խորությունը: ԱլԳ-ում ներառված մյուս երկրները՝ Ուկրաինան, Բելառուսը և Ադրբեյջանը, այս առումով պակաս համեմատելի են ընտրված դեպքերի հետ: Թեև Ուկրաինայում ևս ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացումն արտաքին քաղաքական առաջ-

նահերթություն է, սակայն, լինելով ԱԳ-ում ներգրավված երկրներից ամենամեծը թե՛ տարածքով, թե՛ բնակչության թվով, թե՛ տնտեսության ծավալով, ինչպես նաև հանդիսանալով էներգետիկ ռեսուրսների տարանցման կարևոր երկիր, Ուկրաինան ԵՄ-ի համար նկատելիորեն ավելի մեծ նշանակություն ունի, քան ուսումնասիրվող երեք երկրները: Ադրբեջանի համար էլ ԵՄ-ն էներգիայի արտահանման առաջնային ուղղությունն է, ուստի երկկողմ հարաբերությունները գերազանցապես կառուցված են այս ասպեկտի վրա:

Բացի տնտեսական նշանակությունից՝ Ադրբեջանի, ինչպես նաև Բելառուսի պարագայում կարևոր է հաշվի առնել նաև առկա ավտորիտար քաղաքական վարչակարգերը, որոնք Եական խոչընդոտ են ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման համար և կասեցնում են Յայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ առկա կամ ակնկալվող համագործակցության մակարդակի ձեռքբերումը: Բացի այդ, ԵՄ-Ադրբեջան և ԵՄ-Բելառուս հնարավոր ԱՅ-ները չէին կարող ներառել ԽՅԱԱԳ-ն, քանզի այն պահանջում է տվյալ պետության անդամակցություն Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՅԿ), մինչդեռ Ադրբեջանը և Բելառուսն ունեն միայն դիտորդի կարգավիճակ: Վերջապես, Յայաստանը, Վրաստանը և Մոլդովան բազմաթիվ չափանիշներով «փոքր պետություններ» են, որոնց ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու ռեսուրսները սահմանափակ են և ինտեգրացիոն ծրագրերին մասնակցությունը զարգացման առավել Եական խթան է, քան ԱԳ մյուս երկրներում:

Անշուշտ, դժվար է պնդել, որ Յայաստանը, Վրաստանը և Մոլդովան սույն հետազոտության համատեքստում լիովին համեմատելի դեպքեր են, քանզի որոշակիորեն տարբերվում են արտաքին քաղաքական ու անվտանգային օրակարգերը: Այնուամենայնիվ, առկա նմանությունները բավարար հիմք են ծառայում համեմատական վերլուծություն իրականացնելու համար:

Առենախոսության գիտական նորույթը համեմատական վերլուծության միջոցով Յայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ԱԳ գործառման առանձնահատկությունների վերհանումն է և երեք երկրների խորհրդարանական դիսկուրսում

Այ Գ-ի շուրջ առկա մոտեցումների համապարփակ քննությունը: Մասնավորապես՝ սույն հետազոտությունը համանման մասնագիտական ուսումնասիրություններում առաջին անգամ:

▪ Համապարփակ վերլուծության են ենթարկվել Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի նկատմամբ ԵՄ քաղաքականության առանձնահատկություններն արտաքին կառավարման երեք մոդելների տեսանկյունից և եզրակացվել, որ նշված երեք երկրների պարագայում «եվրոպականացումն» առավել աստիճանաբար է ուժահեն մոդելի, այսինքն՝ աշխարհաքաղաքական մրցակցության վրա: Այնուամենայնիվ, հատկապես Մոլդովայի պարագայում տեսանելի է նաև տեղական ազդեցությունը, մինչդեռ ինստիտուցիոնալ մոդելը համաչափորեն կիրառվել է բոլոր երեք երկրներում:

▪ ԵՄ առանցքային փաստաթղթերի բովանդակային վերլուծության միջոցով քննարկվել է ԵՀԹ-ի և Այ Գ-ի ձևավորումն ու զարգացումը՝ որպես ԵՄ արտաքին քաղաքականության, անվտանգության ապահովման, ինչպես նաև եվրոպական արժեհամակարգի ընդլայնման կարևորագույն գործիք:

▪ Առանձնացվել են Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում Այ Գ-ի գործառման հիմնական խոչընդոտները, այն է՝ Ռուսաստանի աշխարհաքաղաքական հակազդեցությունը, հակամարտությունների կարգավորման գործում ԵՄ անբավարար ներգրավվածությունը, իսկ Վրաստանի և Մոլդովայի պարագայում՝ նաև ԵՄ-ին անդամակցության հեռանկարի բացակայությունը:

▪ Բովանդակային վերլուծության են ենթարկվել Հայաստան-ԵՄ ՀԸԳՀ-ն, Վրաստան-ԵՄ ԱՀ-ն ու Մոլդովա-ԵՄ ԱՀ-ն, համեմատական քննության են առնվել դրանց հիմնական դրույթները և վերհանվել հիմնական տարբերությունները, որոնք առավել աստիճանաբար են տնտեսության ու առևտրի ոլորտներին, մինչդեռ մնացած ոլորտներում համագործակցության շրջանակը գրեթե նույնն է: Միաժամանակ ցույց է տրվում, որ ԵՀԹ 2015 թ. վերանայումից հետո երրորդ երկրների հետ ծավալվող համագործակցության ու կնքվող փաստաթղթերի հարցում ԵՄ-ն սկսեց ավելի ճկուն մոտեցում դրսևորել և հաշվի առնել գործընկեր երկրների ներքին և աշխարհաքաղաքական դրույթները:

▪ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարաններում ներկայացված քաղաքական ու ժերի ներկայացուցիչների հետ խորին հարցազրույցների միջոցով համապարփակ կերպով ուսումնասիրվել են վերջիններիս դիրքորոշումները ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման և իրենց երկրի շահերին կնքված շրջանակային փաստաթղթերի համապատասխանությամբ վերաբերյալ:

▪ Էմպիրիկ ուսումնասիրության արդյունքները զուգորդելով սեփական վերլուծության հետ՝ առանձնացվել են նաև ԵՄ-ի Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հարաբերությունների զարգացման հիմնական միտումներն ու հեռանկարները:

Արեւախոսություն	սեւական	նշանակությունը
<p>Եվրոպականացման՝ որպես ԵՄ հարևանության քաղաքականության հենքի դիտարկումն է, քաղաքական փոխակերպման լույսի ներքո դրավերլուծությունն ու եվրոպականացման հիմնական գործիքների, մակարդակների ու դետերմինանտների քննությունը, որը կարող է կարևոր աղբյուր լինել համանման գիտական հետազոտությունների րականացնելիս: Աշխատանքի արդյունքները թույլ են տալիս նաև ավելի լավ ընկալել աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի նման փոքր պետությունների առավելագույնս շահավետ դիրքավորման անհրաժեշտությունը:</p>		

Արեւախոսություն	գործնական	նշանակությունը:
<p>Հետազոտության արդյունքները կարող են նպաստել արտաքին քաղաքական գերատեսչություններում ԵՄ հարևանության քաղաքականության շուրջ առավել խորքային պատկերացումների ձևավորմանը և նպատակային քաղաքական գործողությունների նախաձեռնմանը:</p>		

Աշխատանքի շրջանակներում մի շարք հիմնահարցերի, ինչպիսիք են երրորդ երկրների հետ հարաբերություններում ԵՄ-ի կողմից կիրառվող քաղաքականության նորմատիվ հիմքերը, Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի արտաքին քաղաքականությունում ԵՄ դերը և վերջինիս հետ հարաբերությունների խորացումն ու դրավրաՌուսաստանի ազդեցությունը, գործնական վերլուծությունը կարող է կարևոր աղբյուր ծառայել գիտնականների, քաղաքական

վերլուծաբանների, քաղաքականություն մշակողների և ուսումնասիրվող խնդրով հետաքրքրված լայն հանրության համար:

Ատենախոսությունը կարող է օգտագործվել այլ գիտական հետազոտություններում, ինչպես նաև բուհական համակարգում՝ եվրոպական ուսումնասիրությունների ոլորտում դասընթացների ու ծրագրերի, ինչպես նաև ուսումնական ձեռնարկների կազմման նպատակով:

Աշխատանքի ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (յոթենթագլուխներով), եզրակացությունից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից, հավելվածներից և հապավումների ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 143 մեքենագիր էջ է:

**ԳԼՈՒԽ 1. «ԵՎՐՈՊԱԿԱՆԱՏՈՒՄԸ»՝ ՈՐՊԵՍ ԵՄ ՅԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ**

ԵՄ արտաքին քաղաքականությանն ավանդաբար կառուցված է եղել սեփական գրավչության ներուժի ու արդյունավետ քաղաքական համագործակցության վրա: Անշուշտ, աշխարհաքաղաքական գործունեությունը չափազանց կարևոր նշանակություն են ունեցել ԵՄ-ի ձևավորման ու ընդլայնման գործում: Սակայն ԵՄ-ն մինչ այս կամ այն պետությանն իր շարքերում ներգրավելը փորձել է փափուկ ու ժիկիրաժաման միջոցով ներագդել վերջինիս տնտեսաքաղաքական համակարգի վրա՝ միաժամանակ ձևավորելով դրական հասարակական տրամադրություններ ԵՄ նկատմամբ, ինչն ապահովում էր տվյալ պետության սահուն ինտեգրումը ԵՄ հետ: Այնուամենայնիվ, ԵՄ ընդլայնումը համեմատաբար դանդաղ էր ընթանում մինչև 1990-ական թվականները:

«Երկաթե վարագույրի» անկմանը զուգահեռ փոխվեցին նաև Եվրոպայի ֆիզիկական սահմանների վերաբերյալ պատկերացումները: Երկբևեռ աշխարհի պարագայում հեշտությամբ կարելի էր Եվրոպան սահմանել որպես Եվրասիայի ծայր արևմուտքում տեղակայված տարածաշրջան, իսկ ԵՄ-ն՝ այդ տարածաշրջանի պետությունների տնտեսական միավորում, քանզի դրանից արևելք գտնվող պետությունները, լինելով խորհրդային ճամբարում և անդամակցելով Վարշավյան պակտին, իրենց չէին էլ նույնականացնում արևմտյան Եվրոպայի հետ: Մինչդեռ 20-րդ դարի վերջին Եվրասիայի քաղաքական քարտեզի վրա Էական փոփոխություններ եղան (Գերմանիայի միավորումից մինչև ԽՍՀՄ անկում), ինչը ԵՄ-ի ու տարածաշրջանի մյուս կազմակերպությունների (Հյուսիսատլանտյան դաշինք /ՆԱՏՕ/, Եվրոպայի խորհուրդ /ԵԽ/, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն /ԵԱՀԿ/) համար ստեղծեցին աշխարհաքաղաքական նոր միջավայր: Արդեն 1990 թ. ընդունվեց «Փարիզի խարտիան», որով մարդու իրավունքները, լիբերալ ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունն ու կոնֆլիկտների խաղաղ կարգավորումը

հռչակեցին Նոր Եվրոպայի նորմատիվ հիմնասյուղներ [105]: Կարևորվեց անցումային պետության ունեցող մ քաղաքական փոփոխության ունեցողի խրախուսումը: Կազմակերպության ունեցողը սկսեցին երկրներին տրամադրել խորհրդատվություն, ինչպես նաև ֆինանսական միջոցներ քաղաքացիական հասարակության ու կուսակցական համակարգը կայացնելու համար: Նման զարգացումները նպատակ ունեցին փոխակերպել նախկին խորհրդային ճամբարի երկրների քաղաքական համակարգերն ու դրանք առավել ազույնս մոտեցնել եվրոպական ստանդարտներին: 1993 թ. Եվրոպական խորհուրդը Կոպենհագենում ընդունեց նաև ԵՄ-ին անդամակցելու քաղաքական, տնտեսական ու կազմակերպական չափանիշները (հայտնի են նաև Կոպենհագենյան չափանիշների անվամբ), որոնց բավարարելու դեպքում միայն տարածաշրջանի որևէ պետություն կարող էր դառնալ ԵՄ անդամ: Այսինքն՝ ԵՄ-ն ավտորիտարիզմի ու չկայացած քաղաքական համակարգերի հնարավոր վտանգներից խուսափելու նպատակով նպաստում էր իր նոր հարևանների զարգացմանն ու ժողովրդավարացմանը, սակայն միաժամանակ ինստիտուցիոնալ աջակցում էր անդամակցության գործընթացը՝ բացառելու ներքին կտրուկ փոփոխությունները:

ԵՄ սահմաններից դուրս գտնվող երկրներին ԵՄ ինստիտուցիոնալ շրջանակում «տեղավորելու» քաղաքականությանը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «*Եվրոպականացում*» անվամբ, որի գիտական մշակմանն էլ ուղղված է ատենախոսության առաջիկա հատվածը: Եվրոպականացման տեսական քննարկումն ու կոնցեպտուալ աջակցումը թույլ կտան դիտարկել առանձին երկրների դեպքերը ԵՅԲ-ի ու ԱլԳ-ի շրջանակում:

1.1. «Եվրոպականացում» հասկացության ծագումը, զարգացումը և սահմանումները

Եվրոպականացումը լայն հասկացություն է և օգտագործվում է միանգամից մի քանի գիտակարգերում՝ սոցիոլոգիա, տնտեսագիտություն, մարդաբանություն, քաղաքագիտություն և այլն: «Եվրոպականացում» հասկացության ծագման փնտրտուքները

կարող են տանել մինչև միջնադար, երբ ձևավորվում էին ներկայիս եվրոպական արժեհամակարգի նախատիպերը, և եվրոպան ամբողջ թափով ընթանում էր դեպի քաղաքակրթորեն ինքնուրույն տարածաշրջանի կոնսուլիդացմանը: Սակայն քաղաքագիտական գրականության մեջ այն սկսել է շրջանառվել միայն 20-րդ դարում՝ դեռևս մինչև ԵՄ ձևավորումը: Սկզբում եվրոպականացումն ընկալվում էր որպես միայն եվրոպական տարածաշրջանին բնորոշ կենսակերպերի ու արտադրության ձևերի, սովորույթ ունեների, կրոնի ու լեզվի, ինչպես նաև քաղաքական սկզբունքների, ինստիտուտների ու ինքնուրույն ունեների տարածում [67, 102]: Սակայն Սառը պատերազմի ավարտին գուգահեռ ավելացավ եվրոպականացման քաղաքական երանգավորումը, և այն սկսեց լայնորեն օգտագործվել գրականության ու նույն սկսած 1990-ական թվականներից, երբ մասնագետները փորձում էին հասկանալ տնտեսաքաղաքական ու սոցիալ-մշակութային փոխակերպումները, որ տեղ էին գտնում եվրոպական ինտեգրման գործընթացում: Այն հատկապես կիրառվում էր այն երկրների պարագայում, որոնք ոչ ժողովրդավարական (\$աշխատական կամ կոմունիստական) վարչակարգերից, իսկ երբեմն՝ պատերազմներից կամ էթնիկ անջատողական հակամարտության ունեներից հետո ձգտում էին անդամակցել ԵՄ-ին [55: p. 5]:

Այդ շրջանից սկսած տրվել են եվրոպականացման բազմաթիվ սահմանումներ, որոնք սովորաբար ոչ թե հակասում, այլ լրացնում են միմյանց: 3. Օլսենն իր ընդգրկուն հոդվածում առաջարկում է «եվրոպականացում» հասկացության կիրառման հինգ հնարավոր տարբերակ՝ (1) եվրոպայի արտաքին սահմանների ընդլայնում ու եվրոպական տարածաշրջանի վերածում միասնական քաղաքական տարածքի, (2) եվրոպական ինստիտուտների ստեղծում, (3) վերազգային կառավարման ներթափանցում առանձին երկրների կառավարման համակարգեր, (4) քաղաքական կազմակերպման ձևերի արտահանում և (5) քաղաքական միավորման նախագիծ [80: p. 923-924]: Առաջին տարբերակը, թերևս, վերաբերում է ԵՄ անդամակցության թեկնածու երկրներին, որոնք եվրոպականացման արդյունքում դարձան ԵՄ անդամներ: Երկրորդ տարբերակն ունի վերազգային բնույթ և կիրառելի է համաեվրոպական քաղաքական համատեքստում: Երրորդ

կիրառությունը բնորոշ է ԵՄ-անդամ պետությունների հետ հարաբերությանը, երբ ԵՄ-ն փորձում է ազդել իր անդամների ներքին քաղաքականության վրա: Չորրորդ տարբերակում ակնհայտորեն դիտարկվում են ԵՄ-ի սահմաններից դուրս գտնվող պետությունների (ինչպիսիք են ԵՅԶ երկրները) հետ հարաբերությունները, որտեղ ԵՄ-ն փորձում է փոխակերպել ողջ քաղաքական միջավայրը և այն համապատասխանեցնել իր չափանիշներին: Հինգերորդ կիրառությունն ունի միջկառավարական բնույթ և վերաբերում է ԵՄ անդամ պետությունների միջև կապերի ամրապնդմանն ու «միասնական եվրոպային» պատկանելության գիտակցության բարձրացմանը: Օլսենի այս մոտեցումը, ներառելով եվրոպականացման թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ սոցիալ-մշակութային, թե՛ վարքականական ասպեկտները, դիտարկում է եվրոպականացման տարբեր «դեմքերն» և եզրակացնում, որ իր բազմադեմության պատճառով եվրոպականացման միասնական սահմանում դժվար է գտնել, քանի որ յուրաքանչյուր առանձին դեպքում փոխվում են դրա էությունն ու գործիքները:

Թ. Ռիսեի և այլոց 2001 թ. հոդվածում եվրոպականացումը սահմանվում է որպես *«եվրոպական մակարդակում կառավարման ուրույն կառուցվածքների, այսինքն՝ քաղաքական, իրավական ու սոցիալական ինստիտուտների ստեղծում ու զարգացում, որոնք հորմալացնում են դերակատարների միջև հարաբերությունները, և քաղաքական ցանցերի ընդլայնում, որոնք թույլ են տալիս ստեղծել կիրառելի եվրոպական կանոններ»* [25: ք. 3]: Նման մոտեցում է առաջարկում նաև Հ. Ուոլեսը, ով եվրոպականացումը համարում է հատկանիշ, որը ձևավորում է եվրոպական պետությունների քաղաքականությունն ու քաղաքական կուրսը [99]: Այս սահմանումներն ավելի շատ կենտրոնանում են ԵՄ կազմակերպական ներուժի զարգացման, ընդհանուր նորմերի ու ընկալումների վրա, ինչպիսիք են անդամակցությունը, պատկանելությունը կոլեկտիվ հանրույթին, որն ունակ է գործել միասնաբար՝ հիմնվելով ընդհանուր սկզբունքների վրա: Որոշ հեղինակներ նման եվրոպականացումը բնորոշում են անգամ որպես եվրոպաֆիկացիա [7]: Տ. Բյորգելը եվրոպականացումը սահմանում է որպես *«գործընթաց, որի*

արդյունքում ներքաղաքական դաշտն աստիճանաբար կախվածության մեջ է հայտնվում եվրոպական քաղաքականության նից» [40]: Ռ. Լադրեխը եվրոպականացումը համարում է քաղաքականության ուղղության ու ձևի վերափոխման աստիճանական գործընթաց, որը եվրոպական տարածաշրջանի քաղաքական ու տնտեսական դինամիկան դարձնում է ներքին քաղաքականության ներքին անբաժան մասը [71: ր. 69]:

Եվրոպականացման նման ավանդական պատկերացումները, մեծ հաշվով, այն նկարագրում են որպես ԵՄ անդամ պետության ներքին միավորման գործընթաց, մինչդեռ եվրոպականացումը միայն ԵՄ-ացումը չէ: Եվրոպայում գործում են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիան (ԱԱԵԱ), ԵԱՀԿ-ն և Եվրախորհուրդը, որոնց կազմակերպչական կառուցվածքն ու անգամ ինքնությունը թեև կապված են ԵՄ-ի հետ [98: ր. 66], սակայն դրանք հանդես են գալիս որպես ինքնուրույն ինստիտուտներ՝ սեփական նպատակներով ու եվրոպականացման սեփական գործիքներով: Այս համատեքստում անհրաժեշտ է տարբերակել եվրոպականացումն ու եվրոպական ինտեգրումը: Վերջինը թեկնածու պետության իրավական, տնտեսական, քաղաքական համակարգերի համապատասխանեցումն է ԵՄ չափանիշներին, որը կարող է հանգեցնել ԵՄ անդամակցության, մինչդեռ եվրոպականացումն ավելի լայն է: Ինտեգրման բաղադրիչը չներառող եվրոպականացումը ենթադրում է երրորդ պետության ներքին մոտարկում եվրոպական նորմերին ու արժեհամակարգին, ինչը կարող է տեղի ունենալ թե՛ ԵՄ-ի, թե՛ այլ կազմակերպությունների գործունեության արդյունքում: Այս պարագայում նպատակ է դրվում ոչ թե այդ պետության ներքին վերջնարդյունքում ներգրավվել որևէ եվրոպական կազմակերպությունում, այլ պարզապես դրանք դարձնել «եվրոպական»՝ այդպիսով հեշտացնելով ԵՄ անդամ պետության ներքին հետ նրանց հաղորդակցությունը: Փոքր-ինչ բացարձակացնելով կարելի է նույնիսկ ասել, որ ԵՄ-ն ձգտում է երրորդ պետության ներքին դարձնել ամբողջապես իր նման, սակայն չներառել ԵՄ կազմում, քանի որ այդ պարագայում (ի թիվս այլ հետևանքների) կպակասեն ԵՄ-ին անդամակցել ձգտող

պետությունները՝ կասկածի տակ դնելով ԵՄ ինտեգրացիոն ներուժը [74: p. 793], ինչպես նաև ավելի զգայուն կոառնա ԵՄ արտաքին անվտանգությունը, քանզի այլևս չի լինի Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի կամ Միջին Ասիայի ոչ ժողովրդավարական պետություններից ԵՄ-ին առանձնացնող պատնեշը: ԵՄ-ի այս մոտեցումը բազում քննադատությունների է արժանացել, որոնք կներկայացվեն ատենախոսության մյուս հատվածներում: Սույն աշխատանքում «Եվրոպականացում» հասկացությունն օգտագործվելու է ԵՄ-ի կողմից Յայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ԵՄ նորմերի ու արժեքների, կառավարման նմուշների ու առևտրային մոդելների տարածման համատեքստում և Եվրոպական ինտեգրումից տարանջատվելու է ԵՄ անդամակցության բաղադրիչով:

1990-ական թթ. ԵՄ-ի արտաքին քաղաքականության ընդգրկունության աճին գուգահեռ լայնացավ նաև Եվրոպականացման ընկալումը: Հեղինակների ուշադրությունը ԵՄ անդամ պետություններից աստիճանաբար անցավ անդամակցության թեկնածուներին [90, 15, 92], իսկ հետագայում՝ նաև անդամակցության հեռանկար չունեցող պետություններին [73, 72, 20]: Եվրոպականացումը սկսեց ընկալվել որպես ԵՄ-ում ձևավորվող, սակայն դեպի դրասահմաններից դուրս գտնվող երկրներ նորմերի, ինստիտուցիոնալ նմուշների ու մշակութային արժեքների արտահանման գործընթաց, որը նպաստում է ԵՄ արտաքին կառավարմանը: Օրինակ, Կ. Ռադաելլին իր 2004 թ. հոդվածում, առաջարկում է հետևյալ սահմանումը. «Եվրոպականացումը *ֆորմալ ու ոչ ֆորմալ կանոնների, ընթացակարգերի, քաղաքական կուրսի պարադիգմերի, ոճերի, գործելակերպերի և ընդհանուր համոզմունքների ու նորմերի (ա) կառուցման, (բ) միախառնման ու (գ) իրականացման գործընթաց է: Դրանք, նախ, սահմանվում ու ամրակայվում են ԵՄ քաղաքականության իրականացման գործընթացներում, իսկ հետո՝ հարմարեցվում պետությունների ներքին դիսկուրսին, ինքնությանը, քաղաքական կազմակերպությունների ու հանրային քաղաքականության սկզբունքներին» [84: p. 3]: Կարևոր է նկատել, որ այս պարագայում ԵՄ-ի ու գործընկեր պետությունների միջև առկա են ուղղահայաց հարաբերություններ, այսինքն՝ ԵՄ-ն է ստեղծում*

այն կանոնները, որոնցով պետք է ընթանա համագործակցությունը [37]:

Համադրելով «Եվրոպականություն», «Եվրոպականացվածություն» և «Եվրոպական ինքնություն» հասկացությունները՝ Ջ. Մակկորմիկն իր «Եվրոպականություն» (“Europeanism”) աշխատությունում նշում է [11: ք. 8-9], որ Եվրոպականությունը ենթադրում է որոշակի արժեքների և համոզմունքների համախումբ, իսկ Եվրոպականացվածությունը բնորոշում է հասարակության կողմից այդ արժեքների ու համոզմունքների ընդունվածության, յուրացվածության աստիճանը: Ըստ որում, եթե Եվրոպականացվածությունը փոփոխական է, ապա Եվրոպականությունը հաստատուն է, թեև դրա բաղադրիչ որակները ևս կարող են փոփոխվել: Նագտնում է, որ եթե Եվրոպայի հետինքնանույնացումը ենթադրում է Եվրոպային պատկանելու, նրա հետ ասոցացվելու գագացում, որը նույնական չէ (կամ լրացյալ է) որևէ պետությանը, ազգին կամ կրոնին պատկանելուն, ապա Եվրոպականացվածությունը տալիս է հաշվարկման միջոց, որով կարելի է չափել ու հասկանալ ինքնությունը: Կարելի է ասել, որ ըստ Մակկորմիկի՝ Եվրոպականացվածությունը Եվրոպականացման գործընթացի բյուրեղացումն է, որը հետագայում տվյալ հանրության ձևավորում և կոնսոլիդացումն է Եվրոպականությունը:

Քննարկելով Եվրոպականացման սահմանումները՝ անհրաժեշտ է այն դիտարկել նաև համանման հասկացությունների համատեքստում և գտնել Եվրոպականացման տեղը դրանց շարքում: Այդպիսիք են արևմտականացումն ու համաշխարհայնացումը: Արևմտականացումը (վերտերնիզացիա) ենթադրում է արևմտյան արժեքների ու գործելակերպերի արտահանում դեպի երրորդ երկրներ¹: Արևմտականացումը լայն հասկացություն է, որը ներառում է ինչպես Եվրոպականացումը, այնպես էլ ամերիկականացումը: Այս երկուսը, խթանված լինելով տարբեր ուժային կենտրոնների կողմից, ունեն բազում նմանություններ և երբեմն ընկալվում են միակերպ: Այդ պատճառով ատենախոսության այս հատվածում դրանք կօգտագործվեն «արևմտականացում» ընդհանուր հասկացությամբ:

¹ Արևմուտք ասելով՝ այս համատեքստում հասկանում ենք ԵՄ-ն ու ԱՄՆ-ը:

Թե՛ համաշխարհայնացումը, թե՛ արևմտականացումը ենթադրում են որևէ միավորի առկա վիճակի փոփոխություն և նոր վիճակի ներմուծում: Ըստ էության, սա երկու հասկացությունների գլխավոր և, միգուցե, միակ նմանությունն է. տարբերությունները շատ ավելի շատ են: Համաշխարհայնացումն առաջին հերթին տնտեսական կատեգորիա է, մինչդեռ արևմտականացումը շեշտադրում է քաղաքական փոփոխությունը՝ ներառելով, իհարկե, տնտեսական ու մշակութային բաղադրիչները ևս: Բացի այդ, մեծ հաշվով, համաշխարհայնացումը չի ենթադրում մի երկրի կամ երկրների խմբի տնտեսական ու այլ չափանիշների արտահանում այլ երկրներ (նույնիսկ եթե փաստացի այդպես է ստացվում), այլ առկա բազմազան համակարգերի միասնականացում ընդհանուր գաղափարների ու գործելակերպերի ներքո: Ի հակառակ սրան՝ արևմտականացումը ենթադրում է որոշակի նորմերի ու արժեքների մի կետից մյուսին փոխանցման գործընթաց: Այսինքն՝ համաշխարհայնացումը բազմակենտրոն, իսկ արևմտականացումը՝ միակենտրոն գործընթաց է: Մեկ այլ տարբերություն է այն, որ համաշխարհայնացումը տեղի է ունենում գերազանցապես անդրազգային (կազմակերպությունների աշխարհագրական ընդլայնում, բազմազգ բիզնես կորպորացիաների հիմնում և այլն), իսկ արևմտականացումը՝ միջազգային և վերազգային մակարդակում (քաղաքականության կազմակերպական ձևերի փոխանցում, կառավարման համակարգի կատարելագործում և այլն):

Սակայն համաշխարհայնացման ու արևմտականացման գլխավոր տարբերությունը, թերևս, դրանց բովանդակությունում ժողովրդավարության տեղն է: Համաշխարհայնացումն ամենևին չի ենթադրում ժողովրդավարական կառավարման սկզբունքների տարածում, մինչդեռ արևմտականացման ողջ էությունը պայմանավորված է ժողովրդավարացմամբ: Անշուշտ, կարելի է վիճել, որ ժողովրդավարացումն ինքնին հակաժողովրդավարական երևույթ է, քանզի դեմոկրատական կառավարման ձևը չի կարող մի պետության կամ կազմակերպության կողմից փոխանցվել, առավել ևս՝ պարտադրվել այլ պետության [81]: Այնուամենայնիվ, ինչպես էմերսոնն ու Նուբջևան են նշում, ԵՄ-ն ու ԱՄՆ-ը

ժողովրդավարացման ձգտականության կենտրոններ են, որոնք հեղինակություն են հանդիսանում այլ պետությունների համար [55: ր. 3]: Գիա Նոդիան սրան ավելացնում է, որ «*ոչ թե Արևմուտքն է իր մոդելները պարտադրում «մյուսներին», այլ հենց «մյուսներն» են կենտրոնական տեղ հատկացնում ժամանակակից արևմտյան ժողովրդավարական նախազօրին և ձգտում մասնակցել դրանց»* [24: ր. 11]: Չնայած այս առանցքային նմանությունը, եվրոպականացումն ու ամերիկականացումն ունեն մի շարք տարբերություններ:

Նախ, ԵՄ գոյությունն ինքնին եվրոպականացման հաջողություն է: Շուրջ երեք տասնյակ պետությունների քաղաքական, տնտեսական ու իրավական համակարգերը մեկ քաղաքական տանիքի տակ միավորելն արդեն իսկ եվրոպական նորմերի ու արժեքների տարածման ցուցանիշ է, ինչի արդյունքում ԵՄ սահմաններից դուրս եվրոպականացումն իրականացվում է պետությունների դաշինքի, այլ ոչ թե մեկ պետության կողմից: Ի հակառակ՝ ամերիկականացումն իրականացվում է միայն ԱՄՆ-ի կողմից, որը թեև ողջ Ամերիկա աշխարհամասի երկրներում մեծ ազդեցություն ունի արտաքին քաղաքականությունների ձևավորման գործում, սակայն ցայժմ մեկ տանիքի տակ կարողացել է միավորել միայն Կանադային ու Մեքսիկային՝ 1994 թ. կնքելով Ազատ առևտրի հյուսիսամերիկյան համաձայնագիրը (ՆԱՖՏԱ): Թեև դեռևս 1948 թ. ստեղծված Էր Ամերիկյան պետությունների կազմակերպությունը (ԱՊԿ), իսկ 1979 թ.՝ նաև Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը (ՄԻՄԱԴ), սակայն այն, որ ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ Կանադան չեն ընդունում ՄԻՄԱԴ-ի օրենսդրությունը, խաթարում է դրա հեղինակությունը, հատկապես երբ համեմատում ենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) հետ [55: ր. 4]:

Եվրոպականացումն ու ամերիկականացումը տարբերվում են նաև աշխարհագրական ընդգրկմամբ: Եվրոպական տարածաշրջանի ոչ բոլոր երկրներն են անդամակցում ԵՄ-ին, ուստի՝ եվրոպականացումը կարող է իրականացվել երկու ուղղությամբ՝ ԵՄ ներսում և դրանից դուրս: Մինչդեռ Ամերիկա աշխարհամասի բոլոր պետություններն անդամակցում են ԱՊԿ-ին, ինչի արդյունքում ամերիկականացումն իրականացվում է միայն տարածաշրջանի

սահմաններում: Մինևույն ժամանակ, նշենք, որ աշխարհագրական գործոններով պայմանավորված՝ ինքնուրույն ձևավորման ինդիքը ևս երկու գործընթացներում տարբեր հարթությունների վրա է: Եթե Եվրոպայի սահմանների վերաբերյալ (երբեմն իրարամերժ) քննարկումները հանգեցնում են մշակութային բացառման պատկերացումների ու քաղաքակրթական բանավեճի [37: ք. 79], ապա Ամերիկայի պարագայում հստակ են տարածաշրջանի սահմանները, իսկ քաղաքակրթությունը պետությունների տարբերակման առանցքային չափանիշ է (թերևս, Լատինական Ամերիկայի տարածաշրջանայնության բարձր մակարդակի շնորհիվ):

Ընդ որում, Եվրոպականացումը բազմակենտրոն է, քանզի իրականացվում է մեկ կազմակերպության միջոցով, սակայն մի շարք պետությունների կողմից, մինչդեռ ամերիկականացումը միակենտրոն է, ինչն էլ ավելի է բարդացնում ԱՄՆ-ի գործը: Վերջինիս հետ հարաբերությունների վարթարացումը երրորդ երկրներին վանում է ամերիկականացման ողջ գաղափարից, մինչդեռ ԵՄ-ի առանձին պետությունների հետ հարաբերությունների վիճակի փոփոխությունը կարող է ավելի թույլ ազդեցություն ունենալ երրորդ երկրում Եվրոպականացման գործընթացի վրա:

Եվրոպականացման ու ամերիկականացման կարևոր տարբերություն է նաև երկու գործընթացներում կիրառվող ռեսուրսները: ԵՄ-ն, չունենալով, ռազմական ռեսուրսներ, կիրառում է նորմատիվ քաղաքականություն՝ գերազանցապես հիմնվելով փափուկ ուժի մեխանիզմների ու երկարաժամկետ բարեփոխումների վրա: Մինչդեռ ԱՄՆ-ը, լինելով գերհզոր ռազմական ուժ, հաճախ կիրառում է կոշտ ուժ ու առավել կարճաժամկետ հեռանկարում հասնում սեփական արտաքին քաղաքական նպատակների իրագործմանը: Այստեղ, այնուամենայնիվ, կարելի է վիճել, որ ԱՄՆ-ի ռազմական միջամտությունները կարող են հակառակ ազդեցություն ունենալ ամերիկականացման գործընթացի վրա և այդ միջամտությանը ենթարկված երկրներին վանել ամերիկյան նորմերից ու արժեքներից, մինչդեռ ԵՄ-ի արտաքին քաղաքականության նորմատիվությունը կարող է երկարաժամկետ հեռանկարում

ապահովել եվրոպական նորմերի ու արժեքների տարածումը երրորդ երկրներում:

Այս պիսով, արևմտականացման ողջ գործընթացի հիմքում դնելով ժողովրդավարացումը, եվրոպականացումն ու ամերիկականացումն, այնուամենայնիվ, տարբերվում են դերակատարների բնույթով, կազմակերպական աստիճանով, ինչպես նաև կիրառվող ռեսուրսներով, ինչն անմիջականորեն ներազդում է նաև դրանց առաքելաբանական փոփոխության վրա:

Եվրոպականացման էությունը սուսումնասիրությունն անհրաժեշտ է դարձնում դրա ազդեցության կոնցեպտուալացումը: Արդյո՞ք եվրոպականացումը փոխակերպում է քաղաքական համակարգերը, թե՞ հարմարվում դրանց կառուցվածքային տրամաբանությանը: Ռ. Ուոնգն առանձնացնում է եվրոպականացման հինգ հնարավոր դրսևորումներ [27], որոնք տարբերվում են ԵՄ-ի ու երրորդ երկրների միջև հարաբերությունների բնույթով և վերջիններիս քաղաքականության վրա ունեցած ազդեցությամբ: Դրանք ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Եվրոպականացման կիրառման հինգ հնարավոր տարբերակները

	Առաջ եկող փոփոխության ուղղություն (հարակից գործընթացներ)	Ազդեցության չափում
ԵՄ նորմերի հարմարեցում ազգայինին	Վերևից ներքև (համաշխարհայնացում, քաղաքական կուրսի կոնվերգենցիա)	<i>ինտերցիա</i>
ԵՄ նորմերի պոյեկտում ազգայինի վրա	Ներքևից վերև՝ հպանցիկ (քաղաքականության պոյեկտում, քաղաքական ուսուցում, քաղաքականության փոխանցում)	<i>ինտեգրացիա</i>
Ինքնուրույն վերակառուցում	Վերևից ներքև (Էլիտայի սոցիալականացում)	<i>փոխակերպում</i>
Արդիականացում	Վերևից ներքև (ժողովրդավարացում, տնտեսական զարգացում, արևմտականացում)	<i>օպորտունիզացում</i>
Քաղաքական իզոմորֆիզմ	Վերևից ներքև՝ հպանցիկ (քաղաքական ուսուցում, մրցակցության ու փոխանցում)	

Մասնագիտական գրականությանը լայնորեն դիտարկում է եվրոպականացման տեղային ազդեցությունը [10, 41, 42, 64]: Բյուրգելն ու Ռիսեն առաջարկում են հետևյալ վարկածը՝ որքան գործընկերեր կրի քաղաքական համակարգը տարբեր է եվրոպականից, այնքան մեծ է եվրոպականացման ազդեցությունը [41: ր. 10]: Սակայն միայն այս տարբերությունը բավարար պայման չէ եվրոպականացում խթանելու համար, ուստի՝ հեղինակները դիտարկում են նաև պետությունների կողմից դրա ընդունման աստիճանը: Ըստ այդմ՝ առանձնացվում է եվրոպականացման տեղային ազդեցության երեք աստիճան՝ կլանում, հարմարեցում, փոխակերպում [41: ր. 10]: Առաջին պարագայում պետությունները եվրոպական նորմերն ընտրողաբար կիրառում են իրենց ներքին քաղաքականությանում՝ առանց էապես փոփոխելու սեփական քաղաքական միջավայրն ու ինստիտուտները: Այս դեպքում տեղային ազդեցությունը ցածր աստիճանի է: Ինտեգրումը ենթադրում է, որ պետությունները եվրոպականացման ազդեցությամբ ձևափոխում են գործող ինստիտուտները, երբեմն՝ ավելացնում նոր ինստիտուտներ՝ այդպիսով թույլ տալով միջին աստիճանի տեղային ազդեցություն: Փոխակերպման պարագայում պետությունները գործող ինստիտուտներն ու քաղաքական կուրսը փոխարինում են նորով կամ գործողները ձևափոխում են այնքան, որ դրանք այլևս էապես տարբերվում են իրենց նախկին ձևից: Նշանակալիորեն ձևափոխվում են նաև դրանց նկատմամբ կուլեկտիվ պատկերացումները, ինչի արդյունքում տեղի է ունենում բարձր աստիճանի տեղային ազդեցություն: Այս աստիճանները, կարելի է ասել, ուղիղ համեմատական են ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման աստիճանին: ԵՄ անդամները, հիմնվելով համաեվրոպական նորմերի վրա, պարզապես որոշ բարելավումներ են կատարում սեփական քաղաքական համակարգում, քանզի մինչ անդամակցությունը վերջինն արդեն իսկ մոտարկվել է եվրոպականին: ԵՄ անդամակցության թեկնածուները կամավոր սկսում են հետևել եվրոպական ստանդարտներին և ձևափոխում են տեղի ինստիտուտները՝ «համաեվրոպականին» պատկանելու նպատակով: Մինչդեռ անդամակցության թեկնածու չհամարվող, սակայն ԵՄ-ի հետ

սերտ հարաբերությունների ձգտող պետությունները ստիպված են արմատապես վերափոխել սեփական քաղաքական համակարգերը:

Քննարկված մոտեցումը թեև ընդգրկուն է և կարող է բացատրել տարբեր երկրներում եվրոպականացման տեղային ազդեցության բնույթն ու ուղղությունը, սակայն այն խնդիրը դիտարկում է՝ ելնելով դրա դրսևորման ձևերից, այլ ոչ թե էությունից: Եվրոպականացում բառն ինքնին ենթադրում է գործընթաց, ավելի կոնկրետ՝ ոչ եվրոպականի վերածում եվրոպականի: Բացարձակ առումով՝ սա նշանակում է, որ գործընկեր պետությունները եվրոպական չեն, և նրանց դարձնում են եվրոպական: Այս պարագայում կարելի է առանձնացնել շփման երկու բևեռ՝ եվրոպական և ոչ եվրոպական: Հարաբերական առումով եվրոպականացումը կարող ենք փոքր-ինչ ճկել՝ այն դիտարկելով որպես բազմափուլ և բազմաշերտ գործընթաց, որն ընդունում է տարբեր ձևեր և երբեք չի կարող հասնել կատարելության: Այս պարագայում եվրոպականացում կարող է տեղի ունենալ եվրոպական տարածաշրջանում կամ դրան մոտ գտնվող բոլոր այն երկրներում, որոնք մաս են կազմում եվրոպական կառույցների կամ ձգտում են համագործակցել դրանց հետ՝ Միջին Ասիայից մինչև արևմտյան Եվրոպա ու Աֆրիկա: Հարաբերական մոտեցումը թույլ է տալիս ենթադրել, որ նույնիսկ եվրոպական կառույցներում կարող են ընթանալ եվրոպականացման գործընթացներ, ինչպիսիք են միասնական արտաքին ու պաշտպանական քաղաքականության ներմուծումը կամ ԵՄ արտաքին գործողությունների ծառայության ստեղծումը: Այնուամենայնիվ, եվրոպականացումը դիտարկենք բացարձակ թե հարաբերական առումներով՝ ԵՄ-ի համատեքստում դրա փոխակերպող բնույթը տեսանելի է առնվազն ժամանակային կտրվածքով: Այսօր ԵՄ-ի մաս կազմող պետությունները մի քանի տարի կամ տասնամյակ առաջ անցել են, այսպես կոչված, «համապատասխանեցման» փուլը, այսինքն՝ եվրոպականացվել են, այնուհետև՝ իրենց արդեն կոլեկտիվ փորձն արտահանել այլ երկրներ: Նույն տրամաբանությամբ, ԽՍՀՄ փլուզումից հետո եվրոպականացումը դարձավ ժողովրդավարությանն ու շուկայական տնտեսությանն անցման խելամիտ տարբերակ, ինչը կենտրոնական ու արևելյան Եվրոպայի,

ինչպես նաև հետխորհրդային երկրների մեծ մասին դրդեց սեփական քաղաքական համակարգերը մասնակիորեն կամ ամբողջությամբ համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին:

Եվրոպականացման փոխակերպող բնույթի ուսումնասիրմանը կարևոր հավելում է մասնագետների այն դիտարկումը, որ եվրոպականացման սուբյեկտների հարաբերություններն ուղղահայաց են՝ կառուցված վերնից ներքև, որտեղ եվրոպական կառույցները (մասնավորապես՝ ԵՄ-ն) հանդես են գալիս որպես նորմեր ստեղծող և թելադրող, իսկ առանձին պետությունները՝ որպես դրանք ընդունող և ադապտացնող [10, 13, 37, 64, 98]: Հաճախ նույնիսկ եվրոպականացման դիսկուրսում հիմնական սուբյեկտ է համարվում ԵՄ-ն, քանզի վերջինս դրան տվել է ավելի հստակ ու համակարգային նշանակություն [37: ք. 78]: Լավենեքսն ու Շիմմելֆենիգն ընդգծում են, որ այս աստիճանակարգային մոդելի պարագայում ԵՄ-ն իր կանոնակարգերի միջոցով պետություններին առաջարկում է կառավարման նախասահմանված ինստիտուցիոնալ նմուշներ [74: ք. 798]՝ ստեղծելով անհամաչափ հարաբերություն «մենք»-ի ու «նրանք»-ի միջև [72: ք. 682]: Օ. Անաստասակիսը գտնում է, որ եվրոպականացման, իսկ հաճախ՝ ԵՄ-ացման գործընթացում հարաբերությունները պայմանավորված են առանձին պետության հզորությամբ ու զարգացման աստիճանով: Ըստ այսմ, նա նշում է, որ քիչ զարգացած երկրներում եվրոպականացումը հավասար է համակարգի կառուցվածքային փոխակերպման ու արդիականացման, մինչդեռ ավելի զարգացած ու հարուստ երկրների համար այն աստիճանական բարեփոխումների ու համապատասխանեցման սահուն գործընթաց է [37: ք. 81]: Սակայն, մեծ հաշվով, նագտնում է, որ ԵՄ-ն է թելադրում խաղի կանոնները, և առանձին պետությունները դրանք փոփոխելու սահմանափակ կամ անգամ զրոյական ներուժ ունեն:

Արդյունքում ԵՄ-ն երրորդ պետությունների համար ստեղծում է ներքին քաղաքականության նոր՝ եվրոպական մոդել: Կան նաև այս մոտեցման հակառակորդներ [43], որոնք գտնում են, որ ուղղահայաց հարաբերությունների մոդելում ԵՄ-ի դերն ուճացված է, քանի որ ոչ բոլոր դեպքերում է այն լավագույն ընտրությունն այլ երկրների համար, ինչը թուլացնում է ԵՄ-ի «թելադրելու»

ներու ժը: Այնուամենայնիվ, եվրոպականացումը թե՛ փիլիսոփայական, թե՛ ֆունկցիոնալ տեսանկյունից բնականորեն ենթադրում է ինչ-որ չափանիշների համապատասխանեցման ուղղահայաց գործընթաց, որը հանգեցնում է համակարգային փոխակերպումների: Այլ կերպ ասած՝ այն եվրոպականի ներթափանցումն է ազգայինի մեջ [98: p. 63]: ԵՄ բուրոր ինտեգրացիոն ծրագրերում և հենց ԵՄ անդամակցության գործընթացում ԵՄ-ն ստեղծում է նորմեր ու ինստիտուցիոնալ ստանդարտներ, ապա՝ փորձում դրանք արտահանել առանձին պետություններ և վերջիններիս քաղաքական, իրավական, տնտեսական ու սոցիալական համակարգերը մոտեցնել դրան: ԵՄ-ն դառնում է «դոնոր», իսկ առանձին պետությունները՝ «ռեցիպիենտ»: Այլ հարց է, որ պետությունները կարող են չցանկանալ կամ պատրաստ չլինել ընդունել ԵՄ առաջարկած նորմերը: Մինևույն ժամանակ, ԵՄ-ն կարող է տարբեր պետությունների նկատմամբ կիրառել եվրոպականացման տարբեր օրակարգեր՝ ցածր մակարդակի ինտեգրումից մինչև լիարժեք անդամակցություն: Այս երկու գործոնների ազդեցությամբ եվրոպականացում կարող է ընդհանրապես տեղի չունենալ, սակայն անգամ նվազագույն չափով տեղի ունենալ ու պարագայում ուղղահայաց հարաբերությունն անխուսափելի է:

Իր սահմաններից դուրս գտնվող պետություններում քաղաքական փոխակերպում առաջ բերելուն ուղղված ԵՄ քաղաքականությունը հաճախ բնորոշվում է «արտաքին կառավարում» հասկացությամբ [57, 59, 72, 74, 101], որը ծառայում է որպես ԵՄ-ի ու երրորդ պետությունների միջև հաղորդակցության ձևերի համապարփակ հիմք [68: p. 1270]: Ս. Լավենեքսն ու Ֆ. Շիմմելֆենիզն արտաքին կառավարումը դիտարկում են որպես ԵՄ նորմերի¹ ու կանոնակարգերի փոխանցում դեպի երրորդ երկրներ կամ միջազգային կազմակերպություններ [74]: Ս. Լավենեքսը, ցիտելով Ս. Սմիթին, նշում է նաև, որ արտաքին կառավարումը ԵՄ քաղաքականությունում առաջ եկավ հետաառըպատերազմյան շրջանում, երբ երկար ժամանակ «բացառման քաղաքականություն» վարելուց հետո ԵՄ-ն

¹ Նկատի ունեն իրավական նորմերը, քանզի հոդվածում նշվում է, որ ԵՄ արտաքին քաղաքականության հիմքը *acquis communautaire*-ն է (ԵՄ օրենսդրությունը, իրավական ակտերն ու դատական որոշումները) [74: p. 791]:

անցավ «ներառման քաղաքականության»՝ այդպիսով վերացնելով սահմանները Եվրոպայում [72: p. 680]: Արտաքին կառավարումը կարելի է համարել Նոր Եվրոպայի քաղաքական ինքնության անբաժանելի մասը, որը պայմանավորել է ԵՄ-ի հարաբերություններն իր սահմաններից դուրս գտնվող երկրների հետ: Որոշ հեղինակների կողմից ԵՄ-ի հետսառըպատերազմյան արտաքին քաղաքականությունը հաճախ դիտարկվում է ժողովրդավարության խթանման համատեքստում, իսկ երբեմն էլ նույնացվում է դրահետ [14, 55, 89, 75, 101]: Այս տեսանկյունից Լավենեքսն ու Շիմմելֆենիգն [75] առանձնացնում են ԵՄ-ի կողմից ժողովրդավարության խթանման երեք մոդել՝ կապում (linkage), ուղղահայաց փոխանցում (leverage) և կառավարում (governance), որոնք տարբերվում են թիրախային համակարգով, ակնկալվող արդյունքով, հիմնական միջոցներով ու բնորոշ գործիքակազմով: Կապումը ենթադրում է նորմերի փոխանցում անդրազգային մակարդակում, իսկ հարաբերությունները հիմնականում հորիզոնական հարթության վրա են: Այստեղ թիրախը հասարակություններն են, իսկ ակնկալվող արդյունքը՝ ժողովրդավարական մշակույթը: Ուղղահայաց փոխանցումը ժողովրդավարության խթանման վերևից ներքև սկզբունքն է, որի պարագայում հիմնականում կիրառվում են քաղաքական խրախուսման ու պատժի մեխանիզմները: Այս պարագայում թիրախը քաղաքական կարգն է, ակնկալվող արդյունքը՝ ժողովրդավարական ինստիտուտները: Կառավարումը ենթադրում է անդրկառավարական ոլորտային համագործակցություն, որը հանգեցնում է քաղաքական համակարգում թափանցիկության, հաշվետվողականության ու մասնակցայնության աճին: Այստեղ թիրախը քաղաքական համակարգի տարբեր ոլորտներն են, ակնկալվող արդյունքը՝ ժողովրդավարական կառավարումը: Ընդ որում, հեղինակների կարծիքով՝ ԵՄ անդամակցության հեռանկար չունեցող երկրներում (ինչպիսիք են ԵՅՔ երկրները) կիրառվում է կառավարման մեթոդը, քանզի այս դեպքում ուղղահայաց փոխանցում իրականացնելու ԵՄ ռեսուրսները սահմանափակ են: Սակայն նրանք միևնույն ժամանակ նշում են, որ արդյունավետ արտաքին կառավարումը միշտ է, որ հանգեցնում է ժողովրդավարացման, քանի որ ոլորտային ու վարչական բարեփոխումները կարող են

համատեղելի լինել ոչ ժողովրդավարական ինստիտուտների հետ: Օրինակ՝ կառավարությունները կարող են բուրժուադեմոկրատիան հասանելի դարձնել հասարակությանը, ավելի կանոնակարգված ձևով դիտարկել քաղաքացիների դիմումները, սակայն վերջնարդյունքում ընդունել ոչ ժողովրդավարական քաղաքական որոշումներ: Այս նկատմամբ հեղինակները կասկածի տակ են դնում եվրոպականացման փոխակերպող ուժը, սակայն ոչ բնույթը:

Կապում, ուղղահայաց փոխանցում և կառավարում դասակարգմանը հիմնականում համապատասխանում են կրկին Լավենեքսի ու Շիմմելֆենիգի առաջարկած երեք մոդելները, որոնք նկարագրում են, թե ինչպես է ԵՄ արտաքին կառավարումը տեղի ունենում: Դրանք են՝ (1) ինստիտուցիոնալ, (2) ուժահեն և (3) տեղային [74: p. 801-805]:

Չամաձայն ինստիտուցիոնալ մոդելի՝ ԵՄ արտաքին կառավարումը ձևավորվում է ԵՄ գործող ինստիտուտների կողմից, որոնք ստեղծում են ԵՄ նորմերի ու կառավարման ձևերի արտահանման շրջանակ: Այսինքն՝ արտաքին կառավարումը պետք է արտացոլի ԵՄ-ի ներքին կառուցվածքը. եթե այն հիմնված է աստիճանակարգության կամ ցանցային կառավարման սկզբունքների վրա, նույնափսին կլինի նաև ԵՄ-ի կողմից կառավարվող արտաքին միջավայրը: Սա իր հերթին ենթադրում է, որ ԵՄ արտաքին կառավարման արդյունավետությունը կախված է ԵՄ գործող ինստիտուտներից: Սակայն առկա է արդյունավետության խթանման երկու մոտեցում: Չամաձայն առաջինի՝ որքան հստակ, պարտավորեցնող և կիրառելի են ԵՄ նորմերը, այնքան մեծ է ԵՄ սահմաններից դուրս դրանց ընդունման ու իրագործման հավանականությունը: Երկրորդ մոտեցումն ուղարկություն է դարձնում ԵՄ նորմերի միջազգային լեգիտիմության վրա: Այսինքն՝ որքան այդ նորմերն ընդունելի են ԵՄ-ի ներսում և որքան համապատասխան են միջազգային այլ նորմերին, այնքան հավանական է, որ ԵՄ-ից դուրս գտնվող երկրները դրանք կընդունեն ու կկիրառեն: Այս մոտեցումը հակիրճ կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝ ԵՄ արտաքին կառավարումը բխում է ԵՄ ներքին կառավարումից:

Եթե փորձենք առանձնացնել ինստիտուցիոնալ մոտեցման առավել ություններն ու թերությունները, կարելի է նշել, որ այն ԵՄ-ի համար կարևոր հիմք է իրենից դուրս գտնվող պետությունների հետ հարաբերությունների կառուցման տեսանկյունից, քանզի ԵՄ ինստիտուտների կայունությունն ու արդյունավետությունը մեծապես պայմանավորում են ԵՄ-ի լեգիտիմությունն ու վստահելիությունը: Սակայն, միևնույն ժամանակ, կայացած ինստիտուտները կարող են բավարար պայման չլինել արտաքին կառավարում իրականացնելու համար: Այն կարող է ԵՄ-ն գրավիչ դարձնել այլ պետությունների համար, սակայն վերջիններս կարող են պատրաստ չլինել իրենց քաղաքական ու իրավական համակարգը համապատասխանեցնել ԵՄ չափանիշներին:

Ուժահեն մոտեցումն առաջարկում է, որ արտաքին կառավարումը պայմանավորված է ԵՄ-ի հզորություն և երրորդ պետությունների հետ դրա փոխկապվածությամբ, ինչպես նաև տարածաշրջանում կառավարում առաջարկող այլ մրցակից ուժերի հետ հարաբերակցությամբ: Այս պարագայում արտաքին կառավարման ձևերը համապատասխանում են ոչ թե ԵՄ ներքին կազմակերպական կառուցվածքին, այլ արտաքին ուժերի դասավորությանը: Արդյունավետ արտաքին կառավարում իրականացնելու համար անհրաժեշտ է, որ երրորդ պետությունները կախյալ լինեն ԵՄ-ից, ընդ որում՝ ավելի կախյալ, քան որևէ այլ ուժից: Այս պարագայում կարևոր է հաշվի առնել ԱՄՆ-ի ու Ռուսաստանի դերը՝ որպես այլ ընտրանքներ տարածաշրջանի երկրների համար: Երկու երկրներն էլ կարևոր ախարհաքաղաքական շահեր ունեն եվրոպական տարածաշրջանում կամ դրա առանձին հատվածներում: Սակայն եթե ԵՄ-ն ու ԱՄՆ-ը կարող են կիրառել կառավարման համատեղելի սկզբունքներ՝ երբեմն նույնիսկ լրացնելով միմյանց, քանզի եվրոպականացումն ու արևմտականացումը կարող են ընկալվել միակերպ [55: ք. 7], ապա Ռուսաստանի ու ԵՄ-ի արտաքին կառավարման սկզբունքների էական տարբերությունը գրեթե անհնար է դարձնում նման համագործակցությունը և տարածաշրջանի փոքր պետություններին երբեմն դնում երկընտրանքի առաջ: Ուժահեն մոտեցման կիրառելիությունը նկատելի է ԵՄ 2004 թ. ընդլայնման

համատեքստում: Ըստ էության, դրանում ներառված բոլոր պետությունների համար ԵՄ-ն թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես ամենաշահավետ արտաքին քաղաքական ընտրությունն էր, ինչը հանգեցրեց դրանց սահուն անդամակցությանը ԵՄ-ին: Մինչդեռ ԱԳ-ում ներառված շատ երկրների համար ԵՄ-ից բացի կարևոր արտաքին քաղաքական դերակատար էր նաև Ռուսաստանը, որի տարածաշրջանային օրակարգը կարող էր խոչընդոտել ԵՄ նորմերի տարածմանը: Յենց այդ պատճառով էլ ԵՄ անդամակցության թեկնածու երկրներում եվրոպականացումն ընթանում է չափազանց արագ, մինչդեռ անդամակցության հեռանկար չունեցող երկրներում ԵՄ արտաքին կառավարումը գրանցում է հատվածական կամ ժամանակավոր հաջողություններ և մեծապես կախված է առանձին պետությունների աշխարհաքաղաքական դրությունից: Այս մոտեցումը թեև շատ դեպքերում կարող է բացատրել այս կամ այն պետության արտաքին քաղաքական ընտրությունը, սակայն միևնույն ժամանակ կարող է կիրառելի չլինել ինքնաբավ և/կամ չեզոք պետությունների պարագայում, որոնց օրակարգում չկարևորե արտաքին դերակատարին նախապատվություն տալը:

Էմերսոնն ու Նոթթինգեյմ [55], առաջարկելով ձգողականության մոդելը, համադրում են այս երկու մոտեցումները: Նրանք գտնում են, որ ԵՄ-ն իր ինստիտուցիոնալ կառուցվածքի ու նորմատիվության շնորհիվ տարածաշրջանի պետությունների համար դառնում է ձգողականության կենտրոն: Այսինքն՝ ԵՄ-ն բարձրացնում է իր գրավչությունը և դառնում ժողովրդավարական կառավարում առաջարկող ամենանախընտրելի ուժը տարածաշրջանում, ինչը դրդում է երրորդ երկրներին (որը հեղինակները բնութագրում են որպես «ծայրամաս») սեփական քաղաքական համակարգերը համախառասխանեցնել ԵՄ չափանիշներին: Այս պարագայում ԵՄ-ն իր ներքին կառուցվածքի ու բաց լինելու միջոցով տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը թեքում է իր կողմը:

Վերը բերված երկու մոտեցումներին կարևոր լրացում է տեղային մոտեցումը, համաձայն որի՝ արտաքին կառավարման ձևերն ու արդյունավետությունը պայմանավորված են երրորդ երկրների ներքին կառուցվածքով: Այսինքն՝ ԵՄ նորմերի ընդունումն ու կի-

րառու մը կախված են երրորդ երկրների տեղական կարգերի, ավանդույթների, հասարակական համակարգի ու վարչական կառուցվածքի հետ դրանց համատեղելիությանից: Ի տարբերություն մյուս երկու մոտեցումների՝ ԱԳ համատեքստում այս մեկն ավելի հազվադեպ կարող է բացատրել ԵՄ արտաքին կառավարման կիրառելիությանը, քանզի հետխորհրդային երկրները հաճախ արտաքին քաղաքական ընտրություն կատարելիս առաջնորդվում են ոչ թե տարածաշրջանային խոշոր դերակատարների կողմից առաջարկվող փոփոխությունների ընդունելիությանից, այլ սեփական անվտանգության (թե՛ տնտեսական, թե՛ ռազմական) ու առաջընթացի ապահովման գործում այդ դերակատարների պոտենցիալ կարևորությունից: Այսինքն՝ եթե, օրինակ, ԵՄ-ի հետ հարաբերությունների սերտացումը կարող է նպաստել կտրուկ տնտեսական աճին, ապա տվյալ պետությունը հակված կլինի ձգտել նման սերտացման՝ պայմանով, որ որևէ այլ դերակատար չի խոչընդոտի նման պրագմատիկ ընտրության կատարմանը: Այսինքն՝ երրորդ երկրներն իրենց ընտրության հարցում կկարևորեն սեփական կարգերին այլ ուժերի համապատասխանությունը միայն այն պարագայում, եթե արտաքին կառավարում առաջարկող բոլոր դերակատարները նույնչափ գրավիչ են և նույնչափ գորեղ: Սակայն նման դեպքերը գործնականում բացառված են:

Անշուշտ, հազվադեպ է այս մոտեցումներից որևէ մեկն ինքնուրույն բացատրում ԵՄ արտաքին կառավարման հաջողությունը. սովորաբար դրանցից երկուսի կամ նույնիսկ երեքի համադրությամբ է հնարավոր դառնում ԵՄ-ից դուրս գտնվող երկրներում ԵՄ նորմերի արդյունավետ կիրառումը: Պարզապես կախված առանձին դեպքերից՝ մոտեցումներից մեկը գերակայություն է ստանում մյուսների նկատմամբ: ԱԳ երկրների պարագայում ԵՄ-ն սովորաբար հանդես է գալիս որպես տնտեսական առաջընթացի ու ժողովրդավարացման չափանիշ, իսկ երբեմն՝ նաև Ռուսաստանի ազդեցությունը նվազեցնելու/վերացնելու միջոց: Այս պարագայում կիրառելի են ինստիտուցիոնալ և ուժահեն մոտեցումները: Թերևս, միայն Բելառուսի պարագայում են ԵՄ արտաքին կառավարման փորձերը տապալվել դրանց ընդունելու

պատրաստակամության բացակայության պատճառով (գործել է տեղային մոտեցումը):

Այսպիսով, հիմնականում ԵՄ-ն է սահմանում երրորդ երկրների հետ հարաբերության ներքին շրջանակն ու զարգացման օրակարգը, որտեղ, արտաքին կառավարումն օգտագործելով որպես գործիք, նպաստում է այդ երկրների քաղաքական փոխակերպմանը, ինչը մեկ բառով կարելի է բնորոշել որպես եվրոպականացում: Այնուամենայնիվ, այն միայն սուբստանցիա է, որը ներքին ու արտաքին գործոնների ազդեցությամբ կարող է փոխել ձևը և ունենալ տարբեր հետևանքներ:

1.2. Եվրոպականացման գործիքները, մակարդակները և դետերմինանտները

Եվրոպականացումը, լինելով քաղաքական փոխակերպման գործընթաց, ընդունում է տարբեր ձևեր, և կիրառվում են տարբեր գործիքներ դրա բարեհաջող իրականացումն ապահովելու համար: Շիմմեյֆենիգն ու Սեդելմայերն առանձնացնում են եվրոպականացման երեք գործիքներ՝ *արտաքին խթաններ*, *սոցիալական ու սուղում և փորձի կրկնօրինակում*, որոնք բոլորը ենթադրում են ԵՄ նորմերի ինստիտուցիոնալացում երրորդ երկրներում [91: p. 661]: Սակայն դրանց արդյունավետությանը տարբերվում է՝ կախված տվյալ պետության կողմից ԵՄ նորմերն ընդունելու պատրաստակամությանից, այլ դերակատարների ազդեցությանից և այլ գործոններից:

Չամաձայն *արտաքին խթանների* մոդելի՝ ԵՄ արտաքին կառավարումը հիմնվում է փոխադրման ակնարկի վրա, որի միջոցով ԵՄ-ն սեփական նորմերը սահմանում է որպես պայմաններ, որոնց երրորդ երկրները պետք է հետևեն ԵՄ-ի կողմից «վարձատրվելու» համար: Այդ վարձատրությանը կարող է լինել աջակցության կամ տնտեսության, քաղաքականության ու իրավունքի ոլորտներում ինստիտուցիոնալ կապերի տեսքով, որոնք ԵՄ-ի դեպքում կարող են հանգեցնել ԵՄ-ի ԱՅ-ի կնքման, իսկ ԵՄ անդամակցության թեկնածու երկրների դեպքում՝ լիարժեք ան-

դամակցության: Այս մոդելի պարագայում ԵՄ-ն երրորդ երկրին «վարձատրում» է, եթե վերջինս կատարում է առաջադրված պայմանները, կամ գրկում է վարձատրությունից, եթե պայմանները չեն բավարարվում: Սակայն ԵՄ-ն, ինչպես նկատում են որոշ հեղինակներ [90: ր. 496-497], որևէ կերպ չի միջամտում տվյալ պետության կողմից պայմանների ընդունմանը: Այլ կերպասած՝ ԵՄ-ն պատժամիջոցների կամ այլ գործիքների միջոցով չի ստիպում թիրախային կառավարությանը հետևել իր առաջադրած նորմերին, սակայն հետևելու պարագայում վարձատրում է: Թեև առաջին հայացքից կարող է թվալ, թե այս մոդելը հիմնված է ռեալիստական պատկերացումների վրա, սակայն այն կարելի է բնորոշել որպես նեոինստիտուցիոնալ իզմի դրսևորում, որտեղ ԵՄ-ն հանդես է գալիս որպես միասնական քաղաքական կազմակերպություն, որի ներսում ձևավորվում են ընդհանուր նորմեր, ապա՝ տեղափոխվում ազգային մակարդակ: Սակայն կարևոր է հավելել, որ արտաքին խթանների մոդելն օգտվում է միայն ռացիոնալ ընտրության ինստիտուցիոնալ իզմից, մինչդեռ սոցիոլոգիական ինստիտուցիոնալ իզմը կարող է միայն օժանդակ դեր կատարել: Հեղինակները գտնում են, որ փոխապայմանավորման արդյունավետությունը կախված է երրորդ երկրների կողմից ծախս-օգուտ հարաբերակցությունից: Այլ կերպասած՝ վերջիններս կհետևեն ԵՄ-ի առաջադրած պայմաններին, եթե դրանցից ստացած օգուտն ավելին է, քան դրան հարմարվելուն ուղղված ջանքերը: Ծախս-օգուտ հարաբերակցությունն իր հերթին կախված է մի քանի գործոններից՝ պայմանների որոշակիություն, ստացվելիք օգուտների չափ ու ստացման ժամանակ, ԵՄ խոստումների հուսալիությունը և հարմարման բարդությունը: Ինչպես հեղինակները նշում են, արտաքին խթանների արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է, որ ԵՄ-ն ավելի քիչ հետաքրքրված լինի երրորդ երկրներին վարձատրելով, քան վերջիններս [91: ր. 665]: Նկատենք, որ Ալ Գ-ի պարագայում ԵՄ-ն գրեթե ոչ մի պարագայում պարաստ չէ հրաժարվել գործընկեր երկրներին վարձատրելուց, քանզի դրանով պարզապես կկորցնի այդ երկրներում քաղաքական զարգացումների նկատմամբ վերահսկողությունը՝ այդպիսով թուլացնելով իր տարածաշրջանային ազդեցությունը: Հարկ է

նշել, ԵՄ-ի համար ԱԼԳ երկրների տնտեսական կարևորությունն այնքան էլ մեծ չէ, մինչդեռ վերջիններիս համար ԵՄ-ի հետ տնտեսական հարաբերությունների խորացումը խիստ կարևոր նշանակություն ունի սեփական տնտեսությունների առաջընթացի համար: Եվ չնայած սրան՝ ԵՄ-ն հաճախ ավելի մոտիվացված է արտաքին խթաններ տրամադրելու հարցում, քան թիրախային երկրները՝ դրանք ընդունելու: Սա ցույց է տալիս որոշակի անհամաչափ հարաբերություն, որտեղ ԵՄ-ն տարածաշրջանում արտաքին կառավարումն իրականացնում է գերազանցապես տնտեսական խթանների միջոցով, սակայն տարածաշրջանի երկրներից ստացվելիք գլխավոր օգուտը վերջիններիս կայունությունն ու քաղաքական նվիրվածությունն է ԵՄ-ին: Այս անհամաչափությունը որոշ մասնավոր դեպքերում կարող է հանգեցնել փոխադրման ավերակների սկզբունքի ձախուղմանը: Յեղիակները նաև հավելում են, որ արտաքին խթանների մոդելի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է, որ ԵՄ-ն լինի միակ կամ առնվազն լավագույն այլ ընտրանքը երրորդ երկրների համար: Եթե տարածաշրջանում լինի ԵՄ-ից քիչ պայմաններ առաջադրող և միևնույն ժամանակ ԵՄ-ից շատ վարձատրող որևէ այլ ուժ, ԵՄ-ն հնարավոր է՝ տանուլ տա ծախս-օգուտ հարաբերակցությունը:

Սոցիալական ուսուցման մոդելն ամբողջությամբ հենվում է սոցիալական կոնստրուկտիվիզմի հիմնաքարերի վրա, որը փոխադրման ավերակներից մասնաշաղկապներից հանդիսանում է: Այս տեսությունն անկողմնակիցները զարգացրել են «*միջազգային սոցիալականացման*» հայեցակարգը, որը մարտահրավեր է նետում ռեալիզմին [9]: Այս հայեցակարգը հիմնվում է սոցիալական ազդեցության, փաստարկման ու համոզման գործընթացների հետևանքադրում շահերի վերաձևակերպում ու ինքնության փոփոխություն [89: p. 2], որոնք ԵՄ-ի ներսում ստեղծում են միասնականության զգացում և թույլ տալիս ձգտել ԵՄ նորմերի ընդլայնման: Սոցիալական ուսուցման մոդելը, ցույց տալով փոխադրման ավերակների անարդյունավետությունն ու սահմանափակությունը, եվրոպականացումը դիտարկում է ոչ թե որպես

ռեսուրսների վերաբաժանման, այլ սոցիալականացման ու ուսուցման գործընթաց, որտեղ գլխավորը ոչ թե նյութական փոխադրման ավորումն է, այլ ԵՄ նորմերի համապատասխանությունը երրորդ երկրների զարգացման տրամաբանությամբ: Այս պարագայում այդ երկրների համար խթան է հանդիսանում ոչ թե նյութական վարձատրությունը, այլ եվրոպական ինքնությունն ու արժեքները յուրացնելը: Այսինքն՝ ԵՄ-ն արտաքին կառավարում իրականացնելու համար պետք է ձգտի ոչ թե «վճարել» երրորդ երկրներին, այլ վերջիններս համար դառնալ ամենալեզվազիտ ու գրավիչ արտաքին քաղաքական ուժը: Այլ կերպասած, երրորդ երկիրն ընդունում է ԵՄ նորմերը, եթե համոզվում է, որ դրանք համապատասխանում են իր կոլեկտիվ ինքնությանն ու արժեքներին [91: ք. 667-668]: Այստեղ կարևոր է նշել, որ սոցիալական ուսուցման մոդելի հաջողությունն էապես կախված է ոչ միայն երրորդ երկրում ԵՄ-ի նկատմամբ առկա տրամադրություններից, այլև ԵՄ-ի կողմից այդ երկրին տրված բնորոշումներից: Եթե ԵՄ-ն մինչև որևէ ծրագրում ներառելն այդ երկիրը որակում է որպես եվրոպական արժեքներին մոտկանգնած ու «խոստումնալից» պետություն, վերջինիս եվրոպականացման հավանականությունը մեծանում է: Կառուցված լինելով կոնստրուկտիվիստական պատկերացումների վրա՝ սոցիալական ուսուցման մոդելն ինչ-որ առումով հաղթահարում է ռացիոնալ ինստիտուցիոնալ իզմի առաջարկած՝ ուղղահայաց հարաբերությունների սկզբունքը, որտեղ ԵՄ-ն հանդես է գալիս որպես թելադրող և առաջարկում է ԵՄ-երրորդ երկրներ հարաբերությունների առավել համագործակցային, հորիզոնական մոտեցում, որի պարագայում ԵՄ-ն սեփական քաղաքական, տնտեսական ու իրավական ներուժի շնորհիվ ստանում է երրորդ երկրներին սոցիալականացնելու լեզվազիտ իրավունք, իսկ վերջիններս ազատ են ԵՄ նորմերը չ/ընդունելու հարցում: Թեև այս մոդելը երբեմն կարող է այլ ընտրանք լինել փոխադրման ավորման սկզբունքին, սակայն այն չափազանց սահմանափակ է ԵՄ-ի հետ մշակութային նմանությունն չունեցող երկրների եվրոպականացման հարցում: Եթե արտաքին խթանների մոդելի ձախողման համար անհրաժեշտ է, որ երրորդ երկիրը չունենա ԵՄ-ի հետ խորը հարաբերություններ հաստատելու ան-

հրաժեշտությանը, ապա սոցիալական ուսուցման մոդելը կարող է չգործել նաև այն դեպքում, եթե տվյալ երկրի համար ԵՄ-ն գրավիչ է սոցիալ-մշակութային տեսանկյունից: Այս սահմանափակությունն, այնուամենայնիվ, չի քաջառում եվրոպականացման հաջողությունը, քանզի երկու մոդելների համաժամանակյա կիրառումը կարող է հանգեցնել ԵՄ-ի համար ցանկալի արդյունքի: Օրինակ՝ քաղաքացիական հասարակության կայացմանը կամ համայնքային զարգացմանը նպաստելը կարող է ցույց տալ սոցիալական ուսուցման, իսկ \$ինանսական աջակցությունն ու մարդկանց տեղաշարժի ազատականացումը՝ արտաքին խթանների մոդելի արդյունավետությունը: Ընդ որում, կախված տվյալ երկրից և իրավիճակից՝ դրանք պետք է կիրառվեն տարբեր համամասնություններով:

Եվրոպականացման երրորդ գործիքը *փորձի կրկնօրինակումն* է, որը, կարելի է ասել, դուրս է արտաքին կառավարման շրջանակից և հեռանում է նախորդ երկու մոդելների տրամաբանությունից: Այս մոդելը ենթադրում է, որ երրորդ երկիրը պետք է ԵՄ նորմերն ընդունի առանց խթանների կամ համոզման, իսկ դրա պատճառը պետք է լինի երկրի ներսում առկա դժգոհությունը գործող քաղաքական կարգից [91: 668]: Այսինքն՝ ներքաղաքական դերակատարները վերանայում են «դրսում» գործող քաղաքական կարգերը և ուսումնասիրում դրանց կիրառելիությունը սեփական երկրում, ինչից հետո որոշում են՝ դրանք կրկնօրինակել, թե ոչ: Այս պարագայում ԵՄ նորմերը կարող են ընդունվել այլ պետությունների կողմից միայն այն դեպքում, եթե դրանք կարող են արդյունավետորեն լուծել երկրում առկա ներքին խնդիրները: Փորձի կրկնօրինակման գործիքն ինչ-որ առումով նման է Էմերսոնի ու Նոթալանի առաջարկած՝ ժողովրդավարացման ձգողականության մոդելին. ԵՄ-ն իրենից դուրս գտնվող պետությունների համար դառնում է ժողովրդավարության տիպար, որի կրկնօրինակումը սեփական զարգացման լավագույն լուծումն է: Այս մոդելն անգամ դժվար է համարել եվրոպականացման գործիք, քանզի ԵՄ-ն, մեծ հաշվով, ոչ մի ջանք չի գործադրում երրորդ երկրներում սեփական նորմերի տարածման ուղղությամբ, այսինքն՝ արտաքին կառավարում տեղի չի ունենում, ինչը եվրոպականացման կարևոր պայման է: Եթե

տվյալ պետությանը ներքին փոփոխությունների կարիք ունի և հաջող նախադեպեր է փնտրում «դրսում», ապա այդ նախադեպը կարող է գտնել նաև ԵՄ-ից դուրս՝ աշխարհի տարբեր անկյուններում, ինչի պարագայում ԵՄ-ի՝ որպես ժողովրդավարացման և ավագույն փորձը նկատվելու հնարավորությունները նվազում են: Այնուամենայնիվ, եթե որևէ երրորդ երկիր արդեն կատարել է համապատասխան վերլուծությունները և որոշել է, որ հենց ԵՄ-ն է իր քաղաքականության կառուցման տիպարը, այս երկրի եվրոպականացումը ԵՄ-ի համար հեշտանում է: ԵՅՔ պարագայում և ավագույն օրինակը Վրաստանն է, որտեղ Վարդերի հեղափոխությունն առաջ բերեց եվրոպամետ տրամադրություններ, ինչն էապես նպաստեց ԵՅՔ-ում հարավկովկասյան երեք երկրների ներգրավմանը: Ստացվում է, որ Վրաստանի որոշումը՝ սեփական քաղաքականության զարգացման հարցում հետևել ԵՄ նմուշներին հանգեցրեց տարածաշրջանում ԵՄ արտաքին կառավարման փորձերի: Այստեղ կարևոր ցուցիչ է շահերի համընկնմամբ պայմանավորված նախաձեռնողականության երկկողմանիությունը:

Եվրոպականացման վերը թվարկված գործիքներին զուգահեռ դիտարկենք նաև դրա իրականացման **մակարդակները**, որոնք ապահովում են գործընթացի տրամաբանական հաջորդականությունը: Առաջինը նորմատիվ-իրավական մակարդակն է, որը ենթադրում է խորը փոփոխություններ երրորդ երկրի իրավական համակարգում և օրենսդրության համապատասխանեցում եվրոպական չափանիշներին: Այստեղ կենտրոնական դեր է հատկացվում ԵՄ նորմերի տեղայնացմանն ու մոտարկմանը: Երկրորդ՝ ինստիտուցիոնալ մակարդակում երրորդ երկիրը ստեղծում է համապատասխան կազմակերպական կառույցներ, որոնք իրագործում և/կամ վերահսկում են առաջին մակարդակում իրականացված փոփոխությունները: Այս երկու մակարդակները սերտորեն փոխկապված են, երբեմն առաջ են գալիս միաժամանակ և քաղաքական կամքի առկայության պարագայում ենթադրում են կարճաժամկետ անցում: Մինչդեռ երրորդ՝ սոցիալ-մշակութային մակարդակում, երրորդ երկրից պահանջվում են առավել մեծ ջանքեր փոփոխությունների վերաբերյալ դրական հանրային պատկերացումներ ձևավորելու և այդ հարցում

պետություն-հասարակությունն համագործակցությունն ապահովելու ուղղությամբ: Եթե առաջին երկու մակարդակներն առավելապես նյութական բովանդակությունն են, իսկ դրանց հաջողությունը գերազանցապես կախված է ծախս-օգուտ հարաբերակցությունից, հետևաբար՝ փոխապայմանավորման գործիքի կիրառումից, ապա երրորդ մակարդակում ակնկալվող փոփոխություններն ունեն առավել արժեքագրման քայլի բնույթ և կապված են տվյալ հասարակության կոլեկտիվ ինքնության ու ընդհանրական պատկերացումների հետ, որոնց ձևափոխությունը հնարավոր է միայն սոցիալականացման գործիքի միջոցով:

Հիմնվելով նախկին փորձի վրա՝ կարելի է ասել, որ ԵՄ անդամակցության թեկնածու երկրներն հաղթահարում են եվրոպականացման բոլոր երեք մակարդակները, մինչդեռ ԵՄ անդամակցության թեկնածու չհամարվող պետություններում կարող է եվրոպականացում տեղի ունենալ միայն մեկ կամ երկու մակարդակում: Մասնավորապես՝ ԱԼԳ պարագայում ԵՄ-ն, կիրառելով փոխապայմանավորման գործիքն ու տարածաշրջանում պահպանելով ու ժայիս հարաբերակցությունը, կարող է հասնել առաջին նորմատիվ-իրավական և ինստիտուցիոնալ մակարդակների առնվազն մասնակի իրականացմանը, մինչդեռ սոցիալ-մշակութային մակարդակում նախատեսվող փոփոխություններն ավելի «ծախսատար» են թիրախային պետության համար և պահանջում են երկարաժամկետ ու աստիճանական առաջընթաց:

Եվրոպականացման բնույթն ու արձանագրած հաջողությունները/ձախողումներն, անշուշտ, կախված են դրավրա ազդող ներքին ու արտաքին **դեստրմիսանտերից**, որոնք առաջ են գալիս երեք հիմնական մակարդակներում ԵՄ-ի, թիրախային երկրների և արտաքին դերակատարների: Այս երեք գործոնների համադիր վերլուծությամբ է հնարավոր վերհանել եվրոպականացման հնարավոր ներգործությունը երրորդ երկրի ներքին քաղաքականության ու տարածաշրջանային կոնյուկտուրայի փոփոխության վրա:

Ինչպես արդեն քննարկել ենք, երրորդ երկրների հետ հարաբերություններում **ԵՄ**-ն է հանդիսանում եվրոպականացման

գործընթացի սկզբնավորողն ու նորմեր սահմանողը, ինչն ստեղծում է ուղղահայաց հարաբերություններ երրորդ երկրների հետ: Ըստ այսմ, եվրոպականացման մեկնարկն ու ընթացքն էապես կախված են ԵՄ կողմից դրան վերագրվող կարևորությունից ու հատկացված ռեսուրսներից: Կարող ենք պնդել, որ ԵՄ պատրաստակամությունը եվրոպականացման պարտադիր պայման է, առանց որի այն պարզապես տեղի չի ունենա: ԵՄ դերն առաջին հերթին անհրաժեշտ է դիտարկել վերջինիս կողմից երրորդ երկրներին եվրոպականացման արդյունքում առաջարկվող օգուտների համատեքստում: Այլ կերպ ասած՝ կախված նրանից, ԵՄ-ի կողմից փոխապայմանավորման գործիքի հետևողական ու համաչափ կիրառումից է կախված եվրոպականացման հաջողությունը: Շիմմել ֆենիգն ու Սեդելմայերն առանձնացնում են փոխապայմանավորման երկու հնարավոր տարբերակ՝ ժողովրդավարական (*democratic conditionality*) ու իրավական (*acquis conditionality*) [91: p. 669-673], որոնք թեև փոխկապված են, սակայն կարող են էապես տարբերվել առանձին դեպքերում: Այդ տարբերությունները գերազանցապես պայմանավորված են ԵՄ-ից երրորդ երկրների ունեցած ակնկալիքներից ու դրանց հուսալիության աստիճանից: Որպես ԵՄ-երրորդ երկրներ հարաբերությունների առաջնային նախապայման կարող ենք դիտարկել անդամակցության հեռանկարը, որի առկայությունը/բացակայությունը տարբերակում է թե՛ ԵՄ մոտեցումը երրորդ երկրների նկատմամբ, թե՛ հակառակը: Եթե ԵՄ-ն պատրաստ է որոշ երկրներին եվրոպականացման արդյունքում շնորհել լիարժեք ինտեգրում, վերջինս առավել պատրաստակամությամբ կկատարի առաջադրված պահանջները և կբավարարի ԵՄ պայմաններին: Մինչդեռ անդամակցության հեռանկար չունեցող պետությունների դեպքում եվրոպականացման ձգտումն ավելի ցածր է: Այս առանցքային տարբերությունը հանգեցնում է նրան, որ մասնագիտական գրականության մեջ էլ այս երկու խմբերի երկրները սովորաբար դիտարկվում են իրարից առանձին և դրանց համեմատական վերլուծություն չի իրականացվում: Անդամակցության հեռանկարի բացակայությունը սահմանափակում է նաև ԵՄ-ի կողմից սեփական նորմերի տարածման հնարավորությունը: Քանի որ անդա-

մակցությունը ԵՄ-ի հետ հարաբերություններից ստացվելիք առավելագույն օգուտն է, դրա հեռանկար ունեցող երկրների նկատմամբ ԵՄ-ն կարող է առաջադրել ավելի մեծ պահանջներ, մինչդեռ անդամակցության հեռանկար չունեցող պետությունների պարագայում ԵՄ-ն ավելի համեստ պահանջներ կարող է ներկայացնել, քանի որ իր առաջարկած վարձատրությունն էլ համեստ է:

Անդամակցության հեռանկարի առկայությունից/բացակայությունից էլ կարող է կախված լինել ԵՄ-ի կողմից փոխապայմանավորման այս կամ այն տեսակի ընտրությունը: Ժողովրդավարական փոխապայմանավորումը ենթադրում է ԵՄ-ի ժողովրդավարական իմիջի ու ոչ միայն իրավական, այլև սոցիալական նորմերի տարածում, ինչն առավել իրատեսական է կիրառել ԵՄ-ի անդամակցության թեկնածուների նկատմամբ: Նախ, վերջիններս սովորաբար մինչև թեկնածու պետությունն դառնալն արդեն իսկ անցած են լինում ժողովրդավարացման որոշ փուլեր և պատրաստ են ընդունել ԵՄ նորմերն այնպիսին, ինչպիսին դրանք կան՝ հեռանկարում ունենալով ԵՄ անդամակցությունը: Այս իսկ պատճառով կարելի է ընդհանրացնել, որ ժողովրդավարական փոխապայմանավորումը միավորում է եվրոպականացման երկու մոդելները՝ արտաքին խթաններ և սոցիալական ուսուցում: ԵՄ-ն այս ճանապարհով կարողանում է փոխապայմանավորումը կիրառել ոչ միայն խրախուսող, այլև պատժող գործիք: Օրինակ՝ եթե թեկնածու երկրի օրենսդիր մարմնում էթնիկ փոքրամասնությունների բավականաչափ քվոտաներ հատկացված չեն, ԵՄ-ն կարող է սառեցնել կամ դադարեցնել անդամակցության բանակցությունները՝ այդպիսով տվյալ երկրի ժողովրդավարական սոցիալականացումը դարձնելով կարևոր նախապայման հարաբերությունների հետագա ընթացքի համար: Ի հակառակ սրան՝ անդամակցության հեռանկար չունեցող պետություններում առավել հավանական է, որ ԵՄ-ն կկիրառի միայն արտաքին խթանների մոդելը, ընդ որում՝ միայն որպես եվրոպականացման առաջընթացի խրախուսման, այլ ոչ թե պատժի գործիք: Այսինքն՝ անդամակցության հեռանկար չունեցող պետությունները ստանձնում են ավելի քիչ պարտականություններ, քան անդամակցության թեկնածու պետությունները, սակայն ի պա-

տասխան՝ ԵՄ-ի կողմից ստանուժմ են ավելի ցածր վարձատրուծութուն, քան թեկնածու պետութունները:

Եվրոպականացման մյուս կարևոր դետերմինանտը ԵՄ-ի կողմից առաջարկվող փոփոխութունների համապատասխանութունն է երրորդ երկրի **ներքաղաքական միջավայրին**: Հատկապես քաղաքական համակարգի անցման փուլում գտնվող երկրներում, որտեղ դեռևս լիարժեքորեն ձևավորված և կոնսուլիդացված չեն քաղաքական ինստիտուտները, այս գործոնն էական նշանակութուն ունի: Եվրոպականացման ներքաղաքական գործոնները կարելի է դիտարկել երեք մակարդակում՝ սոցիալ-հոգեբանական, տնտեսական և անվտանգային:

Նախ, կարևոր է հաշվի առնել երրորդ երկրում ԵՄ-ի առաջարկած փոփոխութունների ընդունման աստիճանը (*receptivity*): Ելնելով սոցիալ-կոնստրուկտիվիստական տեսութուններից՝ կարելի է ընդհանրացնել, որ որքան երրորդ երկրի կառավարութունն իրեն նույնականացնում է ԵՄ-ի քաղաքական համակարգի հետ, այնքան արդյունավետ է եվրոպականացումը: Եթե տվյալ երկիրը մշտապես հայտարարում է իր եվրոպական ինքնության մասին, ԵՄ-ն այստեղ սահուն եվրոպականացում իրականացնելու ավելի մեծ հնարավորութուն ունի: Օրինակ՝ Վրաստանի պարագայում ԵՄ-ն կարող է սեփական նորմերն ու կառավարման մոդելները փոխանցելու համար ավելի քիչ ջանքեր գործադրել, քանզի այս երկիրը Վարդերի հեղափոխութունից հետո բացեիբաց հայտարարել է ԵՄ-ին անդամակցելու իր ցանկության մասին ու ամեն կերպ ցուցադրել իր եվրոպական ինքնութունը: Այստեղ երկրի քաղաքական էլիտան ու հասարակութունը միասնական էին արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում, ինչն էապես հեշտացնում է ԵՄ-ի գործը: Մինչդեռ, օրինակ, Ադրբեջանի պարագայում ԵՄ-ն մեծ ջանքեր պետք է կենտրոնացներ երկրի արմատացած ավտորիտար քաղաքական համակարգը փոխակերպելու ու սեփական չափանիշներին մոտեցնելու համար: Սակայն, կրկին ավելորդ չէ նշել, որ հետխորհրդային երկրների քաղաքական ինքնութունը ԽՍՀՄ փլուզումից հետո վերաձևակերպման կարիք ուներ, ուստի այն հնարավոր էր կառուցակցել որպես եվրոպական: Որոշ երկրներ

այ դպե ս էլ արեցին, իսկ մյուսները գերադասեցին այն առաջանային չդարձնել: Այսինքն՝ եվրոպականացման հաջողության համար առաջնային են ոչ թե դրա շուրջ եղած հասարակական տրամադրությունները, այլ քաղաքական էլիտայի արտաքին քաղաքական տեսլականը: Սովորաբար չկայացած ժողովրդավարական համակարգերում քաղաքական էլիտայից մեծ ջանքեր են պահանջվում կառավարման ողջ մեխանիզմը փոխակերպելու ու եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու համար: Ընդ որում, հնարավոր է, որ կառավարող էլիտան դժկամորեն վերաբերվի նման փոփոխություններին, քանի որ դրանցով կարող է սասանվել սեփական իշխանությունը: Ուստի, սոցիալ-հոգեբանական մակարդակում եվրոպականացումը խիստ երեքուն է, և կայունացման համար անհրաժեշտ է այն համադրել տվյալ երկրի քաղաքական էլիտայի շահի հետ:

Տնտեսական մակարդակում եվրոպականացման հաջողությունը գերազանցապես պայմանավորված է արտաքին խթանների գործիքի կիրառման արդյունավետությամբ: Եթե սոցիալ-հոգեբանական մակարդակում շեշտադրումը ԵՄ-ի ու երրորդ երկրի քաղաքական ինքնությունների համատեղելիության վրա է, ապա այս պարագայում այն պայմանավորված է գործնական շահով ու եվրոպականացման նպատակահարմարությամբ: Երրորդ երկրի քաղաքական դեկավարությունն առավել պատրաստակամորեն կընդունի ԵՄ-ի կողմից առաջարկվող փոփոխությունները, եթե դրանք տեսանելի ժամանակում կարող են բերել գործնական օգուտներ: Ընդ որում, եվրոպական ինքնության առկայությունը/բացակայությունը կարող է ստորադասվել տնտեսական գործոններին: Ավելին, արտաքին խթանների գործիքի արդյունավետ կիրառման պարագայում ԵՄ-ն կարող է նույնիսկ մոտիվացնել երրորդ երկրին վերաձևակերպել սեփական արտաքին քաղաքական ինքնությունն ու այն մոտեցնել եվրոպականին: Սակայն արտաքին խթանների արդյունավետությունն էլ պայմանավորված է ոչ միայն զուտ տնտեսական շահով, այլև անվտանգային գործոններով: Հատկապես ներքին հակամարտություններ ունեցող երկրներում եվրոպականացումը կարող է

ծախողվել, եթե ԵՄ-ն հետևողականորեն չի նպաստում այդ հակամարտությանը և ներքին կարգավորմանը, ինչն էլ նվազեցնում է ԵՄ-ի և ԳԽԽԻ մոտ թյուրը:

Վերը բերված դետերմինանտների փոխհարաբերակցությունն ու եվրոպականացման արդյունավետությունն էապես կախված են երրորդ երկրի կողմից սեփական շահի ձևակերպումից: Եթե տվյալ երկրի քաղաքական դեկլարությունն առաջնային է համարում անվտանգության պահպանումը, իսկ ԵՄ-ն էլ ձեռք է առնում դրան ուղղված համապատասխան միջոցներ, ապա այդ երկրի եվրոպականացման հավանականությունը մեծանում է՝ անկախ եվրոպական ինքնության առկայությունից կամ բացակայությունից: Մինչդեռ եթե առաջնահերթությունն է տրվում տնտեսական առաջընթացին, ԵՄ-ն պետք է կենտրոնանա ֆինանսատնտեսական օժանդակության վրա՝ երկրորդ պլան մղելով եվրոպական ինքնության կառուցումն ու անվտանգությունը: Այնուամենայնիվ, սովորաբար այս մակարդակներն առաջ են գալիս միաժամանակ, և միայն դրանց համաչափ հասցեագրումը կարող է հանգեցնել արդյունավետ եվրոպականացման:

Եվրոպականացման վրա մեծապես ազդող գործոններից է նաև **արտաքին ազդեցությունը**: Կախված արտաքին դերակատարի բնույթից, վարքից ու ԵՄ-ի հետ ունեցած հարաբերություններից՝ կարելի է առանձնացնել արտաքին ազդեցության մի քանի մոդել: Դրանցից առաջինի պարագայում երրորդ ուժը մրցակցության մեջ է մտնում ԵՄ-ի հետ՝ տարածաշրջանի երկրներին առաջարկելով առավել շահավետ պայմաններ կամ, այլ կերպ ասած, ավելի մատչելի փոխապայմանավորում: Այս դեպքում տվյալ դերակատարը ևս, ելնելով նորմատիվության սկզբունքներից, պետք է հայտարարի, որ իր նպատակը թիրախային երկրներում կայունության ու անվտանգության միջավայր ստեղծելն է, և ներդնի ռեսուրսներ այդ նպատակի իրականացման ուղղությամբ: Ենթադրվում է նաև, որ այս դեպքում գործընկեր երկրներին առաջարկվում է ոչ թե այն, ինչ ԵՄ-ն չի կարող առաջարկել, այլ նույն օգուտները, սակայն առավել ձեռնտու պայմաններով: Նման մոտեցմամբ այդ արտաքին ուժը կարող է ձգտել երրորդ երկրների համար դառնալ այլ ընտրանքային

արտաքին քաղաքական ուղղությունն՝ միևնույն ժամանակ ԵՄ-ին ստիպելով էլ ավելի մեծ ջանքեր գործադրել սեփական գրավչության ուժն ընդլայնելու նպատակով: Այս մոդելը, թերևս, ամենաշահավետն է թիրախային երկրների համար, քանի որ ընտրություն կատարվում է ոչ թե իրարամերժ, այլ փոխընդդրարար արտաքին քաղաքական դերակատարների միջև:

Երկրորդ մոդելի պարագայում արտաքին դերակատարը թիրախային երկրներին կարող է առաջարկել այնպիսի օգուտներ, ինչպիսիք ԵՄ-ն ունակ չէ առաջարկելու՝ այդպիսով հեղինակագրվելով ԵՄ-ի գրավչության ուժը: Օրինակ՝ եթե ԱԳ տարածաշրջանում որպես գլխավոր արտաքին դերակատար դիտարկենք Ռուսաստանին, ապա վերջինիս կողմից առաջարկվող ռազմական աջակցությունը կարող է ավելի մեծ կշիռ ունենալ դիտարկվող երկրի համար, քան ԵՄ-ի կողմից առաջարկվող տնտեսական համագործակցությունը: Այստեղ, իհարկե, կարևոր է հաշվի առնել թիրախային պետության կողմից սեփական գերակայությունների սահմանումը կամ պետությանակնություն խնդիրը [45: ք. 6], ինչը ենթադրում է, որ ապակայունացնող և անմիջապես պետության գոյությանն առնչվող քաղաքական ու էթնիկ հակամարտությունների առկայության պարագայում առավել հավանական է, որ կառավարությունը կհարի ռազմական անվտանգություն առաջարկող ուժին: Կարևոր է նաև նշել, որ այս մոդելի դեպքում ևս արտաքին դերակատարը հիմնականում կիրառում է նորմատիվ ուժ՝ գերծմնալով կոշտ քաղաքականությունից:

Ի տարբերություն նախորդ մոդելների՝ երրորդ մոդելն ամբողջությամբ հենվում է ռեալ պոլիտիկի սկզբունքների վրա, ինչը ենթադրում է, որ արտաքին դերակատարը կարող է գործադրել բոլոր հնարավոր միջոցներն իր տարածաշրջանային շահերն իրագործելու և ԵՄ-ին հնարավորինս հեռացնելու նպատակով: Այս դեպքում տվյալ ուժն ինքն իրեն սահմանում է ոչ թե որպես այլ ընտրանք թիրախային երկրների համար, այլ ԵՄ-ին հակադեմ, ԵՄ-ամերժ ուժ, որին գլխավորապես հետաքրքրում է ոչ թե թիրախային երկրների հետ համագործակցային հարաբերությունները, այլ ԵՄ-ի հավակնությունների գսաբումը: Այս մոդելի դեպքում ավելի

հավանական է, որ թիրախային երկրները ստիպված լինեն կատարել ու ընտրություն հոգուտ ոչ թե ամենաձեռնտու, այլ ամենաիրատեսական արտաքին քաղաքական կողմնորոշման: Այսինքն՝ տվյալ պետությունը կարող է շահագրգռված լինել ԵՄ-ի հետ հարաբերությունների ընդլայնմամբ ու կայուն համագործակցության հաստատմամբ, սակայն արտաքին ազդեցության փոխել արտաքին քաղաքական նախապատվությունները: Ընդ որում, ուժերից ցանկացածին ընտրելու պարագայում երրորդ երկիրն անպայմանորեն ենթարկվում է մյուս ուժի ճնշմանը/պատժին: Այս մոդելը նախորդներից տարբերվում է նրանով, որ թիրախային երկրի ընտրությունը պայմանավորված է ոչ թե սեփական անվտանգության կամ առաջընթացի նկատառումներով, այլ արտաքին ուժի պարտադրմամբ, ինչի արդյունքում կարող է ընտրված արտաքին քաղաքական ուղղությունը չնպաստել տվյալ երկրի զարգացմանը:

Վերը նշված երեք մոդելների քննարկմամբ պարզ է դառնում, որ եվրոպականացման հաջողությունը մեծապես կախված է դրան կատարման արտաքին դերակատարների մոտեցումներից, հակազդեցության ռեսուրսների առկայությունից և դրանց կիրառման պատրաստակամությունից:

**ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒ-
ԹՅԱՆ» ԳՈՐԾԱՌՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

**2.1. Եվրոպական հարևանությամբ քաղաքականության ծագումը և
իրականացումը Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում
մինչև 2008 թ.**

1990-ական թթ. հետխորհրդային երկրներում թե՛ ՌԴ-ի, թե՛ ԵՄ-ի կողմից սկսեցին իրականացվել որոշ ինտեգրացիոն և զարգացման ծրագրեր: Մասնավորապես՝ 1991 թ. ԽՍՀՄ երկրների մեծամասնությամբ ձևավորվեց Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ), իսկ 1992 թ.՝ Հարևանական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը, որն արդեն անվտանգային միություն էր: ԵՄ-ի կողմից իրականացվում էին տեխնիկական աջակցության ծրագրեր, ինչպիսիք էին Տեխնիկական աջակցությունն Անկախ պետությունների համագործակցությանը (ՏԱՍԻՍ), Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցքը (ՏՐԱՍԵԿԱ), ԻՆՈՎԵՅԹ-ը և այլն: Այս ծրագրերը շեշտադրում էին բացառապես տնտեսաօտեխնիկական համագործակցությունը և չէին կարող ենթադրել հետխորհրդային երկրների համապարփակ ինտեգրացիա ԵՄ-ի հետ՝ հատկապես հաշվի առնելով այդ երկրներում առկա քաղաքական անցման հիմնախնդիրը, իսկ դրանց մի մասում՝ նաև լարված հակամարտությունների առկայությունը:

Հետխորհրդային երկրների հետ ԵՄ հարաբերություններում քաղաքական համագործակցության բաղադրիչն ավելացավ 1990-ական թթ. վերջին, երբ ԵՄ-ն 9 նորանկախ երկրների¹ հետ կնքեց Գործընկերության և համագործակցության համաձայնագրեր (ԳՀՀ), որոնք նպատակ ունեին ստեղծել քաղաքական երկխոսության հարթակ, նպաստել գործընկեր երկրներում ժողովրդավարության

¹ Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան, Ռուսաստան, Մոլդովա, Ուկրաինա, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան: ՌԴ-ի հետ ԳՀՀ-ն ուժի մեջ մտավ, 1997 թ., Մոլդովայի և Ուկրաինայի հետ՝ 1998 թ., իսկ մնացած երկրների հետ՝ 1999 թ.: 2010 թ. ուժի մեջ մտավ նաև ԵՄ-Տաջիկստան ԳՀՀ-ն:

հզորացմանն ու շուկայական տնտեսության անցմանը, ինչպես նաև խթանել առևտուրն ու ներդրումները [135]: Դրանք նաև դաշտ էին ստեղծում իրավական, սոցիալական, ֆինանսական, գիտական, տեխնոլոգիական ու մշակութային ոլորտներում համագործակցության համար, իսկ Ռուսաստանի հետ ԳՀՀ-ն նախատեսում է նաև անհրաժեշտ պայմանների ստեղծում հետագայում ազատ առևտրի գոտու հիմնման համար [135]: ԳՀՀ-ներով առաջին անգամ ժողովրդավարության ու մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը սահմանվեց որպես համագործակցության հիմնական սկզբունք: ԵՄ-ն ԳՀՀ-ների միջոցով ձգտում էր մոտեցնել միջազգային հարցերի շուրջ իր և հետխորհրդային երկրների դիրքորոշումները՝ այդպիսով ստեղծելով ավելի կայուն ու անվտանգ տարածաշրջան, իսկ ապրանքների առևտուրն ու ներդրումները պետք է ծառայեին որպես դրան հասնելու խթաններ: ԳՀՀ-ները կնքվեցին 10 տարով, սակայն մեխանիկորեն երկարաձգվում էին շարունակվում էին մեկական տարով, քանի դեռ կողմերից մեկն առարկություն չի հայտնել [135]:

Թեև ԳՀՀ-ներն էապես լայնացրին ԵՄ-ի ու հետխորհրդային երկրների միջև համագործակցության դաշտը, դրանք չունեին նախատեսված գործողությունների կատարումը խթանող գործուն մեխանիզմներ՝ պայմանավորված մի քանի գործոններով:

Նախ, ԵՄ-ն գերազանցապես հիմնվում էր տարածաշրջանային մոտեցման վրա՝ Ուկրաինան ու Մոլդովան դիտարկելով որպես ԵՄ նոր արևելյան հարևաններ, իսկ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը՝ որպես Հարավային Կովկասի երկրներ: ԵՄ-ի նման ընդհանրական դիրքորոշումը չէր համապատասխանում այս երկրների պատկերացումներին՝ հատկապես որ չկային ո՛չ տարածաշրջանային գործակցության հիմքեր, ո՛չ էլ տարածաշրջանային ինքնություն՝ հիմնականում պայմանավորված էթնոքաղաքական հակամարտություններով և կրոնական ու լեզվական տարբերություններով:

Երկրորդ, ԳՀՀ-ներում հաշվի չէին առնվում առանձին պետությունների հետ ԵՄ-ի ունեցած քաղաքական ու տնտեսական հարաբերությունների մակարդակը: Օրինակ, եթե Ադրբեջանն էներգետիկ ռեսուրսներով հարուստ ավտորիտար պետություն էր,

որը ոչ թե միայն ԵՄ աջակցության ստացող էր, այլ իր հերթին կարող էր ԵՄ-ին առաջարկել որոշակի օգուտներ, ապա Մոլդովան եվրոպական տարածաշրջանի ամենաաղքատ պետությունն էր, որը միտված էր ԵՄ-ի հետ զարգացնել խորը տնտեսաքաղաքական հարաբերություններ և վերջինիս աջակցությունը կիրառել ներքին զարգացման համար: Այնուամենայնիվ, ԳՀՀ-ներում այս տարբերություններն արտացոլված չեն:

Երրորդ, ԳՀՀ-ները նորմատիվության ցածր մակարդակ ունեին, ինչը թուլացնում էր դրանց քաղաքական ազդեցության ներուժը: ԳՀՀ-ներում գրեթե բացակայում էր քաղաքական փոխալման ավորումը, քանզի ԵՄ-ի կողմից առաջարկվող խթանները ցածր մակարդակի էին և նույնը բոլոր երկրների համար: ԳՀՀ-ներով հնարավոր չէր գործընկեր երկրներին մուտք տալ դեպի ԵՄ ընդհանուր շուկա կամ դյուրացնել այդ երկրների քաղաքացիների մուտքը դեպի ԵՄ: Այսինքն՝ նույնիսկ ԳՀՀ-ներով նախատեսվող բոլոր բարեփոխումներ արդյունավետ իրականացման պարագայում տվյալ երկիրը չէր կարող ակնկալել Էսպես ավելի խորը հարաբերություններ ԵՄ-ի հետ:

Թեև հարևան տարածաշրջանները համարվել են ԵՄ-ի ռազմավարական գործողության դաշտը [8], առաջին անգամ հարևան երկրների հետ հարաբերությունների խորացումը պաշտոնապես արժարժվեց 2007 թ. ԵՄ հուշագրի լրամշակված տարբերակում կամ, այդպես կոչված, Լիսաբոնյան հուշագրում, որում նշվում է. «ԵՄ-ն պետք է հատուկ հարաբերություններ ձևավորի հարևան երկրների հետ՝ ձգտելով ստեղծել բարգավաճության ու լավ հարևանության գոտի, որը կհիմնվի ԵՄ արժեքների վրա և կբնութագրվի սերտ ու խաղաղ համագործակցային հարաբերություններով» [139: p. 16]:

Այնուամենայնիվ, հարևանների հետ ԵՄ հարաբերությունները զարգացել են տարբեր արագություններով և ստացել են տարբեր ծավալներ: 1994 թ. ԵՄ-ի և ԱԱԵԱ անդամների՝ Իսլանդիայի, Լիխտենշտայնի և Նորվեգիայի միջև հաստատվեց եվրոպական տնտեսական գոտին, որպեսզի նշված երկրները կարողանան ներգրավվել ԵՄ ընդհանուր շուկայում առանց անդամակցության: Թուրքիայի և արևմտաբալկանյան երկրների՝ Ալբանիայի, Բոսնիա և

Յերցեգովինայի, Կոսովոյի ինքնահռչակ հանրապետության, Մոնտենեգրոյի, Նախկին Չարավսլավական Չանրապետությունն Մակեդոնիայի ու Սերբիայի հետ հարաբերությունների զարգացման հիմնական գործիքը 1999 թ. սկսած եղել է Կայունացման և ասոցացման գործընթացը (ԿԱԳ), որի արդյունավետ իրականացումը նախատեսում է այս երկրների՝ ԵՄ արտենցիալ թեկնածուի կարգավիճակից անցում թեկնածուի կարգավիճակի:

1990-ական թթ. երկրորդ կեսին ԵՄ-ն նաև բանակցում էր ութ արևել ատլանտիկական երկրների (Էստոնիա, Լատվիա, Լեհաստան, Լիտվա, Չեխիա, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա), ինչպես նաև Կիպրոսի ու Մալթայի հետ վերջիններիս անդամակցության շուրջ: Բոլոր արևել ատլանտիկական երկրները Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև ԽՍՀՄ փլուզումը գտնվել են սոցիալիստական ճամբարում՝ այդպիսով Եվրոպան բաժանելով երկու ոչ միայն աշխարհագրական, այլև աշխարհաքաղաքական հատվածների՝ արևմտյան (կապիտալիստական) և արևելյան (սոցիալիստական): Ուստի ԵՄ-ի համար այս երկրների Եվրոպականացումը Խորհրդային Միության կազմալուծումից հետո գերակա առաջադրանք է եղել: Բավարարելով Կոպենհագենյան չափանիշներին՝ 2004 թ. մայիսի 1-ին նշված տասը պետությունները միացան ԵՄ-ին՝ այդպիսով հետխորհրդային մի շարք երկրներ, մասնավորապես՝ Ուկրաինան, Բելառուսը և Մոլդովան դարձնելով ԵՄ-ի անմիջական հարևանները: Այս ընդլայնումը ԵՄ-ի կողմից սահմանափակում է որպես «ամենահաջողված արտաքին քաղաքական գործիք» [114: p. 5] և Եվրոպայի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում առաջացած տրոհման վերացում [160]: Այն նաև ԵՄ-ի համար հնարավորություն էր սեփական նորմերն ու արժեքները տարածել նոր անդամների վրա: Այնուամենայնիվ, ԵՄ արևելյան ընդլայնումը մտահոգիչ էր այն տեսանկյունից, որ եթե մինչ այդ ԵՄ-ն շրջապատված էր Եվրոպամետ պետություններով, որոնք ձգտում էին զարգացնել իրենց քաղաքական ու տնտեսական համակարգերը և անդամակցել, այսպես կոչված, «Եվրոպական համայնքին», ապա 2004 թ. հետո ԵՄ-ին սահմանակից դարձավ, օրինակ, Բելառուսը, որտեղ ոչ միայն չէին զարգանում ժողովրդավարական ինստիտուտները, այլև

ամրապնդվում էր ավտորիտարիզմը, կամ Մոլդովան, որի տարածքում առկա էին երկու չլուծված հակամարտություններ և որը ԽՍՀՄ փլուզումից հետո հայտնվել էր չափազանց ծանր տնտեսական դրությունում: Բացի այդ, թեև մինչև 2004 թ. ևս Ռուսաստանը սահմանակցում էր ԵՄ-ին, վերջինի ընդլայնումն էլ ավելի մոտեցրեց երկու տարածաշրջանային դերակատարներին՝ արևմտյան նորանկախ պետությունները (Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա) դարձնելով միջանկյալ գոտի նրանց միջև:

Հարևան երկրների նկատմամբ որդեգրվելիք քաղաքականության նախնական գաղափարները ներառվեցին 2003 թ. մարտին ԵՅ կողմից ընդունված «Ավելի լայն Եվրոպա՝ հարևանություն. մեր արևելյան ու հարավային հարևանների հետ հարաբերությունների նոր շրջանակ» վերտառությամբ հաղորդագրությունը [114], որը, ենթարկվելով որոշ լրամշակումների, հանգեցրեց 2004 թ. մայիսին ԵՅԶ ռազմավարության [115] ընդունմանը, որը համարվում է ԵՅԶ-ի հիմնարար փաստաթուղթը:

«Ավելի լայն Եվրոպա...» հաղորդագրությունը շեշտում էր 2004 թ. մայիսի 1-ից (վերը նշված 10 երկրների՝ ԵՄ-ին պաշտոնապես միանալու օրը) հետո ԵՄ արտաքին սահմաններն ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև դիտարկում այդ պահին ԵՄ անդամակցության հավանություն չունեցող երկրների հետ հարաբերությունների սերտացումը [114: ք. 4]: Աշխարհագրական ընդգրկման առումով հաղորդագրությունը հստակ է. «ավելի լայն Եվրոպայի» մեջ մտնում են ԵՄ բոլոր այն հարևանները, որոնք չունեն ԵՄ-ին անդամակցության հեռանկար: Այս երկրներն են Ռուսաստանն ու արևմտյան նորանկախ պետությունները՝ Ուկրաինան, Բելառուսը և Մոլդովան, քանզի Բուլղարիան, Ռումինիան, Թուրքիան ու արևմտաբալկանյան երկրներն այդ ժամանակ արդեն ունեին անդամակցության թեկնածուի կամ արտենցիալ թեկնածուի կարգավիճակ: Յետաքրքրական է, որ Հարավային Կովկասի երկրները՝ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեյջանը, ԵՅԶ ձևավորման նախնական շրջանում չէին դիտարկվում ԵՄ մերձավոր արտասահմանում (Near Abroad, ближнее зарубежье): Հաղորդագրությունում մասնավորապես նշվում է. «Իրենց

տեղադրու թյամբ պայմանավորված՝ Չարավային Կովկասն առայժմ դուրս է մնում այս նախաձեռնության [ԵՅԲ-ի] աշխարհագրական շրջանակից» [114: ք. 4]: Սակայն 2003 թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած «Վարդերի» հեղափոխությունն էապես փոխեց ինչպես իրերի դրությունը տարածաշրջանում, այնպես էլ ԵՄ մոտեցումը դրան: ԵՄ-ն սկսեց Չարավային Կովկասի խնդիրները դիտարկել սեփական քաղաքական հետաքրքրությունների շրջանակում: 2003 թ. նոյեմբերի 23-ին Եվրոպական խորհրդարանն ընդունեց բանաձև, որով առաջարկվում էր Չայաստանը, Վրաստանն ու Ադրբեյջանը ներառել նախաձեռնությունում՝ հիմք ընդունելով այն, որ երեք երկրներն արդեն իսկ անդամակցում են ԵԽ-ին ու ԵԱՀԿ-ին, և ԵՄ-ի ներգրավումը Չվ. Կովկասում հատկապես անհրաժեշտ էր հակամարտությունների կարգավորման ու կանխման տեսանկյունից, իսկ տարածաշրջանային կայունությունն իր հերթին կարող էր նպաստել ԵՄ արտաքին անվտանգությանը [134]: Չվ. Կովկասին անդրադարձ կատարվեց նաև Եվրոպական անվտանգության ռազմավարությունում (ԵԱՌ)՝ «Ավելի անվտանգ Եվրոպա ավելի լավ աշխարհում» խորագրով: ԵԱՌ-ում մասնավորապես նշվում է. «Յիմա¹ մենք պետք է ավելի շահախնդիր լինենք Չարավային Կովկասի խնդիրների նկատմամբ, որը ևս շուտով կլինի հարևան տարածաշրջան» [128: ք. 8]²: 2004 թ. փետրվարին Եվրոպական խորհրդարանն ընդունեց մեկ այլ բանաձև՝ «ԵՄ քաղաքականությունը Չարավային Կովկասի նկատմամբ» վերտառությունամբ, որով վերահաստատում էր իր դիրքորոշումը ԵՄ հարևանության նախաձեռնությունում Չվ. Կովկասի ներառման շուրջ [133]: ԵՄ ընդլայնված հետաքրքրվածությունը Չվ. Կովկասով

¹ Այս պարագայում «հիմա»-ն, ամենայն հավանականությամբ, վերաբերում է 2003 թ. նոյեմբեր-դեկտեմբեր մեկամսյա ժամանակահատվածին, ինչը հուշում է, որ «Վարդերի հեղափոխությունն» այնքան նշանակալի իրադարձությունն էր, որ ընդամենը մեկ ամսվա ընթացքում ԵՄ-ն նման կարևոր փաստաթղթում համապատասխան հավելում կատարեց Չարավային Կովկասի նկատմամբ որդեգրվելիք քաղաքականության վերաբերյալ:

² Այս տեղ հավանաբար նկատի է առնվում այն, որ 1999 թ. սկսած Թուրքիան համարվում էր ԵՄ-ին լիարժեք անդամակցության թեկնածու պետությունն, ինչի իրագործման պարագայում Չարավային Կովկասի երկրներն արդեն աշխարհագրորեն կսահմանակցեին ԵՄ-ին: Այս գործոնը, փաստորեն, առկա էր ԵԱՌ ընդունումից դեռևս մի քանի տարի առաջ, ինչը վերստին հուշում է, որ Չարավային Կովկասով ԵՄ հավելյալ հետաքրքրվածություն հիմնական պատճառն ոչ թե Թուրքիայի հնարավոր անդամակցությունն էր (որը կարող էր պահանջել երկար տարիներ, ինչպես և եղավ), այլ մեկ ուրիշ գործոն, տվյալ պարագայում՝ քաղաքական փոխակերպման սկիզբը Վրաստանում:

արտահայտվեց նաև ԵՅՔ ռազմավարության նույնիսկ, որում նշվում է. «Եվրոպական Միությանը խորապես հետաքրքրված է Յարավային Կովկասում կայունության ամրապնդմամբ: [...] Եվրասիական ծախսերը [...] ԵՄ խորհրդին հորդորում է ընդունել որոշում Յայաստանը, Ադրբեյջանը և Վրաստանը Եվրոպական հարևանության քաղաքականության նույնիսկ ընդգրկելու մասին» [115: ր. 10]: Բացի ժողովրդավարացումից, մարդու իրավունքների պաշտպանության նից, հակամարտության ներկայացվողումից և այլն, Յայաստանի, Վրաստանի ու Ադրբեյջանի հետ հարաբերության ներքին ընդլայնման համար կարևոր գործոն է համարվում նաև Էներգետիկ ոլորտում համագործակցությանը, քանի որ «Յարավային Կովկասը կարևոր տարածաշրջան է Էներգիայի թե՛ արտադրման (Կասպյան ավազան), թե՛ փոխադրման առումով» [115: ր. 11]¹:

«Ավելի լայն Եվրոպա...» հաղորդագրության նույնիսկ մակերեսորեն առաջարկվում է նաև հարևանների հետ հարաբերության ներքին տարբերակման սկզբունքն ու դրանց զարգացման առաջընթացի գնահատման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը: Յաղորդագրության «Յարևանության՝ տարբեր երկրներ, ընդհանուր շահեր» վերտառությամբ գլխում նշվում է, որ «ԵՄ նոր մոտեցումը չի կարող հիմնվել համահարթեցման սկզբունքի վրա» [114: ր. 4-9]: Այս ձևակերպումը թույլ է տալիս ենթադրել, որ թեև նոր նախաձեռնությունը նպատակ ունի լուծել ԵՄ-ի ու հարևան երկրների համար ընդհանուր խնդիրներ, հաղորդագրությամբ առաջարկվող նոր շրջանակը պետք է լինի զգայուն և հաշվի առնի երրորդ երկրների կարիքներն ու զարգացման տարբեր մակարդակները՝ հատկապես որ արևելյան ու հարավային հարևաններն էապես տարբեր արտաքին քաղաքական գերակայություններ ունեն: ԵՅՔ-ում հետագա տարբերակումը կատարվեց հենց տարածաշրջանային հիմքի վրա՝ 2000-ական թթ. վերջերին հիմնելով ԱլԳ-ն արևելյան հարևանների հետ համագործակցելու համար և Միջերկրածովյան

¹ Այս հավելումով ԵՄ-ն հիմնավորում էր Յարավային Կովկասի երկրների հետ հարաբերության ներքին բազմակողմանիությունը՝ միաժամանակ ապահովագրելով իրեն այն հնարավոր քննադատությունից, թե տարածաշրջանով հետաքրքրությունը պայմանավորված էր բացառապես Վրաստանում արևմտամետ կառավարության ձևավորմամբ, ինչը կարող էր առաջացնել Ռուսաստանի անհանդուրժողական վերաբերմունքը, մինչդեռ նշված բոլոր փաստաթղթերում վերջինս համարվում էր ԵՄ-ի սերտագործընկեր:

մի ությունը հարավային հարևանների համար: Այնուամենայնիվ, նման տարբերակումը, ԵՅԲ-ն պարզապես բաժանելով երկու տարածաշրջանի և առանձնացնելով դրանց ֆինանսավորման գործիքները, չէր արտացոլում գործընկեր երկրների առանձնահատկությունները: Ավելին, դա նաև խորացրեց ԵՄ անդամ պետությունների միջև առկա դիրքորոշումային տարբերությունները. արևելատերերական ու մերձբալթյան երկրներն էլ ավելի կարևորեցին հետխորհրդային երկրների հետ հարաբերությունների զարգացումը, մինչդեռ եվրոպական միջերկրածովյան երկրներն ու շադրությունը բևեռացրին ՅՈւԵՍԻՍԿ-ի Աֆրիկայի ու Մերձավոր արևելքի պետությունների վրա:

ԵՅ հաղորդագրությունում ընդգծվում են նաև ԵՄ-ի ու նոր հարևանների միջև գործող պաշտոնական փաստաթղթերը [114: p. 5]: Ռուսաստանի, Ուկրաինայի ու Մոլդովայի հետ ԵՄ-ն կնքել է ԳՀՀ-ներ, որոնք թույլ չեն տալիս ներառել ԱԱՀ-ներ՝ պայմանավորված համաձայնագրի նեղ ընդգրկմամբ: Ի տարբերություն արևելյան «ճակատի»՝ հարավում ԵՄ-ն դեռ մինչև 2003 թ. ավելի խորը հարաբերություններ էր հաստատել՝ ԱՀ-ներ կնքելով Թուրքիայի, Իսրայելի, Մարոկկոյի, Պաղեստինյան Ինքնավարության ու Հորդանանի հետ, իսկ Եգիպտոսի, Լիբանանի ու Ալժիրի կնքված ԱՀ-ները գտնվում էին վավերացման փուլում:

Հաղորդագրությունում նաև առաջարկվում է հարևանների հետ հարաբերությունները տարբերակել ըստ համագործակցության իրականացման ընթացքի ու երրորդ երկրի կողմից կատարված բարեփոխումների ծավալի՝ այսպիսով ԵՄ արտաքին քաղաքականությունում ավելացնելով քաղաքական փոխադասակարգումը [114: p. 16]: Դա նշանակում էր, որ ԵՄ-ի հետ երրորդ երկրների համագործակցությունը պետք է մշտադիտարկվեր, և վերջիններս պետք է ԵՄ-ի կողմից «վարձատրվեին» ըստ փոխհամաձայնեցված գործողությունների իրականացման հաջողությունից:

Որպես հարևան պետությունների հետ հարաբերությունների զարգացման գործնական քայլ՝ «Ավելի լայն եվրոպա...» հաղորդագրությունում առաջարկվում է համագործակցության գործող շրջանակներում (Գործընկերության և

համագործակցության խորհուրդներ և Ասոցացման խորհուրդներ) քննարկել հարաբերությունների զարգացման հետագա փուլը և յուրաքանչյուր երկրի համար կազմել Գործողությունների ծրագիր (ԳԾ), որոնք պետք է մշտադիտարկվեն ու վերանայվեն [114: p. 16]:

Թեև ԵՅ «Ավելի լայն եվրոպա...» հաղորդագրությունն առաջին փաստաթուղթն էր, որտեղ քննարկվում էին հարևան երկրների հետ ԵՄ-ի հարաբերությունների հետագա զարգացման հիմնական ուղենիշերը, առկա չէր դրանց ընդհանրական անվանումը, և միանգամից մի քանի եզրեր փոխարինաբար օգտագործվում էին: «Ավելի լայն եվրոպա նախաձեռնություն» տերմինին զուգահեռ կիրառվում էին «Նոր հարևանության նախաձեռնություն», «ԵՄ հարևանության քաղաքականության» և այլ եզրեր: «Եվրոպական հարևանության քաղաքականություն» տերմինը ներմուծվել է միայն ԵՅՔ ռազմավարությանը:

Հարևան տարածաշրջանների նկատմամբ կիրառվելիք քաղաքականության որոշ տարրեր նկատելի են նաև ԵԱՌ-ում, որում առանձնացվում է ԵՄ արտաքին քաղաքականության հինգ հիմնական սպառնալիքներ ու մարտահրավերներ՝ ահաբեկչություն, զանգվածային ոչնչացման զենքի (ՉՈՉ) տարածում, տարածաշրջանային հակամարտություններ, «ձախողված պետություններ» և կազմակերպված հանցագործություն [128: p. 3-4]: ԵՄ ընդլայնմանը զուգահեռ՝ ավելանում է հարևան երկրների նշանակությունը ԵՄ անվտանգության ապահովման հարցում: ԵԱՌ-ում մասնավորապես նշվում է. «Անգամ համաշխարհայնացման դարաշրջանում աշխարհագրությունը կարևոր է: Եվրոպական շահերից է բխում, որ մեզ սահմանակից երկրները լինեն լավ կառավարվող: (...) Մեր խնդիրն է խթանել ԵՄ արևելքում ու Միջերկրական ծովի սահմաններին լավ կառավարվող երկրների շրջանակի ստեղծումը, որոնց հետ մենք կարող ենք հաստատել համագործակցային սերտ հարաբերություններ» [128: p. 7]: Թեև 1995 թ. հիմնելով Եվրոմիջերկրածովյան գործընկերությունը (ԵՄԳ)՝ ԵՄ արդեն մատնամշել էր առնվազն հարավային հարևանների հետ հարաբերությունների կարևորությունը, ԵԱՌ-ն առաջին համաեվրոպական փաստաթուղթն էր, որը

նազմավարական կարևորություն էր հատկացնում հարևան երկրներին:

Ավելի քան մեկ տարի քննարկումներից հետո 2004 թ. մայիսին ԵՅ-ն հրապարակեց «Եվրոպական հարևանության քաղաքականության նազմավարություն» հաղորդագրությունը, որն առաջադրեց ԵՅՔ զարգացման վերջնական ուղենիշերը՝ դառնալով ծրագրի հիմնարար փաստաթուղթը¹: Ռազմավարությունում ներկայացվում են ԵՅՔ ստեղծման հիմքերը, նպատակներն ու ծրագրում ներառվող երկրների հետ համագործակցության շրջանակը, ինչպես նաև գործառնական հիմնական սկզբունքներն ու սահմանված նպատակներին հասնելու գործիքները: Աշխարհագրական ընդգրկման առումով՝ նազմավարությամբ նախատեսվում է ԵՅՔ-ում ներառել գրեթե բոլոր հարևաններին, որոնք չեն անդամակցում ԵՄ-ին: Այսպիսով, ԵՅՔ-ին մասնակցող երկրներն էին՝ Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա, Չայաստան, Վրաստան, Ադրբեջան, Իսրայել, Պաղեստինյան Իսրայել, Սիրիա, Լիբանան, Չորդանան, Եգիպտոս, Լիբիա, Թունիս, Ալժիր, Մարոկկո:

Լիբիայի ու Բելառուսի պարագայում առկա էին որոշ վերապահումներ: Լիբիան թեև պաշտոնապես համարվում էր ԵՅՔ անդամ, սակայն ԵՄ-ի հետ չունեի պայմանագրային հարաբերություններ, ինչից հետո միայն կկարողանար օգտվել ԵՅՔ շրջանակներում տրամադրվող աջակցությունից: Իսկ Բելառուսի դեպքում ԵՅՔ-ն լիարժեքորեն հնարավոր կլինեի կիրառել միայն երկրում ազատ ու արդար ընտրությունների արդյունքում ժողովրդավարական վարչակարգի հիմնումից հետո: Կարևոր է նշել, որ ԵՅՔ նազմավարությամբ Ռուսաստանը չէր ներառվում ծրագրում, քանզի այն որակվեց որպես առանցքային գործընկեր, որի հետ պետք է զարգանար ավելի հեռուն գնացող նազմավարական գործընկերություն՝ հիմնված 2003 թ. մայիսին Սանկտ Պետերբուրգում կայացած ԵՄ-Ռուսաստան գագաթնաժողովին ընդունված չորս ընդհանուր ուղղությունների վրա (1. տնտեսական

¹ Չարկ է նշել, որ ԵՅՔ-ն չէր առաջարկում հարևան պետությունների հետ քաղաքական հարաբերությունների նոր շրջանակ, քանի որ ԳՅՅ-ները շարունակում էին մնալ հետխորհրդային երկրների հետ երկկողմ հարաբերությունների հիմնական գործիք:

համագործակցություն, 2. ազատություն, անվտանգություն ու արդարություն, 3. արտաքին անվտանգություն, 4. հետազոտություն, կրթություն ու մշակույթ) [115: p. 4]:

Ինչպես բազմիցս նշվել է ԵՄ փաստաթղթերում, ԵՅԲ հիմնական նպատակն էր «խուսափել Եվրոպայում նոր բաժանարար գծերից և խթանել կայունություն ու բարգավաճում ԵՄ նոր սահմաններում և դրանից անդին» [114: p. 4]: Հատկապես կարևորվում էր ԵՄ սահմաններին «բարեկամների շրջանակ» ստեղծելը, որպեսզի հնարավոր լիներ ԵՄ-ում ապահովել կայունություն ու անվտանգություն: Այլ կերպ ասած՝ ԵՅԲ-ի միջոցով ԵՄ-ն փորձում էր կայունացնել անհամաչափորեն զարգացող շրջակայքն ու ապահովագրել սեփական արտաքին սահմանները՝ նպաստելով հարևան տարածաշրջաններում արդյունավետորեն կառավարվող ժողովրդավարությունների ստեղծմանը: Նման ձևակերպումները հուշում են, որ ԵՅԲ-ն ԵՄ-ակենտրոն ծրագիր էր, որը թույլ էր տալիս արտաքին կառավարման «փափուկ» գործիքների կիրառմամբ գրավչության ու ժը տարածել սեփական սահմաններից դուրս՝ վերափոխելով սահմանակից երկրների քաղաքական համակարգերն առանց ԵՄ-ին անդամակցության հեռանկարի [93: p. 195]¹: ԵԱՌ-ում ևս շեշտվում է, որ անվտանգությանը պետք է հասնել ԵՄ նորմերն ու Եվրոպական մոդելն «արտահանելով», այլ ոչ թե հարևան պետություններից խնդիրներ ու վտանգներ «ներկրելով» [128]: ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ (ԲՆ) Խավիեր Սոլանան և ԵՄ այլ պաշտոնյաներ ևս բազմիցս նշել են, որ ԵՄ-ն կա՛մ պետք է արտահանի կայունություն, կա՛մ ներկրի անկայունություն [159]:

ԵՅԲ-ն ի սկզբանե նախագծվել է որպես հարևան բոլոր երկրների հետ հարաբերությունների զարգացման միասնական հարթակ, սակայն մինչև 2006 թ. այն բնութագրվել է որպես ներդաշնակ ու ինտեգրված մոտեցում: Օրինակ, ԵՅԲ ռազմավարությունում նշվում է, որ ԵՅԲ-ն ԵՄ մոտեցումն է հարևան տարածաշրջանների նկատմամբ, որը թույլ է

¹ Դեռևս 2002 թ. ԵՅ նախագահ Ռոմանո Պրոդին իր հանրահայտելույթում առաջարկել էր «ամեն ինչ, բացի ինստիտուտներից» բանաձևը, ինչը ենթադրում էր, որ ԵՅԲ երկրները կարող են ԵՄ-ի հետ հաստատել համագործակցության տարբեր ձևաչափեր, սակայն ոչ մի դեպքում չեն կարող ներգրավվել ԵՄ ինստիտուցիոնալ կառավարման օղակներում, այսինքն՝ չեն կարող անդամակցել ԵՄ-ին [149: p. 5]:

տալ իս ինտեգրել որոշ տարրեր ԵՄ բոլոր երեք հիմնասյուղներից (Եվրոպական համայնքներ, Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն և համագործակցություն արդարադատության ոլորտում ու ներքին գործերում) [115: p. 6]: «Միասնական հարթակ» (“single framework”) եզրը ներմուծվել է 2006 թ. դեկտեմբերին ԵՅ «Հզորացնելով ԵՅԲ-ն» վերտառության հաղորդագրությամբ, որտեղ նշվում է. «ԵՅԲ-ն ապահովում է հստակ միասնական հարթակ, որը ներառում է հարևան տարածաշրջաններն ամբողջությամբ և թույլ է տալ իս յուրաքանչյուր գործընկեր պետության հետ քննարկել ու լուծել բազմաթիվ խնդիրներ» [116]¹: ԵՄ-ի կողմից առաջարկված ներդաշնակությունն ու միասնականությունը կարելի է ընկալել երկու ձևով: Առաջինի պարագայում խոսքը երրորդ երկրների միջև ներդաշնակության ու դրանց համաչափ զարգացման մասին է: Այս պարագայում ԵՄ նպատակ կարող է լինել ոչ ժողովրդավարական վարչակարգեր ու նեցող երկրների ժողովրդավարացումն ու քաղաքական կայունության հաստատումը, որպեսզի հարևան բոլոր երկրներն առնվազն մասամբ համապատասխանեն կառավարման Եվրոպական մոդելին: Երկրորդ դեպքում միասնականությունը կարելի է մեկնաբանել որպես ԵՄ միանման մոտեցում հարևան տարածաշրջանների նկատմամբ: Այս տարբերակը, թերևս, ավելի արժանահավատ է թվում, քանզի, ինչպես արդեն քննարկվել է, ԵՅԲ-ն ստեղծվել է որպես ԵՄ շահերի իրականացման ու Եվրոպայում անվտանգության ապահովման մեխանիզմ: ԵՅԲ-ի միջոցով ԵՄ-ն ձգտում էր մեղմել հարևան տարածաշրջանների (առնվազն քաղաքական) բազմազանությունը և տարածել սեփական նորմերն ու արժեքները:

ԵՅԲ հիմնական գործիքները երկուսն էին՝ երրորդ երկրների ու ԵՄ-ի միջև համագործակցության առկա շրջանակը (հետխորհրդային երկրների պարագայում՝ ԳՀՀ-ները) և ԳԾ-ները: ԵՅԲ մեկնարկից սկսած պարզ էր, որ այն ոչ թե փոխարինելու է գործընկեր երկրների եղած ինստիտուցիոնալ հարաբերությունները,

¹ Նշենք, որ ԵՅ այս հաղորդագրության հրապարակման ժամանակ ԵՅԲ-ին մասնակցող երկրների մեծամասնության հետ արդեն կնքվել էին ԳԾ-ներ, որը ևս ծառայել որպես գործիք հարևան երկրների հետ ԵՄ հարաբերությունների միասնականացման համար:

այլ հիմնվելու է դրանց վրա ու զարգացնելու համագործակցությունը: Մասնավորապես՝ ԵՅԲ-ի մեկնարկից հետո էլ շարունակելու էին գործել երկկողմ համաձայնագրերը, ինչպիսիք էին ԳՀՀ-ներն ու ԱՀ-ները: Իհարկե, ԵՅԲ-ի շրջանակներում համագործակցությունը կարող էր ընդլայնվել՝ հանգեցնելով ինստիտուցիոնալ հարաբերությունների զարգացմանը: Այս եղանակով ևս ԵՄ-ն կարող էր տարբերակել իր մոտեցումները տարբեր երկրների նկատմամբ՝ ստեղծելով գործընկերների աստիճանակարգություն, որտեղ առավել մոտ գործընկերներն ասոցացված են ԵՄ-ի հետ, իսկ մյուսների հետ առկա է համագործակցության ավելի ցածր մակարդակ [18: p. 56]:

2003 թ. ԵՀ-ն արդեն աշխատանքներ էր սկսել ԳՃ-ների նախագծման ուղղությամբ: Դրանք, ինչպես արդեն նշվել է, ԵՅԲ ռազմավարության իրականացման առանցքային գործիքն էին: 2005 թ. ԵՄ-ն ԳՃ կնքեց Մոլդովայի (ինչպես նաև ԵՅԲ վեց այլ երկրների)¹, իսկ 2006 թ.՝ Հայաստանի ու Վրաստանի (ինչպես նաև Ադրբեյջանի) հետ²: ԳՃ-ներով առանձնացվում էին համագործակցության գերակա ուղղությունները հինգ տարվա համար, որից հետո դրանք պետք է վերանայվեին, ինչպես և առաջարկվել էր ԵՀ «Ավելի լայն Եվրոպա...» հաղորդագրությունում: ԵՅԲ ԳՃ-ների նախագծումը, կնքումն ու իրականացումն ինչ-որ առումով նման են ԵՄ անդամակցության շուրջ բանակցությունների գործընթացին, սակայն չեն ներառում անդամակցության հեռանկարը: Մ. Էմերսոնը նկատում է, որ մինչև 2004 թ. ԵՀ նախագահի պաշտոնում Խոսե Մանուել Բարոսոյի նշանակումը ԳՃ-ների նախագծման աշխատանքներն իրականացվում էին ԵՀ Ընդլայնման բաժանմունքի կողմից [12]: Բացի այդ, ԳՃ-ներում վերահաստատվում է ԵՄ արևելյան ընդլայնման

¹ ԵՄ-Մոլդովա ԳՃ-ի շուրջ բանակցություններն ավարտվել էին դեռևս 2004 թ. հունիսին, սակայն փաստաթուղթը ստորագրվեց միայն 2005 թ. փետրվարի 22-ին, քանզի ԵՄ-ն ցանկանում էր խմբավորել միանգամից մի քանի պետությունների հետ ԳՃ-ների ստորագրումը, ինչը ևս ցույց է տալիս ԵՄ չտարբերակված մոտեցումը հարևան երկրների նկատմամբ:

² ԵՀ-ն Հայաստանին, Վրաստանին ու Ադրբեյջանին ԳՃ-ների նախնական տարբերակները ներկայացրել էր դեռևս 2005 թ. օգոստոսին, սակայն դրանց կնքումը հետաձգվել էր՝ պայմանավորված Կիպրոսի վետոյով. ադրբեյջանական մարդատար ինքնաթիռն, անտեսելով ԵՄ դիրքորոշումը, թռիչք էր կատարել դեպի Թուրքիայի Կիպրոս, ինչի արդյունքում Կիպրոսը տևական ժամանակով արգել ափակեց երեք երկրների հետ ԳՃ-ների շուրջ բանակցությունները [113]:

ագդեցու թյուրևը ե՞րբ հիմնման գործում: Երեք ԳԾ-ների առաջին տողերում նշվում է. «2004 թ. մայիսի 1-ին Եվրոպական Միության ընդլայնումը քաղաքական, աշխարհագրական ու տնտեսական տեսանկյուններից պատմական փոփոխությունն առաջ բերեց Միության [ԵՄ-ի] համար՝ Էլ ավելի մեծացնելով ԵՄ-ի ու Հայաստանի [Վրաստանի, Մոլդովայի] միջև քաղաքական ու տնտեսական փոխկախվածությունը» [129, 130, 131]:

Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ կնքված ԳԾ-ները, ինչպես արդեն նշվել է, չեն փոխարինում մինչդրանց ընդունումը գործող ԳՀՀ-ներին և չէին Էլ կարող փոխարինել, քանզի ԳԾ-ները քաղաքական փաստաթղթեր էին, իսկ ԳՀՀ-ները՝ իրավական: ԳԾ-ները պարզապես պետք է ավելի հստակ գործողությունների միջոցով նպաստեին ԳՀՀ-ների արդյունավետ իրականացմանը: Ծարուհանելով ե՞րբ «Ավելի լայն Եվրոպա...» հաղորդագրության տրամաբանությունը՝ ԳԾ-ներում ամրագրվում էր ԵՄ-ի հետ հարաբերությունների պայմանավորումը շահառու երկրի կողմից ԳԾ-ով սահմանված նպատակների իրականացումից: Երեք ԳԾ-ներում Էլ մասնավորապես նշվում է. «[Կողմերի միջև] հարաբերությունների մակարդակը կախված է ընդհանուր արժեքներին Հայաստանի [Վրաստանի, Մոլդովայի] նվիրվածությունից ու փոխհամաձայնեցված առաջնահերթությունների իրագործման կարողությունից... Կախված այս Գործողությունների ծրագրի նպատակների իրականացումից և ԵՄ-Հայաստան [ԵՄ-Վրաստան, ԵՄ-Մոլդովա] հարաբերությունների զարգացման ընթացքից, ողջամիտ ժամանակում կարող է դիտարկվել նոր ընդլայնված պայմանագրային հարաբերությունների հավանականությունը» [129, 130, 131]: Ընդ որում, ԳԾ-ներով սահմանված գործողությունների գերակշիռ մեծամասնությունը կատարման ենթակա են շահառու պետության կողմից, իսկ ԵՄ պարտավորությունները քիչ են, ինչը ևս ցույց է տալիս ե՞րբ շրջանակներում ԵՄ-ի կողմից սեփական շահերի խթանման քաղաքականությունն ու երրորդ երկրների հետ ուղղահայաց հարաբերությունների մոդելը:

Երեք ԳԾ-ներում Էլ նշվում է, որ ԵՄ-ն հաշվի է առնում երկրների «Եվրոպական ձգտումները» և պատրաստ է ընդլայնել

համագործակցությունը ԳԾ-ով սահմանված ոլորտներում: Այնուամենայնիվ, ԳՀՀ-ները շարունակում են մոտապագայում մնալ երկկողմ հարաբերությունների առանցքը, ինչը ցույց է տալիս ԵՄ անդամակցության անհեռանկարայնությունը:

ԳԾ-ներով երեք երկրների հետ նախատեսվող առաջնահերթությունների դասակարգումը գրեթե նույնն է: Դրանք վերաբերում են Ժողովրդավարության ամրապնդմանը, տնտեսական զարգացման խթանմանը, հակամարտությունների խաղաղ կարգավորմանը նպաստելուն և այլն: ԳԾ-ներում նաև մակերեսային անդրադարձ է կատարվում միջմարդկային շփումներին: Մասնավորապես՝ որպես համագործակցության նոր հեռանկար նշվում է ԵՄ-ին շահառու երկրների միջև վիզաների դյուրացման ու հետընդունման շուրջ երկխոսության բացումը: Վրաստանի ու Մոլդովայի պարագայում առանձին անդրադարձ է կատարվում սահմանային վերահսկողությանն ու միգրացիոն հոսքերի կառավարմանը:

Թեև ԳԾ-ները քաղաքական փաստաթղթեր են, սակայն դրանցում քաղաքական (հատկապես՝ արտաքին) համագործակցության բաղադրիչը թույլ է ներկայացված: Եթե ներքին քաղաքականության ոլորտում առաջարկվող բարեփոխումները տեսանելի են և համեմատաբար հստակ, ապա արտաքին քաղաքական համագործակցության ուղղությունամբ նախատեսվող գործողություններն առավել դեկլարատիվ բնույթի են: Թերևս, ամենաշոշափելի դրույթը ներառված է Վրաստանի հետ կնքված ԳԾ-ում, որով նախատեսվում է վերջինի մասնակցությունն ԵՄ Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությանը (ԸԱԱՔ) (ներառյալ՝ Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականությանը (ԸԱՊՔ)), որը, կարելի է ասել, ԵՄ «քաղաքական ընդհանուր շուկան» է:

Տնտեսական համագործակցության՝ ԳԾ-ներով սահմանվող հիմնական ուղղություններն են առևտրային ու տնտեսական հարաբերությունների խորացումը, օրենսդրության համապատասխան հատվածների համապատասխանեցումը ԵՄ չափանիշներին, շուկաների փոխադարձ բացումը և այլն: Հարկ է նշել, որ ԳԾ-ներում դեռևս չեն քննարկվում ԽՀԱԱԳ-ները, ինչը որակապես նոր մակարդակի

կբարձրացներ երկկողմ առևտրային ու տնտեսական հարաբերությունները¹: Երեք ԳԾ-ներում էլ նախատեսվում է երկրների էական ինտեգրում, մասնավորապես՝ նրանց «բաժնեմասի» ձեռքբերում ԵՄ ներքին շուկայում, իսկ Վրաստանի պարագայում նշվում է նաև չորս ազատությունների մասին: Վրաստանի հետ նախատեսվում էր նաև առանձնակի համագործակցություն էներգետիկ ոլորտում, ինչի միջոցով ԵՄ-ն նպաստակ ուներ բարելավել սեփական էներգետիկ անվտանգությունն ու բազմազանեցնել էներգիայի ստացման աղբյուրները: Այստեղ ակնհայտորեն խոսքը Վրաստանի միջոցով Ադրբեջանից ստացվելիք նավթագազային ռեսուրսների տարանցման մասին է, ինչը Ռուսաստանից էներգետիկ կախվածության թուլացման առումով կենսական նշանակություն ուներ ԵՄ-ի համար²:

Անվտանգության հիմնահարցի հետկապված ԳԾ-ներում նշվում է, որ ԵՄ-ն պատրաստակամ է նպաստել հակամարտությունների կարգավորմանն իր լիազորությունների շրջանակում և այլ կազմակերպությունների (ԵԱՀԿ, իսկ Վրաստանի պարագայում՝ նաև ՄԱԿ) հետ սերտ համագործակցության միջոցով: Հարկ է նշել, որ ի տարբերություն Հայաստանի ու Մոլդովայի հետ կնքված ԳԾ-ների որտեղ նշվում է համապատասխանաբար Լեռնային Ղարաբաղի և Մերձդնեստրի հակամարտություններ, ԵՄ-Վրաստան ԳԾ-ում գործածվում է «Վրաստանի ներքին հակամարտություններ» արտահայտությունը, ինչով ԵՄ-ն իր հստակ դիրքորոշումն է հայտնում ինդիքի նկատմամբ՝ պաշտպանելով Վրաստանի տարածքային ամբողջականությունը, մինչդեռ մյուս երկու դեպքերում ԵՄ մոտեցումը պարզ չէ: Այլ կերպ ասած՝ Աբխազիայի ու Հարավային Օսիայի հակամարտություններում ԵՄ-ն պատրաստակամ է աջակցել Վրաստանին, իսկ Լեռնային Ղարաբաղի ու Մերձդնեստրի պարագայում պարզ չէ, թե ԵՄ-ն հակամարտության որ կողմին է սատարելու: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նկատել, որ Հա-

¹ ԽՌԱԱԳ-ների մասին առաջին անգամ նշվում է ԵՅ-ի կողմից 2006 թ. դեկտեմբերին իրապարակված «Հզորացնելով ԵՅԶ-ն» վերաառությամբ հաղորդագրությունում:

² 2005 թ. շահագործվում էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, իսկ 2006 թ.՝ Բաքու-Թբիլիսի-Երզրում գազամուղը, որոնց ընդլայնման և նոր նախագծերի իրագործման արդյունքում ԵՄ-ն կարող էր օգտվել ադրբեջանական էներգետիկ ռեսուրսներից:

յաստանի պարագայում ԵՄ-ն անվտանգության ոլորտում գործողությունների ավելի նեղ շրջանակ ունի, քանզի հակամարտության մյուս կողմը ԵՅԲ-ին մասնակցող մեկ այլ պետություն է՝ Ադրբեջանը, և ԵՄ միակողմանիությունը կդիտվի որպես անհավասար վերաբերմունք գործընկեր երկրների նկատմամբ, ինչը կարող է հանգեցնել դրանցից մեկում ԵՄ և եգիտիմության կտրուկ անկման: Վրաստանի ու Մոլդովայի պարագայում ինքնավարության/ինքնիշխանության ձգտող կողմերին սատարում է Ռուսաստանը, և ԵՄ-ն ավելի ազատ է ինչը թույլ է տալիս ԵՄ-ին պաշտպանել ԵՅԲ երկրների շահերը:

ԵՅԲ մեկնարկով ու ԳԾ-ների ստորագրմամբ առաջացավ նաև նախատեսված գործողությունների իրականացման ֆինանսական գործիքի ներդրման անհրաժեշտություն: Երկարատև մշակումներից հետո 2006 թ. մայիսին ԵՅ-ն ներկայացրեց ԵՅԳԳ-ն, որը Եվրոպական խորհրդարանի կողմից հաստատվեց նույն թվականի հոկտեմբերին [136]: Այն գալիս էր փոխարինել ու հարևան տարածաշրջանների համար գործող ֆինանսական գործիքներին՝ ՏԱՍԻՍ-ին (արևելյան հարևանություն) ու ԵՄԳ-ն (հարավային հարևանություն): ԵՅԳԳ-ով նախատեսվեց 2007-2013 թթ. համար հատկացնել շուրջ 11.2 մլրդ եվրո, ինչը 32%-եվ գերազանցում էր ՏԱՍԻՍ-ի ու ԵՄԳ-ի շրջանակներում 2000-2006 թթ. հատկացված միջոցները [120: ք. 13]: ԵՅԳԳ-ով նախատեսված միջոցները կազմում էին ԵՄ-ի կողմից արտաքին գործողությունների վրա ծախսվող միջոցների 15%-ը, իսկ վերջինը կազմում է ԵՄ ընդհանուր բյուջեի 10%-ը [12: ք. 10]: ԵՅԳԳ բյուջեի 95%-ը նախատեսված է ազգային, իսկ 5%-ը՝ տարածաշրջանային ծրագրերի համար [153]: Նշենք, որ մինչև 2011 թ. ներառյալ ԵՅԳԳ-ի միջոցով որոշակի ֆինանսավորում ստացել է նաև Ռուսաստանը՝ չնայած այն հանգամանքին, որ վերջինս ներառված չէր ԵՅԲ-ում: Ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է ելնելով շահառու երկր(ներ)ում դրանց իրականացման անհրաժեշտությունից, ինչպես նաև սահմանված բարեփոխումների իրագործումից [153]:

2007 թ. դեկտեմբերին ԵՅ-ի կողմից հրապարակված «Չգործվող Եվրոպական հարևանության քաղաքականություն» վերտառությամբ հաղորդագրությունում առաջարկվում է հաջորդող տարիներին

ակտիվացնել ԵՄ-ԵՀՔ երկրներ տնտեսական համագործակցությունը՝ ներմուծելով առևտրային հարաբերությունների կարգավորման թիրախային գործիք՝ ԽՅԱԱԳ-ն, որը հնարավորություն է կտար երկկողմ առևտուր իրականացնել առանց մաքսատուրքերի՝ այդպիսով շուկաները դարձնելով ավելի բաց [117: p. 4-5]:

ԵՀ հաղորդագրությունը նաև ընդլայնում է ԳԾ-ներով նախատեսված միջմարդկային շփումների բաղադրիչը՝ առաջարկելով ԵՀՔ երկրներից դեպի ԵՄ կարճաժամկետ ուղևորությունների դյուրացում, ինչպես նաև միգրացիայի կառավարման մեխանիզմների ներդրում, ինչի արդյունքում հետագայում հնարավոր կլինի նաև ԵՀՔ երկրների քաղաքացիների համար բացել ԵՄ անդամ պետությունների աշխատանքային շուկաները [117: p. 5]: Այս հարցում ևս ԵՄ-ն կիրառում է փոխալայմանավորման սկզբունքը՝ նշելով. «Շարժունակության խթանումը կախված է մեր գործընկերների կողմից անվտանգության ու արդարադատության բարելավման և անօրինական միգրացիայի դեմ պայքարի պատրաստակամությունից» [117: p. 5]: Հաղորդագրությամբ նաև առաջարկվում է այս առաջադրանքի լուծման կոնկրետ մեխանիզմներ, ինչպիսիք են Եվրոպական վիզային քաղաքականության վերանայումը և Վիզաների միասնական կենտրոնների ստեղծումը [117: p. 5]:

«Հզոր Եվրոպական հարևանության քաղաքականություն» հաղորդագրությունում, ի տարբերություն մինչ այդ ընդունված փաստաթղթերի, հստակ նշվում է նաև ԵՀՔ երկրներում հակամարտությունների կարգավորման հարցում ԵՄ շարժառիթները: Մասնավորապես՝ լարված հակամարտությունները կարող են արժեզրկել ԵՄ կողմից քաղաքական բարեփոխումների ու տնտեսական զարգացման խթանման ջանքերը, անկառավարելի միգրացիոն հոսքերի, Էներգիայի մատակարարման ճանապարհների խափանման, ինչպես նաև հնարավոր ահաբեկչության ու այլ հանցավոր գործողությունների միջոցով վտանգել ԵՄ անվտանգությունը [117: p. 6]: Այնուամենայնիվ, հաղորդագրությունում չի քննարկվում կոնֆլիկտների կարգավորմանը ԵՄ ուղղակի մասնակցությունը: Փոխարենը հստակորեն նշվում է, որ ԵՄ-ն կարող է «աշխատել հակա-

մարտության ունեցրի շուրջը՝ խթանելով բարեփոխումներ սահմանագծի երկու կողմերում» [117: p. 6]: ԵՄ այս մոտեցումը կարող է միայն մասամբ կիրառելի լինել: Վրաստանում և Մոլդովայում իրականացվող բարեփոխումները տեսականորեն կարող են գրավիչ լինել անկախության ձգտող միավորների համար և վերջիններս որոշ են միանալ իրենց «մայր» պետության ունեցրին և ստանալ ԵՄ ֆինանսավորումն ու այլ տեսակի աջակցությունը; Ի հակառակ սրա՝ ԵՄ-ն է պետք է բարեփոխումներ խթանի թե՛ Յայաստանում, թե՛ Ադրբեյջանում, և Արցախի՝ երկու կողմերից որևէ մեկին միանալը չի կարող ազդել դրանց նկատմամբ ԵՄ դիրքորոշման փոփոխության վրա: Ըստ Էության, Լեռնային Ղարաբաղի պարագայում փոխայմանավորման սկզբունքը չի գործում դրա օբյեկտի բացակայության և հիմնահարցի շուրջ ԵՄ-ի անորոշ կեցվածքի պատճառով, իսկ եվրոպականացման խիստ անհամաչափ ընթացքը Յայաստանում ու Ադրբեյջանում աննշան են դարձնում ԵՄ «փափուկ ուժի» դերը համարության կարգավորման գործում:

Այսպիսով, 2003-2008 թթ. գործարկելով ԵՅԲ-ն՝ ԵՄ-ն փորձում էր կառավարել դեպի արևելք ընդլայնման արդյունքում առաջացած վտանգները, որոնք առանձնացվել էին ԵԱՌ-ով և ապահովագրել սեփական շահերի շարունակական իրականացումը եվրոպական հետխորհրդային տարածքում և Միջերկրական ծովի երկրներում, որոնց հետ կնքված ԳԾ-ներն ու ԵՅԳԳ-ի միջոցով տրամադրվող ֆինանսավորումը նպատակ ունեին գործընկեր երկրների քաղաքական ու տնտեսական համակարգերը մոտեցնել / համապատասխանեցնել ԵՄ չափանիշներին: Չնայած ԵՄ սկզբնական փորձերին՝ Ռուսաստանը չմիացավ ԵՅԲ-ին՝ այդպիսով իրեն դարձնելով ոչ թե ԵՄ կառավարման մոդելի ռեցիպիենտ, այլ հավասարազոր գործընկեր, որն իր հերթին սեփական շահերն է առաջմղում տարածաշրջանում:

Մինչև 2008 թ. ԵՅԲ շրջանակներում Յայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ հարաբերություններում ԵՄ-ն կիրառել է հիմնականում նույն մեխանիզմները՝ փորձելով այս երկրներում առաջ բերել քաղաքական փոխակերպման գործընթաց: Այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ երեք երկրներում էլ առանցքային

փոփոխություններ չեն եղել, իսկ ԵՄ-ի հետ համագործակցությունը ծավալվել է գերազանցապես հարակից ոլորտներում, քանզի այն փաստի կարևոր հարցեր, ինչպիսիք են տնտեսական ինտեգրումն ու անվտանգությունը, պահանջում են առավել մասշտաբային փոփոխություններ և ԵՄ-ի առավել ուղղակի ներգրավում դրանց իրագործմանը:

2.2. Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում 2009-2017 թթ.

«Արևելյան գործընկերության» գործառնական նախադրյալներն ու արդյունքները

ԵՀԹ-ին մասնակցող երկրների հետ հարաբերությունների աստիճանական խորացումը և հարևան երկրների հետ հարաբերություններում տարբերակման սկզբունքի անարդյունավետ կիրառումը ԵՄ-ին ստիպեց վերանայել իր տարածաշրջանային արտաքին քաղաքականությունը: ԵՀԹ-ն իր ցույց դրեց «բարեկամների շրջանակ ստեղծելու» իդեալիստական նպատակի և սեփական սահմանները պաշտպանելու ու «լավ կառավարվող երկրներ ստեղծելու» ռեալիստական նկրտման անհամաչափությունը [69: p. 2]:

ԵՀԹ-ի հիմնամաբ ԵՄ-ն աշխարհաքաղաքական մրցակցության մեջ էր մտել Ռուսաստանի հետ¹, ուստի ԵՄ-ն նաև խնդիր ուներ հատկապես արևելյան հարևանությամբ գտնվող երկրներում բարձրացնելու ԵՄ հեղինակությունը և այդ երկրների համար դառնալու արտաքին քաղաքական ամենագրավիչ ուժը, ինչի շնորհիվ կկարողանար իրականացնել իր հիմնարար շահերն էներգետիկ անվտանգության և այլ ոլորտներում: ԵՄ-ի շահերն արևելյան հարևանությունում ամրապնդելով հատկապես հետաքրքրված էին արևելաեվրոպական ու մերձբալթյան պետությունները, քանզի տնական ժամանակ սոցիալիստական ճամբարում լինելուց հետո նրանք միացել էին ԵՄ-ին և սեփական անվտանգության պահպանման համար անհրաժեշտ էին համարում կոլեկտիվ տարածաշրջանային քաղաքականությամբ դիմագրավել Ռուսաստանի ազդեցության ավելացմանը:

¹ Սա փաստվեց նաև 2008 թ. ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի դիտարկմամբ, որ Ալ Գ-ի միջոցով ԵՄ-ն մտնում է Ռուսաստանի գերակաշահերի գոտի [144]:

2008 թ. մայիսին Լեհաստանն ու Շվեդիան հանդես եկան արևելյան հարևանների հետ ԵՄ հարաբերությունների խորացման և ԱլԳ-ի հիմնման համատեղ առաջարկով՝ այդպիսով փորձելով խթանել ԵՅԲ-ն, որն այլևս բավարար չափով չէր համապատասխանում շահառու երկրների կարիքներին և ԵՄ-ի հետ համագործակցության տարբեր տեսլականներին: Կարևոր է նշել, որ Լեհ-շվեդական նախագիծը ներկայացվեց հարավային հարևանների հետ հարաբերությունների հետագա ինստիտուցիոնալացման նպատակով Միջերկրածովյան միությունն ստեղծելու վերաբերյալ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի առաջարկից հետո: Վերջինս էլ ավելի սրեց արտաքին քաղաքականության ու շահերի շուրջ ԵՄ անդամ պետությունների միջև եղած դիրքորոշումների տարբերությունները, որն արդեն իսկ առկա էր դեռևս ԵՄ 2004 թ. ընդլայնումից սկսած: Ի պատասխանի Ֆրանսիայի առաջարկի՝ Լեհաստանի ու Շվեդիայի կողմից առաջարկված մոդելը հստակ փորձ էր կարևորելու արևելյան հարևանների տեղը ԵՄ արտաքին քաղաքական օրակարգում: Մասնավորապես՝ Լեհաստանը և Շվեդիան, լինելով ԵՄ ընդլայնման ջատագովներ, ձգտում էին պայմաններ ստեղծել ԵՄ-ին առնվազն Ուկրաինայի, Մոլդովայի և Վրաստանի անդամակցության համար, ինչը հիմնականում բասացաբար էր ընկալվում արևմտաեվրոպական ԵՄ անդամ պետություններում¹: Այս մտադրության խթանումը իրատեսական էր թվում, քանզի 2009 թ. գարնանը ԵՄ նախագահությունը ստանձնելու էր Չեխիան, որը ևս արևելյան հարևանների հետ հարաբերությունների խորացման կողմնակից էր, նույն թվականի աշնանը՝ Շվեդիան, իսկ 2011 թ. աշնանը՝ Լեհաստանը:

ԱլԳ-ի հարցում ԵՄ ներքին տարածայնությունները փոքր-ինչ մեղմվեցին 2008 թ. օգոստոսին Աբխազիայի և Հվ. Օսիայի շուրջ ռուս-վրացական պատերազմից հետո: Վրաստանի երկու շրջանների

¹ ԵՄ-ում ԱլԳ-ի շուրջ տարածայնությունները գերազանցապես պայմանավորված էին նրանով, որ այն կարող էր մասամբ կրկնել գործող տարածաշրջանային ծրագրերը (Սևծովյան տնտեսական համագործակցություն, Սևծովյան սիներգիա), ինչպես նաև ԵՄ շահերը մասնատել ըստ տարածաշրջանների: Բացի այդ, արևելյան հարևանների մեծ մասը նվազ տնտեսական կարևորություն ունեին ԵՄ արևմտյան անդամների համար, ինչն էլ վերջիններիս ուշադրությունը հեռացնում էր նրանցից: ԱլԳ-ի շուրջ ԵՄ պաշտոնական ու հանրային դիրքորոշումների մասին առավել մանրամասն տե՛ս [69]:

անկախացման ձգտումներին Ռուսաստանի կողմից տրված աջակցությունը ԵՄ անդամ պետություններին ստիպեց հասկանալ հարավկովկասյան երկրների ռազմավարական նշանակությունը ԵՄ-ի համար, ինչպես նաև աշխարհագրորեն ԵՄ-ի ու Ռուսաստանի միջև տեղակայված հետխորհրդային պետությունների (Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա) խոցելիությունը: Վերջնականապես պարզ դարձավ նաև, որ առնվազն տարածաշրջանային հարցերում ԵՄ-ն ու Ռուսաստանը ոչ թե սերտ դաշնակիցներ էին, ինչպես հայտարարվել էր ԵՅԲ հիմնման ժամանակ, այլ մրցակիցներ: ԵՅԲ հետխորհրդային երկրների աշխարհաքաղաքական դիրքը դարձավ ԵՄ տարածաշրջանային քաղաքական կուրսի փոփոխության գլխավոր «շարժիչը», որի աշխատանքի արդյունքում ռուս-վրացական պատերազմից ընդամենը մի քանի ամիս հետո՝ 2008 թ. դեկտեմբերին, ԵՅ-ն հրապարակեց «Արևելյան գործընկերություն» վերտառությամբ ծավալուն հաղորդագրությունը, որը, ինչպես նշվում է հաղորդագրությունում, «արձագանք էր Վրաստանում տեղի ունեցած հակամարտությամբ և դրա հետևանքներով ԵՄ հետաքրքրվածության ավելի հստակ ազդանշանի ներկայացման պահանջի» [118: ք. 2]: Յաղորդագրությունում ընդգծվում է հետխորհրդային երկրների հետ «ավելի հավակնոտ գործընկերության» անհրաժեշտությունն ու ներկայացվում հարաբերությունների հետագա խորացման ուղենիշերը: Մասնավորապես՝ խոսքն ԱՅ-ների (Ներառյալ՝ ԽՅԱԱԳ-ների), ԸԱԱԲ-ի, վիզաների ազատականացման ու այլ գործիքների միջոցով ընդլայնված երկկողմ տնտեսական ու քաղաքական համագործակցության մասին է: Յաղորդագրությամբ առանձնացվում են նաև ԱլԳ չորս թեմատիկ հարթակները՝ (1) Ժողովրդավարություն, լավ կառավարում և կայունություն, (2) տնտեսական ինտեգրում և համապատասխանեցում ԵՄ նորմերին, (3) Էներգետիկ անվտանգություն և (4) միջմարդկային շփումներ [118: ք. 11-13]: ԵՅ «ԱլԳ» հաղորդագրությունը ԵՄ անդամ պետությունների կողմից պաշտոնապես վավերացվեց 2009 թ. մայիսին ԵՄ-ում Չեխիայի նախագահության շրջանակներում անցկացվող ԱլԳ գագաթնաժողովին:

ԵՅԲ հետխորհրդային երկրների հետ հարաբերությունների այս նոր շրջանակը սկսեց բնութագրվել որպես «թույլ ընդլայնման»

(“enlargement lite”) ռազմավարություն [83], իսկ Պրահայի գազաթնամուղովի համատեղ հայտարարությունում ԱլԳ-ն գնահատվում է որպես «կարևոր քայլ ԵՄ-ի և շահագրգիռ գործընկեր պետությունների միջև քաղաքական ասոցացումն ու հետագա տնտեսական ինտեգրումն արագացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծման ուղղությամբ» [111: ք. 6]: ԵՅԲ-ի սկզբնական տարբերակից ԱլԳ-ի գլխավոր տարբերությունն էր համարվում հարևան երկրների հետ «ավելի հավակնոտ գործընկերությունը»՝ հիմնված ընդհանուր շահերի ու պատասխանատվության վրա [111: ք. 5]: ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման շուրջ տարբեր երկրների ունեցած տեսլականներին համապատասխանեցնելու նպատակով ԱլԳ-ով ամրագրվեց համագործակցության երկաստիճանայնությունը, համաձայն որի ԵՄ-ն ԱլԳ երկրների հետ միաժամանակ զարգացնելու էր երկկողմ հարաբերություններ՝ անհատական աջակցության ու հնարավոր ԱՅ-ների միջոցով, և բազմակողմ հարաբերություններ՝ տարածաշրջանային ծրագրերի միջոցով: Երկրորդը հատկապես կիրառելի էր այն երկրների պարագայում, որոնք ԵՄ-ի հետ չունեին պայմանագրային հարաբերություններ, և միայն այս կերպ կարող էին իրապես ներգրավվել ԵՅԲ-ում: Բազմակողմ հարաբերությունների հաստատմամբ ԵՄ-ն նաև նպատակ ուներ ոչ միայն սերտացնել իր և տարածաշրջանի երկրների կապերը, այլ և այդ երկրների միջև հաղորդակցությունը՝ ստեղծելով ավելի բաց ու փոխկապված հարևանություն, ինչը, սակայն անիրատեսական էր՝ հաշվի առնելով երկրների միջև եղած տարբերությունները: Տարածաշրջանային համագործակցության օրինակներ են ԱլԳ քաղաքացիական հասարակության ֆորումը և Տեղական ու տարածաշրջանային իշխանությունների կոնֆերանսը, որոնք, գործելով չորս թեմատիկ պլատֆորմներին զուգահեռ, պետք է նպաստեին միջպետական շփումների ակտիվացմանը: ԱլԳ երկրների հետ համագործակցության առաջընթացը կայուն մշտադիտարկվում և հրապարակվում է ամենամյա ԵՅԲ առաջընթացի զեկուլյացներում ու այլ փաստաթղթերում¹:

¹ ԵՅԲ ԳԾ-ների իրականացման առաջընթացի տարեկան զեկուլյացները հասանելի են Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության (ԵԱԳԾ) պաշտոնական

Այ Գ-ի գործառման ամենաշատ քննարկված ասպեկտներից մեկը ԵՄ անդամակցությունն է: Թեև Այ Գ երկրների հետ հարաբերությունների զարգացումը շատ նման էր 2004 թ. ընդլայնման ժամանակ արևել ատլանտյան երկրների հետ ծավալվող համագործակցությանը, և հետխորհրդային երկրներին ներկայացվող պահանջները գրեթե նույնն էին, վերջիններս չէին կարող հավակնել ԵՄ անդամակցության. նրանք չունեին ո՛չ թեկնածուի, ո՛չ էլ հնարավոր թեկնածուի կարգավիճակ: Կարծում ենք՝ ԵՄ-ի որդեգրած այդ մոտեցումը պայմանավորված էր մի քանի գործոնով: Նախ, անգամ գործընկերության մակարդակի հարաբերությունների հաստատումն առաջացրել էր բազմաթիվ տարածայնություններ ԵՄ անդամ պետությունների միջև՝ պայմանավորված նրանց տարբերվող արտաքին քաղաքական շահերով¹: Նույնիսկ նախկին սոցիալիստական երկրների (2007 թ-ից՝ նաև Ռումինիայի ու Բուլղարիայի) միացումը ԵՄ-ին միանշանակ չէր ընդունվել ԵՄ-ում: Երկրորդ, Թուրքիայի և արևմտաբալկանյան երկրների հետ անդամակցության շուրջ բանակցությունները չափազանց անարդյունավետ էին ընթանում (բացառությամբ Խորվաթիայի, որը 2013 թ. միացավ ԵՄ-ին), և ԵՄ-ն չէր կարող նման գործընթաց սկսել երկրների մեկ այլ խմբի հետ, հատկապես որ, ինչպես արդեն նշվել է, Այ Գ երկրները միջինում ցածր տնտեսական նշանակություն ունեին ԵՄ տեսանկյունից: Վերջապես, Այ Գ երկրների անդամակցությունը ԵՄ-ին կվերացներ Ռուսաստանի, Միջին Ասիայի ու Մերձավոր Արևելքի ոչ ժողովրդավարական, երբեմն էլ՝ բռնապետական պետություններից ԵՄ-ին առանձնացնող պատկերը՝ այդպիսով ավելի զգայուն դարձնելով ԵՄ արտաքին

վեր-կայքում, https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/8409/enp-progress-reports_en:

¹ Ի տարբերությունն արևմտյան ու հարավային Եվրոպայի շատ երկրների՝ Լեհաստանն ու Շվեդիան շարունակում էին հատուկ մոտեցում ցուցաբերել Այ Գ երկրների նկատմամբ՝ չբացառելով նաև ԵՄ-ին վերջիններիս անդամակցության հավանականությունը: 2010 թ. հոկտեմբերի 6-ին ԲՆ Քեթրին Էշթոնին և Ընդլայնման ու ԵԶԲ հարցերով ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլլեին երկու երկրների արտաքին գործերի նախարարներ Ռադոսլավ Շիկորսկու և Կարլ Բիլդտի կողմից ուղարկված համատեղ նամակում նշվում էր, որ ԵՄ արևելյան հարևաններն, ի տարբերությունն ՅՂՈՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՈՒ ՄԵՐՃԱՎՈՐ ԱՐՆԵՎԵՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ, կարող են հետագայում դառնալ ԵՄ անդամներ. «[ԵՄ-ին սահմանակցող] որոշ երկրներ Եվրոպական են [...] և հատուկ կարգավիճակ ունեն, իսկ մյուսները կշարունակեն մնալ [պարզապես] Եվրոպայի հարևաններ» [147]:

անվտանգությունը: Թեև Ալ Գ մեկնարկին այն ընդհանուր առմամբ դրական էր ընկալվում մասնակցող բոլոր պետությունների կողմից և համարվում էր ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման հիմք, սակայն ժամանակի ընթացքում այն կարող էր առանձին երկրներում ընկալվել որպես անարդար վերաբերմունք ԵՄ-ին մոտարկման ուղղությամբ իրենց ներդրած ջանքերի դիմաց: Մասնավորապես՝ այն երկրները, որոնք պաշտոնապես հայտարարել էին ԵՄ-ին միանալու իրենց ձգտման մասին (Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան), պատրաստակամորեն ներգրավվեցին Ալ Գ-ում՝ հուսալով դրա շրջանակներում իրականացվող ներքին բարեփոխումների արդյունքում ստանալ անդամակցության հնարավորություն՝ չնայած ԵՄ-ի կողմից այն բացառելու հստակ դիրքորոշմանը: Հայաստանի պարագայում ԵՄ-ի հետ խորը հարաբերությունների հաստատումն ամրագրված է 2007 թ. Ազգային անվտանգության ռազմավարությունից (ԱԱԴ) [103: Էջ 17], սակայն ԵՄ անդամակցության նախապիս քաղաքական գերակայությունն է, ուստի անդամակցության հնարավորության բացակայությունը խոչընդոտ չէր կարող լինել երկկողմ հարաբերություններում: ԵՄ-Ադրբեջան հարաբերությունները գերազանցապես կառուցված են էներգետիկ առևտրի վրա, և Ադրբեջանը երբեք էլ խորապես հետաքրքրված չի եղել ԵՄ-ի հետ հարաբերությունների համապարփակ զարգացմամբ: Բելառուսը, չնայած սահմանակցում է ԵՄ-ին, սակայն վերջինիս չնչին դեր է հատկացվում էր սեփական արտաքին քաղաքական դաշտում, ինչի արդյունքում նույնիսկ երկկողմ պայմանագրային հարաբերություններ չէին հաստատվել: Հետևաբար, այս երկու երկրներում ևս Ալ Գ-ի իրականացումը չէր կարող պայմանավորված լինել ԵՄ-ին անդամակցության հեռանկարի բացակայությամբ:

Չառաջարկելով անդամակցության հնարավորություն՝ ԵՄ-ն, այնուամենայնիվ, Ալ Գ-ի օգուտներից լիարժեք օգտվելու համար մասնակից երկրներից ակնկալում էր լայնածավալ քաղաքական, տնտեսական ու իրավական փոփոխություններ և մոտարկում ԵՄ նորմերին, ինչը կարող է ստեղծել «արտոնյալ երկկողմ

հարաբերություններ»¹: Ալ Գ գլխավոր օգուտն, անշուշտ, ԱՅ-ներն (ներառյալ՝ ԽՅԱԱԳ-ների) են, ինչը շահառու երկրների առաջ քաջու է ԵՄ շուկան և առավելագույնս մոտեցնում ԵՄ քաղաքական ինստիտուտներին²: Ի տարբերություն անդամակցության բանակցությունների և ԱԱԵԱ-ում ներգրավված երկրների (Իսլանդիա, Լիխտենշտայն և Նորվեգիա)՝ ԱՅ-ները հիմնվում են տարբերակման սկզբունքի վրա և առաջարկվում ոչ թե միանգամից մի խումբ երկրների, այլ բանակցվում էին յուրաքանչյուր երկրի հետ առանձին՝ կախված անհրաժեշտ պայմանների առկայությունից [77: p. 4]: Այնուամենայնիվ, չնայած ԵՄ կառույցների կողմից արվող հայտարարություններին՝ շահառու պետությունները չնչին հնարավորություն ունեն՝ որոշելու ԵՄ-ի հետ հարաբերությունների ինստիտուցիոնալացման նոր մակարդակի ուղղությունը, մասշտաբն ու խորությունը: Անհրաժեշտ պայմանների բավարարվելը որոշվում է ԵՄ-ի կողմից և անկախ շահառու պետության պատրաստակամությունից՝ հիմնականում ԵՄ-ն է սահմանում համագործակցության շրջանակը՝ կախված սեփական շահերին դրա համապատասխանությամբ և ելնելով առկա աշխարհաքաղաքական իրողություններից: Դ. Բեչևն ու Կ. Նիկոլաիդիսն իրենց 2010 թ. հոդվածում առանձնացնում են այն հիմնական գաղափարական բախումները, որոնց ԵՄ-ն պետք է կարողանար դիմագրավել հարևան երկրների հետ արդյունավետ համագործակցություն հաստատելու համար: Դրանք են [1] գերիշխանությունն ընդդեմ գործընկերության, [2] փոխպայմանավորումն ընդդեմ փոխհամաձայնության, [3] երկկողմանիությունն ընդդեմ բազմակողմանիության, [4] տարբերակումն ընդդեմ միակերպության և [5] \$ուկցիոնալ տեսլականն ընդդեմ ռազմավարական տեսլականի [38: p. 479-481]: Այս բախումներից անգամ մեկի առկայությունը ԵՄ-ի ու Ալ Գ երկրների միջև համագործակցությունը դարձնում է կառավարողի ու կառավարվողի հարաբերություն: ԵՄ՝ «լավ

¹ Ի տարբերություն Ալ Գ երկրների, 2004 թ. ԵՄ-ին միացած երկրների պարագայում նման փոփոխությունների իրականացման համար խթան էր ծառայում անդամակցության հեռանկարը:

² Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՅԿ) անդամակցությունը ԵՄ-ի կողմից սահմանված էր որպես նման համաձայնագրերի ստորագրման նախապայման: Ադրբեյջանն ու Բելառուսը դրան չեն համապատասխանում, ինչը ևս նվազեցնում է ԵՄ-ի հետ խորը հարաբերությունների հաստատման հավանականությունը:

կառավարվող երկրների» շրջանակ ստեղծելու նազմավարական նպատակն ինքնին հարևան երկրներին դարձնում է կառավարման օբյեկտներ, այլ ոչ թե (գործ)ընկերներ: Տարածված այն համոզմունքը, թե ԵՄ կառավարման մոդելի զարգացումն օրինակ է բուլղոսի համար, երբեմն կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների, երբ ԵՄ-ն համագործակցությունն առաջարկելիս չի քննարկում շահառու երկրի դիրքորոշումը:

Ալ Գ գործառման առանձնահատկությունները հասկանալու համար կարևոր է քննարկել դրա մեկնարկին Յայաստանում, Վրաստանում և Մոլդովայում առկա ներքաղաքական իրավիճակն ու Ալ Գ տեղը երեք երկրների արտաքին քաղաքական օրակարգում:

2007 թ. աշնանը Վրաստանում Միխեիլ Սաակաշվիլի ու իշխանության դեմ տեղի ունեցած զանգվածային ցույցերի արդյունքում 2008 թ. աշնանը նախատեսված նախագահական ընտրությունները տեղափոխվեցին 2008 թ. հունվարի 5, և չնայած հասարակության մի հատվածի դժգոհությանը՝ նախագահի պաշտոնում վերընտրվեց գործող նախագահ Սաակաշվիլին: Թեև վերջինիս վարկանիշը կառավարման չորս տարիների ընթացքում էապես նվազել էր, սակայն կարողանալով ապահովել իր իշխանության շարունակականությունը՝ Սաակաշվիլին կայուն պահեց նաև երկրի արտաքին քաղաքական օրակարգը, որն արդեն իսկ սերտորեն կապված էր ԵՄ-ի ու ՆԱՏՕ-ի հետ, իսկ 2006 թ. Ռուսաստանի հետ ունեցած «լրտեսական սկանդալի» ու դեպի Ռուսաստանի վրացական գինիների արտահանման արգելքի արդյունքում լարված հարաբերությունները հավելյալ խթան էին տվել Վրաստան-Արևմուտք հարաբերություններին: Նշված իրողություններին և ԵՄ-ին միանալու Վրաստանի բացահայտ ձգտման համատեքստում անվիճելի է, որ Ալ Գ-ն լիովին համապատասխանում էր երկկողմ հարաբերությունների դինամիկային և ընդունելի էր շահառու պետության կողմից:

Նույն 2008 թ. փետրվարի 19-ին Յայաստանում անցկացվեցին նախագահական ընտրություններ, որի արդյունքում մինչ այդ վարչապետի պաշտոնը զբաղեցնող Սերժ Սարգսյանը հաջորդեց Ռոբերտ Քոչարյանին: Յայաստանի պարագայում իշխանափո-

խուժյուլնը նշանակալի ազդեցությունն չունեցավ երկրի արտաքին քաղաքական կուրսի վրա: Ինչպես արդեն նշվել է, նախորդ իշխանության շրջանում՝ 2007 թ., հաստատվել էր ԱԱՌ-ը, որով Յայաստանի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունք էր սահմանվել փոխընդունման (կոմպլեմենտարիզմ), որը շարունակվեց կիրառվել նոր իշխանությունների կողմից: Ուստի զարմանալի չէ, որ ԱԳ մեկնարկային գագաթնաժողովին Սերժ Սարգսյանը կարևորել է ծրագիրը Յայաստանի զարգացման և տարածաշրջանային փոխգործակցության խթանման տեսանկյուններից [141]: Կարելի է ասել, որ մեկնարկային ԱԳ համապատասխանում էր ԵՄ-Յայաստան հարաբերությունների զարգացման տրամաբանությանը:

Մոլդովայում իրավիճակը փոքր-ինչ այլ էր: 2001 թ. սկսած երկրում իշխանության գլուխ էր կանգնած Մոլդովայի Յանրապետության Կոմունիստների կուսակցությունը (ՄԿԿ), որը երկրի նախագահ ընտրեց Վլադիմիր Վորոնինին: Կառավարման առաջին երկու տարիներին ՄԿԿ-ն վարում էր բացահայտ ռուսամետ քաղաքականություն, սակայն հարաբերությունները ՌԴ-ի հետ կտրուկ փոխվեցին 2003 թ. նոյեմբերին, երբ Ռուսաստանը փորձեց լուծում տալ Մոլդովայի ու Մերձդնեստրի միջև առկա հակամարտությանը՝ առաջարկելով 20 տարով ռուսական զորքեր տեղակայել Մոլդովայում [145]: Վորոնինը գիտակցեց, որ Ռուսաստանն ավելի մեծ վնաս կարող է հասցնել իր իշխանությանը, քան ԵՄ-ն [76: p. 369], ինչն էական փոփոխություններ առաջ բերեց Մոլդովայի արտաքին քաղաքականությանը: Մասնավորապես՝ ակտիվացան ռումինամետ ուժերը¹, ինչպես նաև սերտացան հարաբերությունները ԵՄ-ի հետ, որի արդյունքում Մոլդովան սահուն կերպով ներգրավվեց ԵՅՔ-ում: Մի քանի տարի շարունակ ԵՅՔ ԳԾ-ն հաջողությամբ իրականացվեց, իսկ 2008 թ. ԵՄ-ն արդեն Մոլդովայի գլխավոր առևտրային գործընկերն էր: Մոլդովայի արտաքին ապրանքաշրջանառության 50.2%-ն իրականացվում էր ԵՄ-ի հետ [152], ինչը Մոլդովան առանձնացնում էր ԱԳ մնացած երկրներից: Այնուամենայնիվ, 2009

¹ Անկախացումից հետո Մոլդովայի կառավարությունը փորձում էր հեռանալ Ռումինիայից. անգամ 1994 թ. սահմանադրությունում երկրի պետական լեզուն է համարվում մոլդովերենը, ոչ թե ռումիներենը: Մոլդովայի Յանրապետության Սահմանադրությունը տե՛ս
<http://lex.justice.md/viewdoc.php?action=view&view=doc&id=311496&lang=2>, մատչելի էր 15.04.2018:

թ. Վ. Վորոնինը կտրուկ փոխեց իր դիրքորոշումը ԵՄ-ի նկատմամբ՝ բացահայտորեն քննադատելով Ալ Գ-ն ռուսական մամուլում և ապրիլ-յան խորհրդարանական ընտրություներից առաջ Ռուսաստանի հետ բանակցություներ սկսելով Մերձդնեստրի հակամարտության կարգավորման շուրջ [68: ր. 1269]: Դեպքերի նման զարգացումը հանգեցրեց զանգվածային ցույցերի՝ հայտնի «թվիթերյան հեղափոխություն» անվանմամբ, իսկ ընտրություների արդյունքում ոչ մի կուսակցություն չստացավ մեծամասնություն և չկարողացավ ընտրել երկրի նախագահ: Նույն թվականի հուլիսին կայացավ ընտրություների երկրորդ փուլը, որի արդյունքում իշխանության եկավ ընդդիմադիր «Եվրոպական ինտեգրման դաշինքը», որը պատրաստ էր իրականացնել բոլոր բարեփոխումները ԵՄ-ին միանալու նպատակով [44: ր. 102]: Ուստի Մոլդովայում ևս ԵՄ-ն կարևոր արտաքին քաղաքական դերակատար էր, սակայն երկրի ներքաղաքական տեղաշարժերը պոտենցիալ մարտահրավեր էին ԵՄ ներգրավվածության ճանապարհին:

Ինչպես ԵՅԲ, այնպես էլ Ալ Գ մեկնարկը երկկողմ հարաբերություները չէր բարձրացնում նոր մակարդակի վրա, քանի որ դրանք շարունակվում էին կարգավորվել գործող համաձայնագրերով՝ ԳՅՅ-ներով, իսկ առավել հստակ ուղղորդվում էին ԵՅԲ ԳԾ-ներով: Այսինքն՝ Ալ Գ մեկնարկն ինքնին չէր ենթադրում ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական համագործակցության նոր փուլ, քանի դեռ շահառու երկրները չեն բավարարում ԱՅ-ների կնքման համար անհրաժեշտ պայմանները: Առևտրի ոլորտում Վրաստանը և Հայաստանը համապատասխանաբար 2005 թ. և 2006 թ. սկսած օգտվում են Արտոնությունների ընդհանրացված համակարգից (Generalised System of Preferences - GSP, հետագայում՝ GSP+), որը հնարավորություն էր տալիս հազարավոր անուն ապրանքներ (Հայաստանի դեպքում՝ 6400, Վրաստանի դեպքում՝ 7200) դեպի ԵՄ արտահանել գրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով [137]: Մոլդովան այս առումով ավելի սերտ համագործակցություն ուներ ԵՄ-ի հետ և 2008 թ. մարտից օգտվում էր Առևտրի ինքնավար արտոնություններից (Autonomous Trade Preferences - ATP), որոնք ի տարբերություն GSP+-ի՝ թույլ էին տալիս մոլդովական արտադրված

բոլոր ապրանքները (բացառությամբ որոշ գյուղատնտեսական արտադրանքների) առանց հարկերի և քվոտաների արտահանել դեպի ԵՄ: GSP+-ի պարագայում ևս ԵՄ-ն կիրառում էր փոխապայմանավորման որոշ գործիքներ՝ ժողովրդավարության ու մարդու իրավունքների ոլորտում առավել մեծ առաջընթաց գրանցած երկրներին տրամադրելով ավելի շատ արտոնություններ: Այսպիսով ԵՄ-ն փորձում էր Յայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի համար դառնալ հիմնական առևտրային գործընկերը, ինչը ևս կարող էր Էապես նպաստել ԵՄ արտաքին կառավարման խթանմանը:

Այնուամենայնիվ, ԵՄ-ն ԱԳ երկրների հետ առավել խորքային տնտեսական համագործակցության ծրագրեր ունի: Մասնավորապես՝ խոսքն ԱՅ-ների շրջանակներում գործող ԽՅԱԱԳ-ների մասին է, որոնք ապահովում են ապրանքների, ծառայությունների և կապիտալի երկկողմ ազատ տեղաշարժ: Յայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ ԱՅ-ների շուրջ բանակցությունները սկսվեցին 2010 թ., իսկ ԽՅԱԱԳ բաղադրիչը Վրաստանի և Մոլդովայի դեպքում ավելացավ 2011 թ. վերջին, Յայաստանի դեպքում՝ 2012 թ.: ԱՅ-ներով նախատեսվում էր խորացնել ԵՄ-ի և շահառու երկրների միջև առկա քաղաքական ու տնտեսական հարաբերությունները տարբեր ոլորտներում բարեփոխումների ու ԵՄ չափանիշներին մոտարկման հիման վրա: ԱԳ երկրների հետ ԱՅ-ները պետք է սահմանեին երկկողմ գործակցության երկարաժամկետ օրակարգ՝ ձգտելով բազմիցս նշված «առավել հավակնոտ գործընկերության» և ոչ ավանդական հաղորդակցման: Կարևոր է նշել, որ ԵՄ-ի և երրորդ երկրների միջև ԱՅ-ները բանակցվում և ստորագրվում են ԵՄ-ի և տվյալ պետության միջև, սակայն ուժի մեջ կարող են մտնել միայն ԵՄ բոլոր անդամ պետությունների և շահառու երկրների համապատասխան կառավարական օղակների (խորհրդարան, նախագահ և այլն), ինչպես նաև Եվրոպական խորհրդարանի հաստատումից հետո: Այս ընթացակարգն առաջին հայացքից ստեղծում է վտանգ, որ տվյալ պետության հետ հարաբերությունների խորացմամբ չհետաքրքրված անդամ երկրները կարող են դեմ քվեարկել ԱՅ-ի հաստատմանը: Այնուամենայնիվ, առկա փորձը ցույց է տալիս, որ նման դեպքեր հազվադեպ են լինում և ստորագրված ԱՅ-ները հաստատվում են բոլոր

կողմերից: ԱՅ-ներն իրավականորեն պարտավորեցնող փաստաթղթեր են, որոնք առաջարկում են երկկողմ համագործակցության նոր՝ ընդլայնված շրջանակ¹: ԱՅ-ների (ներառյալ՝ ԽՅԱԱԳ-ների) ստորագրմամբ շահառու երկրները ստանձնում են բազմաթիվ պարտավորություններ, որոնք կարող են թույլ չտալ համագործակցության համանման շրջանակներ հաստատել այլ ուժերի հետ: ԱՅ որակվելու համար երկկողմ փաստաթուղթը պետք է համապատասխանի որոշ չափանիշների, ինչպիսիք են սերտ տնտեսապաշարակալական հարաբերությունների հաստատման մտադրությունը, համագործակցության մշտադիտարկմամբ զբաղվող կառույցների ստեղծումը, «ընտրյալ պետության» (Most Favoured Nation) սկզբունքի² վրա կառուցված լինելը, մարդու իրավունքների ու ժողովրդավարական սկզբունքների նկատմամբ հարգանքը և այլն [148, 132]: Իհարկե, տարբեր պետությունների հետ կնքվող ԱՅ-ները կարող են բովանդակությամբ էապես տարբերվել՝ կախված ԵՄ-ի ու տվյալ պետության միջև հարաբերությունների առկա մակարդակից և ակնկալվող խորացումից: ԱՅ-ների միջոցով իրականացվում է համագործակցություն մի շարք ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը, էներգետիկ անվտանգությունը, տրանսպորտը, շրջակա միջավայրի պահպանությունը, առողջապահությունը, կրթությունը, երիտասարդական ծրագրերը և այլն: Որոշ դեպքերում ԱՅ-ն կարող է ներառել նաև համագործակցություն հակամարտությունների կարգավորման ոլորտում:

Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ բանակցվող ԱՅ-ների միջև թեև առկա են որոշ տարբերություններ, սակայն համագործակցության շրջանակը հիմնականում նույնն է՝ կառուցված ավելի շատ ԵՄ-ի համար երեք երկրների տնտեսական ու

¹ ԱՅ-ների մասին նշում արվել է դեռևս ԵՄ հիմնարար փաստաթղթերից մեկում՝ 1957 թ. Եվրոպական տնտեսական ընկերակցության ստեղծման մասին հռչակագրում, որը հայտնի է նաև Հռոմի հռչակագիր անվանմամբ [140]: Առաջին ԱՅ-ները ստորագրվել են Հունաստանի (1961 թ.) և Թուրքիայի (1963 թ.) հետ, սակայն ժամանակի ընթացքում ԵՄ-ի հետասոցացված երկրների շրջանակն ընդլայնվել է, և այսօր ավելի քան երկու տասնյակ երկրների ու ԵՄ-ի միջև գործում է ԱՅ:

² Այս սկզբունքը ենթադրում է, որ ԵՄ-ի կողմից տվյալ երկրին պետք է առաջարկվեն առևտրային համագործակցության՝ տվյալ պահին գոյություն ունեցող լավագույն պայմանները, ինչպիսին է մաքսատուրքերի վերացումը, օտարերկրյա ուղակի ներդրումների ավելացումը և այլն:

աշխարհաքաղաքական նշանակություն, այլ ոչ թե նախատեսվող գործակցություն իրականանալի ու զիտակցման վրա:

2011 թ. ԵՄ-ն ներկայացրեց ԵՅԲ վերանայված տարբերակը՝ երրորդ երկրների հետ հարաբերություններում ներմուծելով «ավելի նախապես սկզբունքը, որը ենթադրում էր, որ ԵՄ նորմերին հակված երկրները պետք է ԵՄ-ի կողմից ստանան առավել մեծ ֆինանսատեխնիկական ու խորհրդատվական աջակցություն քարտեզադրման երկրների իրականացման համար: Այս վերանայումը տեղ գտավ 2011 թ. մայիսին ԵՅ-ի և ԲՆ-ի կողմից հրապարակված «Նորարձագանք փոփոխվող հարևանությունը» վերտառությունից հաղորդագրությունում [119]: Այս տարբերակման դրսևորումներից է վիզաների դյուրացման մեխանիզմը, որը կքննարկվի աշխատանքի հետագա հատվածներում: Մինչդեռ ԱՅ-ների պարագայում նման ճկունություն գործնականում չէր կիրառվում, քանզի դրանք հիմնականում կրկնում էին միմյանց: Այնուամենայնիվ, ԱՅ-ներն առավել թույլ էին տալիս խուսափել մինչև ԱԳ հիմնումն առկա համահարթեցումից՝ առաջարկելով ընդլայնված ինտեգրման հնարավորություն: Այս պարագայում էլ, իհարկե, հեղինակազրկվում էր ԱԳ-ով նախատեսված «ավելի հավակնոտ գործընկերություն» տեսլականը, քանզի մասնակից ոչ բոլոր երկրների հետ էր հնարավոր դառնում քայլ առաջ կատարել հարաբերությունների առկա մակարդակից: Մասնավորապես՝ Բելառուսի պարագայում որևէ շոշափելի առաջընթաց չի արձանագրվել ԱԳ մեկնարկից սկսած:

2013 թ. հունիսին ավարտին էին հասցվել ԵՄ-Յայաստան ԱՅ-ի (ներառյալ ԽՅԱԱԳ-ն) շուրջ բանակցությունները, և նախատեսվում էր նույն թվականի նոյեմբերի 28-29-ին Վիլնյուսում կայանալիք ԱԳ երրորդ գագաթնաժողովին ստորագրել այն, սակայն մի քանի ամիս առաջ՝ սեպտեմբերի 3-ին, ՅՅ նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվայում հայտարարեց, որ Յայաստանը պատրաստվում է միանալ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի միջև գործող Մաքսային միությունը, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ) [142], ինչն անհամատեղելի էր ԵՄ-ի կողմից առաջարկվող ԽՅԱԱԳ-ի հետ: ՅՅ արտաքին քաղաքականությունում այս փոփոխու-

թյուրը, գուգորդվելով ԵՄ-ի կողմից ԱՅ-ի ամբողջականության պահպանման պահանջի¹ և անվտանգության երաշխիքներ ապահովելու անկարողության հետ, անհնար դարձրեց համաձայնագրի ստորագրումը: «Գլոբալ իզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն» հկ-ի ղեկավար, քաղաքագետ Ստեփան Գրիգորյանի դիտարկմամբ՝ Չայաստանը թեև հնարավորություն է չունենում Վիլյունսի գագաթնաժողովին կամ դրանից հետո ստորագրելու ԵՄ-ի հետ ԱՅ-ն, սակայն կարող էր Մաքսային Միությանը միանալու գործընթաց չսկսել, մինչդեռ հետագայում ԵԱՏՄ-ին միանալով ՌԴ-ի հետ կապեց և՛ առևտուրն ու տնտեսությունը, և՛ անվտանգությունը [173]: «Գոհացուցիչ է, որ ԱՅ-ն չստորագրվեց, սակայն հասկանում եմ, որ առկա է անվտանգության խնդիր և ՌԴ-ն մեր կարևոր գործընկերն է: Բայց ՌԴ-ին Չայաստանին չէր պարտադրում միանալ Մաքսային Միությանը, այլ պարզապես չստորագրել ԱՅ-ն» [173]: Քաղաքագետ Վահրամ Տեր-Մաթևոսյանը խնդրին այլ մոտեցում է ցուցաբերում՝ նշելով. «Չայաստանն ամենևին անվտանգության գործոնից ելնելով չէ, որ որոշեց միանալ Մաքսային Միությանը: Այստեղ տնտեսական գործոնն առավել էական նշանակություն ունենում, քանզի եվրասիական շուկայում Չայաստանն ավելի մրցունակ էր, քան եվրոպականում: Սակայն Չայաստանին ԵՄ-ն անհրաժեշտ է արժեքային փոփոխությունների համար» [174]: Անշուշտ, հնարավոր չէ ԵՄ-Չայաստան ԱՅ-ի չստորագրումն առնվազն մասամբ չպայմանավորել ՌԴ գործոնով: Ս. Գրիգորյանի դիտարկումը, թե Ռուսաստանի համար կարող էր բավարար լինել պարզապես Չայաստան-ԵՄ հարաբերությունների չխորացումը, վիճահարույց է, քանզի ՌԴ-ն տարածաշրջանում ունի սեփական ազդեցության բարձրացման խնդիր, իսկ ինտեգրացիոն ծրագրի, այս դեպքում՝ ԵԱՏՄ-ի, ընդլայնումը կարող է էական նպաստ բերել դրա լուծմանը: Միևնույն ժամանակ միայն մասամբ կարելի է համաձայնվել Վ. Տեր-Մաթևոսյանի պնդմանը, որ ԵԱՏՄ-ին միանալը

¹ Արտաքին քաղաքականությունում փոխընթացման սկզբունքի պահպանման նպատակով 2013 թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը հայտարարեց ԱՅ-ն առանց ԽՅԱԳ-ի ստորագրելու պատրաստակամության մասին, ինչին հետևեց Շտեֆան Ֆյուլլերի պատասխանն առ այն, որ Վիլյունսի գագաթնաժողովին ոչ մի փաստաթուղթ չի ստորագրվելու, քանզի համագործակցությունը պետք է հիմնվի առկա առաջընթացի վրա:

Հայաստանի համար առաջին հերթին տնտեսական կարևորություն ունեն: Հաշվի առնելով Ռուսաստանի տնտեսությունում առկա լուրջ խնդիրները, ինչպես նաև Բելառուսի ու Ղազախստանի հետ եղած հարաբերությունների (այդ թվում՝ առևտրատնտեսական) ցածր մակարդակը՝ Հայաստանն այնուամենայնիվ վճռականորեն սկսեց ու ավարտին հասցրեց ԵԱՏՄ անդամակցության գործընթացը, ինչն առաջնահերթ պայմանավորված Էր ՌԴ-ի հետարդեն իսկ խորը երկկողմ քաղաքական ու անվտանգային հարաբերություններով:

ԵՄ-ի կողմից դեպի Հայաստան սեփական նորմերի «արտահանման» այս մասնակի ձախողումը կարելի է բացատրել երկու հիմնական գործոնով: Նախ, ԵՄ-ի կողմից արդյունավետ արտաքին կառավարում իրականացնելու համար ոչ միայն անհրաժեշտ է, որ երրորդ երկիրը (այս դեպքում՝ Հայաստանը) նշանակալիորեն կախված լինի ԵՄ-ից, այլև որ ԵՄ-ից լինի ավելի կախյալ, քան կառավարման որևէ այլ աղբյուրից [49: 495]: Այս տեսանկյունից Ռուսաստանի հետ անվտանգային և սոցիալ-տնտեսական կապվածությունն էական կարևորություն ունի: Երկրորդ, ի տարբերություն Վրաստանի և Մոլդովայի՝ ԵՄ անդամակցությունը Հայաստանի արտաքին քաղաքական գերակայությունն է, ինչը որոշակիորեն նվազեցնում է ԵՄ-ի գրավչությունը: Այնուամենայնիվ, Վիլնյուսի գագաթնաժողովին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը հայտնել է հայկական կողմի պատրաստակամությունը «ԵՄ-ի հետ ձևավորել այնպիսի գործունե կառուցակարգեր, որոնք մի կողմից արտացոլում են մեր սոցիալ-քաղաքական և տնտեսական հարաբերությունների խորքային բնույթը, մյուս կողմից՝ համատեղելի են համագործակցության այլ ձևաչափերի հետ» [143]:

Ի տարբերություն Հայաստանի՝ Վրաստանը և Մոլդովան (ինչպես նաև Ուկրաինան) 2014 թ. ստորագրեցին ԱՀ-ներ, ինչն Ալ Գ վեց երկրների բաժանեցին երկու խմբի՝ ԱՀ-ն ստորագրած երկրներ (Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա) և չստորագրած երկրներ (Հայաստան, Ադրբեյջան, Բելառուս): Այնուամենայնիվ, այսպես կոչված, «ռազմավարական դադարից» հետո ԵՄ-ն որոշ քայլեր ձեռնարկեց հարևան երկրների հետ համագործակցության նախատեսված և իրական դրության միջև ճեղքվածքը նվազեցնելու ուղղությամբ, ինչը շոշափելի

ազդեցություն ունեցավ նաև Հայաստան-ԵՄ հարաբերությունների վրա: Հաշվի առնելով երրորդ երկրների հետ հարաբերությունների աստիճանաբար խորացող տարբերությունները, ԵՅ-ն և ԲՆ-ն 2015 թ. նոյեմբերին հրապարակեցին «ԵՅՔ վերանայում» հաղորդագրությունը [122], որը հավելյալ տարբերակում և ճկունություն պետք է հաղորդեր երկկողմ հարաբերություններին: Ըստ այդմ, նկատի ունենալով Հայաստանի կողմից ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացման պատրաստակամությունը նախկին առաջընթացը՝ 2015 թ. դեկտեմբերի 7-ին Եվրոպական հանձնաժողովը Հայաստանի հետ բանակցություններ սկսեց մեկ այլ շրջանակային փաստաթղթի՝ ՅԸԳՀ-ի շուրջ՝ հաշվի առնելով ԵԱՏՄ-ին միանալուց հետո Հայաստանի ստանձնած պարտավորություններին դրա համապատասխանությունը: ԵՄ ինտեգրացիոն քաղաքականությունում նման փոփոխությունն ամբողջապես համապատասխանում էր վերանայված ԵՅՔ-ի անկյունաքարային սկզբունքին՝ գործընկեր երկրների հետ առավել տարբերակված ու ճկուն հարաբերությունների հաստատմանը:

Փաստաթղթի շուրջ բանակցությունները տևեցին 15 ամիս և ամփոփվեցին 2017 թ. փետրվարին: ՅԸԳՀ-ն ստորագրվեց 2017 թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում՝ Ալ Գ 5-րդ գագաթնաժողովի ժամանակ, սակայն ուժի մեջ կմտնի բոլոր կողմերի (ՀՀ, ԵՄ անդամ պետություններ, Եվրոպական խորհրդարան) հաստատումից հետո և կփոխարինի ԵՄ-Հայաստան 1999 թ-ից գործող ԳՀՀ-ին: Այսպիսով Հայաստանը դարձավ ԵԱՏՄ անդամ առաջին երկիրը, որը շրջանակային համաձայնագիր ստորագրեց ԵՄ-ի հետ, և միևնույն ժամանակ՝ առաջին հաջողված օրինակը, երբ Ալ Գ շրջանակներում ԵՄ-ի հետ համագործակցությունն իրապես համապատասխանեցվեց տվյալ երկրի առանձնահատկություններին: ՅԸԳՀ-ի ստորագրմամբ, փաստորեն, իցույց դրվեց, որ ԵՄ-ի հետ համագործակցությունը պետք է կառուցվի ելնելով թիրախային երկրի շահերից ու հնարավորություններից, այլ ոչ թե ԵՄ-ի կողմից առաջարկվող պայմաններից: Այսպիսով Հայաստանը նաև դուրս եկավ Ալ Գ, այսպես կոչված, «հետնապահների»

շարքից՝ նախկին 3+3 բանաձևը փոխարինելով 3+1+2-ով¹: ՅԸԳՅ-ն Յայաստանին անհրաժեշտ էր նաև ԵՄ-ի հետ հարաբերություններին իրական մակարդակը պաշտոնապես ամրագրելու առումով, քանզի 1999 թ-ից գործող ԳՅՅ-ն իրավականորեն պարտադրող փաստաթուղթ չէր և չէր ենթադրում լուրջ քաղաքական համագործակցություններ կողմերի միջև, մինչդեռ ՅԸԳՅ-ն ներուսակ է խթանել Եական փոփոխություններ՝ շնորհիվ փոխապայմանավորման նշանակալի մակարդակի: Բացի այդ, ՅԸԳՅ-ն իրապես հավասարակշռված փաստաթուղթ է, որում հաշվի են առնվում ոչ միայն ԵՄ-ի ակնկալիքները գործընկեր պետությունից, այլև տարածաշրջանի աշխարհաքաղաքական դրությունը և դրանում տվյալ երկրի ապահով դիրքավորման կարևորությունը: Յարկ է նաև նշել, որ Ռուսաստանի կողմից ՅԸԳՅ-ն, ի տարբերություն ԱՅ-ի, չի ընկալվում որպես ԵՄ-ի միջամտում ռուսական գերակա շահերի գոտուսներ կու պատճառով: Նախ, ԵԱՏՄ-ին ՅՅ-ի անդամակցությամբ Ռուսաստանն արդեն իսկ ապահովագրել է իր գերակա դիրքը Յայաստանում, և ՅԸԳՅ-ն կարող է միայն լրացնել Յայաստանի արտաքին քաղաքական ու տնտեսական օրակարգը՝ չհակասելով ՌԴ շահերին: Երկրորդ, Յայաստան-ԵՄ հարաբերություններում առաջընթացը նպաստում է ԵԱՏՄ-ի հեղինակության բարձրացմանը՝ այն դարձնելով առավել բաց ու բազմաճյուղ:

ՅԸԳՅ-ում առանձնացվում են համագործակցության հինգ հիմնական ուղղություններ՝ [1] քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ, համագործակցություն արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում, [2] արդարադատություն, ազատություն և անվտանգություն, [3] տնտեսական համագործակցություն, [4] ոլորտային համագործակցություն և [5] առևտուր և հարակից ոլորտներ [110]: Յաջորդիվ կներկայացվեն քաղաքական ու առևտրատնտեսական հարաբերություններին շփումներին առնչվող հատվածները:

¹ Մինչև ՅԸԳՅ-ի ստորագրումն ԱԳ երկրներից երեքը՝ Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա, ստորագրել էին ԵՄ-ի հետ ԱՅ-ն, ևս երեքը՝ Յայաստան, Ադրբեջան, Բելառուս, շրջանակային փաստաթուղթ չէին ստորագրել: ՅԸԳՅ-ն, երբեմն բնութագրվելով որպես «թեթև առցացում», ԵՄ-ի հետ համագործակցության խորություն սպեկտրում Յայաստանին տվեց միջանկյալ կարգավիճակ: Յարկ է նշել, այնուամենայնիվ, որ 2016 թ. ԵՄ-ն Ադրբեջանի հետ ևս սկսել է համապարփակ համաձայնագրի շուրջ բանակցություններ [154]:

Քաղաքական երկխոսության հատվածը գրեթե չի տարբերվում նախկին ԱՅ-ից, քանզի այն որևէ կերպ չի հակասում ԵԱՏՄ-ին, իսկ տեքստը հիմնականում իրավականորեն չպարտադրող, դեկլարատիվ ու ընդհանրական բնույթի է: Համաձայնագրի քաղաքական բաղադրիչը չեզոք ու պակաս հավակնոտ է նաև այն առումով, որ ի տարբերություն Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ կնքված ԱՅ-ների՝ ՅԸԳՅ-ում որևէ ձևով չի նշվում Հայաստանի «եվրոպական ձգտումների» (ԵՄ-ին հնարավոր անդամակցության) մասին: Ինչպես արդեն նշվել է, ԵՄ-ին անդամակցության հեռանկարի բացակայությունը սովորաբար դիտարկվում է որպես ԵՅԶ-ի գլխավոր թերություն, ինչը որոշ պետությունների կողմից կարող է մեկնաբանվել որպես անբավարար փոխհատուցում ԵՄ-ին մոտարկման գործում իրենց կատարած աշխատանքի դիմաց: Այլ կերպ ասած՝ անդամակցության անհնարինությունը թուլացնում է ԱԳ-ի քաղաքական փոխադրման ավորումը, սակայն Հայաստանը երբևէ բացեիբաց չի հայտարարել ԵՄ-ին անդամակցելու ցանկության մասին, ուստի ԵՄ-ից ակնկալ իքներն այս առումով մեծ չեն: Այնուամենայնիվ, քաղաքական երկխոսության հատվածում առկա է որոշակի փոխադրման ավորում, քանզի նշվում է, որ քաղաքական արժեքների (Ժողովրդավարություն, լավ կառավարում, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն, դատական իշխանության անկախություն և այլն) պահպանումն ու իրագործումը համաձայնագրի առանցքային տարրեր են, որոնց խախտումը կարող է հանգեցնել համաձայնագրի չեղարկման [110: ք. 350-351]: Այնուամենայնիվ, չնայած տեքստի իրավական ուժին՝ ԵՄ-ն հազվադեպ է այս դրույթը գործնականում կիրառել [16]:

Արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում համագործակցությունը ևս Եական փոփոխություններ չի կրել ԵԱՏՄ-ին Հայաստանի մասնակցության արդյունքում: ՅԸԳՅ-ով նախատեսվում է առաջին անգամ Հայաստանի մասնակցությունն ԵՄ ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ԸԱՊՔ) շրջանակներում իրականացվող առաքելություններին [110: ք. 17], ինչը, զուգորդվելով նաև ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի առաքելություններին մասնակցությանը,

կարող են նպաստել Յայաստանի անվտանգային ոլորտի բազմազանեցմանը: ԶԸԳՅ-ի միջոցով նախատեսվում է նաև ԵՄ-ի ընդլայնված ներգրավվածությունն էներգետիկ անվտանգության, բնակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության, ռազմական կրթության, ճգնաժամային կառավարման, ահաբեկչության դեմ պայքարի, կիրառական անվտանգության և այլ ոլորտներում: Այնուամենայնիվ, ԵՄ-ի գլխավոր թերությունն շարունակում է մնալ գործընկեր երկրներում գերակա անվտանգային խնդիրների կարգավորմանը նպաստող գործիքների բացակայությունը: Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարագայում ևս ԵՄ-ն չունի միջամտության կիրառելի գործիքակազմ, ուստի ԶԸԳՅ-ն բավարարվում է նշելով, որ ԵՄ-ն աջակցում և լրացնում է ԵԱՅԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերը հակամարտության կարգավորման գործում [110: p. 17]: Այս մասին առավել մանրամասն կխոսվի աշխատանքի երրորդ գլխում:

Տնտեսական համագործակցության ու առևտրի հատվածները չեն ներառում ո՛չ ԽՌԱԱԳ, ո՛չ էլ սովորական ԱԱՀ, քանզի Յայաստանը մաքսային միության մեջ է ԵԱՏՄ անդամ պետությունների հետ: Այնուամենայնիվ, ԶԸԳՅ-ն ևս ներառում է Էապես ընդլայնված տնտեսական համագործակցություն ԵՄ-ի հետ: ԶԸԳՅ-ի միջոցով Յայաստանը չի ազատվում մաքսատուրքերից. ԵՄ-ից ներկրումները ենթակա են ԵԱՏՄ-ի կողմից սահմանված ստանդարտ արտաքին մաքսման՝ բացառությամբ 800 անուն ապրանքների, որոնց համար Յայաստանը մինչև 2022 թ. տարանցման ազատություն է ստացել [104]: Ինչ վերաբերում է դեպի ԵՄ արտահանումներին, ապա հայկական ապրանքները ևս ենթակա են մաքսման, սակայն ԶԸԳՅ-ի միջոցով Յայաստանը շարունակում է օգտվել «Արտոնությունների ընդհանրացված համակարգից»: Ընդ որում, GSP+ ռեժիմի միջոցով ԵՄ-ն կիրառում է որոշակի քաղաքական փոխադրման ավորում՝ Յայաստանից (ինչպես և ռեժիմից օգտվող բոլոր պետություններից) պահանջելով 27 միջազգային կոնվենցիաների իրագործում, որոնք վերաբերում են լավ կառավարման, մարդու իրավունքների, աշխատանքային ստանդարտների, բնապահպանության և այլ հարցերի [123]:

ՀԸԳՀ-ով սահմանված տնտեսական համագործակցության ամենահավակնոտ փոփոխությունը, թերևս, ծառայությունների ոլորտն է. նախատեսվում է փոխադարձ մուտք դեպի ծառայությունների շուկա, ինչպես նաև ԵՄ բազմաթիվ իրավական նորմերի տեղայնացում ՀՀ օրենսդրությունում: ՀԸԳՀ-ով նախատեսվում է նաև ԵՄ ընդհանուր օդային տարածքին Հայաստանի միանալու վերաբերյալ համաձայնագրի կնքում՝ նպատակ ունենալով խթանել զբոսաշրջությունը, ավելացնել աշխատատեղեր և այլն [110: p. 44]:

2014 թ. Վրաստանի և Մոլդովայի հետ ԱՀ-ների ստորագրումը դարձավ ԵՅԲ ԳԾ-ներում նշված «ընդլայնված գործընկերության» փաստացի դրսևորումը: Ինչպես Հայաստանի համար ՀԸԳՀ-ն, այնպես էլ Վրաստանի և Մոլդովայի համար ԱՀ-ները փոխարինեցին 1999 թ-ից գործող ԳՀՀ-ներին՝ Եապես խորացնելով ԵՄ-ի հետ հարաբերությունները: ԱՀ-ներն ուժի մեջ մտան համաձայնագրի բոլոր կողմերի հաստատումից հետո՝ 2016 թ. հունիսի 1-ին: Երկու երկրների հետ կնքված ԱՀ-ները գրեթե չեն տարբերվում բովանդակությամբ՝ առաջարկելով ԵՄ-ի հետ համագործակցության միանման շրջանակ [106, 107]:

ԵՄ-Վրաստան և ԵՄ-Մոլդովա ԱՀ-ներով նախատեսվում է համագործակցություն չորս հիմնական ոլորտներում՝ [1] քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ, համագործակցություն արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում, [2] ազատություն, անվտանգություն և արդարադատություն [3] տնտեսական համագործակցություն և [4] առևտուր և հարակից ոլորտներ: Հաջորդիվ հակիրճ կներկայացվեն քաղաքական ու առևտրատնտեսական համագործակցությանն առնչվող հատվածները:

Ինչպես ԵՄ-Հայաստան ՀԸԳՀ-ի, այնպես էլ Վրաստանի ու Մոլդովայի հետ կնքված ԱՀ-ների քաղաքական երկխոսության հատվածը բավականին ամորֆ է ձևակերպված և շեշտադրում է կատարում ժողովրդավարության ու մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վրա: Երկու ԱՀ-ներում էլ անդրադարձ է կատարվում սառեցված հակամարտություններին: ԵՄ-Վրաստան ԱՀ-ում նշվում է, որ կողմերի միջև քաղաքական երկխոսությունը նպատակ ունի

քաղաքական ասոցացման միջոցով անվտանգային միջավայր ստեղծել Վրաստանի բոլոր քաղաքացիների համար երկրի միջազգայնորեն ճանաչված սահմաններում [106: ր. 10]: ԵՄ-Մոլդովա ԱՀ-ի քաղաքական երկխոսության բաղադրիչի նպատակներում նշվում է ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության սկզբունքների նկատմամբ հարգանքը և սահմանների ու անկախության անխախտելիությունը [107: ր. 10]: Այս ձևակերպումները սակայն հստակորեն ցույց է տալիս ԵՄ դիրքորոշումն Աբխազիայի, Յվ. Օսիայի ու Մերձդնեստրի հակամարտությունների նկատմամբ:

Երկու ԱՀ-ներում էլ հղում է արվում Վրաստանի ու Մոլդովայի «եվրոպական ձգտումներին», սակայն որևէ կերպ անդրադարձ չի կատարվում կարճաժամկետ կամ միջնաժամկետ հեռանկարում ԵՄ-ին նրանց անդամակցությանը: 2015 թ. ԵՀՔ վերանայման նախնական փաստաթղթում մակերեսորեն նշվում է, որ գործընկեր երկրների կողմից առկա է համագործակցությունն ԱՀ-ից անդին տեղափոխելու ձգտում [121], սակայն որևէ կերպ չի ընդգծվում ԵՄ-ի դիրքորոշումն ԱլԳ երկրների անդամակցության հնարավորությունը: Որոշ հեղինակներ նույնիսկ գտնում են, որ ԵՄ-ն ԱՀ ստորագրած երկրների նկատմամբ առաջադրում է նույն պահանջները, ինչ ԵՄ անդամակցության թեկնածու երկրների նկատմամբ, սակայն փոխարենը չի առաջարկում անդամակցության հնարավորությունն՝ ԵՀՔ-ն դարձնելով «կիսաբաց դռան» քաղաքականություն [21: ր. 82]:

ԱՀ-ներով նաև նախատեսվում է սերտ համագործակցության արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում, ներառյալ երկու երկրների մասնակցությունն ԵՄ ԸԱՊՔ առաքելություններին՝ կենտրոնանալով հակամարտությունների կանխարգելման ու խաղաղ կարգավորման, ճգնաժամային կարավարման, տարածաշրջանային անվտանգության, զինաթափման, զենքի չտարածման և այլ խնդիրների վրա:

ԱՀ-ների առանցքային բաղադրիչն, այնուամենայնիվ, ԽՌԱԱԳ-ներն են, որոնք Վրաստանին և Մոլդովային հնարավորություն են տալիս աստիճանաբար ինտեգրվել ԵՄ ներքին շուկայում: ԽՌԱԱԳ-ները կենտրոնանում են համագործակցության երեք ասպեկտների վրա՝ 1) փոխադարձ շուկայական մուտք և ապրանքների առևտրի, ծառա-

յուր թյուր ներքին մատուցման ու ներդրումների հոսքի նկատմամբ գրեթե բոլոր մաքսատուրքերի վերացում¹, 2) կանոնակարգային համապատասխանեցումների արդյունքում ոչ մաքսային խոչընդոտների վերացում և 3) վեճերի լուծման մեխանիզմների ներդրում (օրինակ՝ մտավոր սեփականության հետ կապված վեճեր) [21: p. 83]: Թեև մինչև ԽՅԱԱԳ-ների ներմուծումը գործող GSP+ ռեժիմը ևս Վրաստանին ու Մոլդովային ընձեռում էր միակողմանի արտոնյալ մուտք դեպի ԵՄ շուկա, սակայն այն չէր վերացնում ոչ մաքսային խոչընդոտները՝ պայմանավորված իրավական կարգավորումների անհամապատասխանությամբ [21: p. 83]:

ԵՄ-Վրաստան և ԵՄ-Մոլդովա ԱԶ-ները թեև սահմանում են երկարաժամկետ համագործակցության օրակարգ, սակայն դրանցով նախատեսվող ինտեգրումը գործընթաց է, որը կարող է ենթարկվել էական փոփոխության ընդհուպ մինչև չեղարկում՝ կախված պլանավորված գործողությունների իրականացումից: Դրանք հիմնականում ներառում են Վրաստանի և Մոլդովայի օրենսդրական մոտարկում ԵՄ չափանիշներին և դրանց իրականացմամբ ու վերահսկմամբ զբաղվող ինստիտուտների ստեղծում: Ընդ որում, այստեղ առկա է ԵՄ կողմից փոխպայմանավորման սկզբունքի կիրառման համեմատաբար լայն դաշտ, քանզի ի տարբերություն, օրինակ, Ուկրաինայի և Ադրբեյջանի՝ Վրաստանը և Մոլդովան նվազ տնտեսական կարևորություն ունեն ԵՄ-ի համար: Ուստի վերջիններիս հետ ազատ առևտրի գոտու հաստատումն առավել ապես պայմանավորված է ոչ թե ԵՄ-ի համար տնտեսական շահավետությամբ, այլ քաղաքական գործոններով [100]: ԱԶ-ների ստորագրմամբ Վրաստանն ու Մոլդովան ինստիտուցիոնալ մակարդակում վերջնականապես հստակեցրին իրենց արտաքին քաղաքական կողմնորոշումը, ինչը եթե Վրաստանի պարագայում դարձել էր միակ ճանապարհը, այլ Մոլդովայի դեպքում առաջացնում է ներքին բաժանումներ թե՛ քաղաքական, թե՛ հասարակական շրջանակներում:

ԵՄ-ԱլԳ երկրներ քաղաքական երկխոսության կարևոր բաղադրիչ է նաև վիզաների ազատականացումը, որը ներառված է ԱլԳ չորս

¹ Մարդկանց ազատ տեղաշարժը կարգավորվում է ԱԶ-ների միջմարդկային շփումների բաղադրիչով:

թեմատիկ ալտաֆորմերից մեկում՝ միջմարդկային շփումներում (people-to-people contacts): Վերջինս եղել է ԵՄ-ի կողմից փոխալսման և տարբերակման սկզբունքների կիրառման լծակներից մեկը: ԵՄ-ն դեպի սեփական տարածք ԱԳ երկրների քաղաքացիների մուտքի դյուրացումը կիրառել է որպես այդ երկրներում քաղաքական և իրավական փոփոխությունների խթանման գործիք: Ըստ այդմ, հիմք ընդունելով ԵՅՔ ԳԾ-ների իրականացման առաջընթացը՝ ԵՄ-ն Հայաստանի հետ «Շարժունակության շուրջ գործընկերություն» (Mobility Partnerships) համատեղ հռչակագիր Մոլդովայի հետ ստորագրել է 2008 թ., Վրաստանի հետ՝ 2009 թ., իսկ Հայաստանի հետ՝ 2011 թ. [155], այսինքն՝ նույնիսկ մինչև ԱՅ-ների շուրջ բանակցությունների մեկնարկը, իսկ Մոլդովայի պարագայում՝ մինչև ԱԳ հիմնումը: Այս հռչակագրերով նախատեսվում էր ԵՄ-ի հետ փոխգործակցության և մասնագիտական վերապատրաստումների միջոցով Հայաստանում ներդնել անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի կառավարման մեխանիզմներ, ՀՀ քաղաքացիների համար հնարավորություն ստեղծել ուսման, աշխատանքի և այլ նպատակներով օրինական բնակվել ԵՄ տարածքում և այլն:

Այս ոլորտում համագործակցության հաջորդ քայլը եղավ Վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրերի (Visa Facilitation and Readmission Agreements) կնքումը, որոնցով պարզեցվում էր դեպի Շենգեն գոտու երկրներ մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացը շահառու երկրների քաղաքացիների որոշ խմբերի համար, իսկ փոխադարձ տարածքներում անօրինական բնակված և վտարված անձինք վերադարձի հնարավորություն էին ստանում: Այս համաձայնագրերը Մոլդովայի հետ կնքվեցին 2007 թ.¹, Վրաստանի հետ՝ 2011 թ.: Հայաստանի հետ երկու համաձայնագրերը համապատասխանաբար ստորագրվեցին 2012 և 2013 թթ., սակայն ուժի մեջ մտան 2014 թ. հունվարին [155]: Այնուամենայնիվ, դժվար է պնդել, որ այս համաձայնագրերն իրավաքաղաքական բարեփոխումների արդյունավետ խթան են, քանզի դրանք ստորագրվել են ոչ միայն Հայաստանի,

¹ Վիզաների դյուրացման համաձայնագրի լրամշակված տարբերակն ուժի մեջ է մտել 2013 թ.:

Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի, այլ և Ադրբեջանի, իսկ «Շարժունակության շուրջ գործընկերություն» հռչակագիրը՝ նաև Բելառուսի հետ, որոնք ակնհայտորեն միտված չեն սեփական երկրներում բարեփոխումների իրականացմանը: Այլ կերպասած, ԵՄ-ն «պարզևատրել» է նույնիսկ իր պահանջներին մասամբ համապատասխանող կամ ընդհանրապես չհամապատասխանող երկրներին: Սա, թերևս, կարելի է բացատրել նրանով, որ ԵՄ-ի կողմից առաջարկվող պայմանները ոչ թե քաղաքական, այլ տեխնիկական բնույթի են: Այսինքն՝ դեպի ԵՄ երկրներ մուտքի դյուրացումը տրամադրվում է ոչ թե ի պատասխան գործընկեր երկրներում քաղաքական բարեփոխումների, այլ միգրացիայի կառավարման արդյունավետ մեխանիզմների առկայության պարագայում [82: p. 147]: Բացի այդ, այդ համաձայնագրերն առավելապես նպատակ ունեն վերադարձնել ԵՄ տարածքում բնակվող անօրինական ներգաղթյալներին, այլ ոչ թե խթանել գործընկեր երկրների քաղաքացիների օրինական միգրացիան [82: p. 147]:

ԵՄ քաղաքական փոխպայմանավորումն առավել նկատելի դարձան վիզաների ազատականացման գործողությունների ծրագրերի միջոցով (ՎԱԳԾ), որոնց իրականացման պարագայում ԱԳ երկրների՝ կենսաչափական անձնագիր ունեցող քաղաքացիները կկարողանային առանց մուտքի արտոնագրի կարճաժամկետ ուղևորություններ կատարել դեպի Շենգեն գոտի: Եվրոպական հանձնաժողովը Մոլդովային ՎԱԳԾ ներկայացրեց 2011 թ., իսկ Վրաստանին՝ 2013 թ. [161]: ԵՂ-ն 2013 թ. դեկտեմբերին հաստատեց Մոլդովայի կողմից ՎԱԳԾ-ով սահմանված գործողությունների կատարումը, իսկ 2014 թ. ապրիլի 28-ից Մոլդովայի քաղաքացիները սկսեցին դեպի Շենգեն երկրներ ճանապարհորդել առանց մուտքի արտոնագրի: 2014 թ. ապրիլի 28-ից մինչև 2017 թ. ապրիլի 25-ը վիզաների ազատականացման ռեժիմի պայմաններում Մոլդովայի 980,000 քաղաքացի ավելի քան 2,700,000 ուղևորություն է կատարել դեպի ԵՄ անդամ երկրներ [127: p. 18]: Վրաստանի համար վիզաների ազատականացման ռեժիմն ուժի մեջ է մտել 2017 թ. մարտի 28-ից, և մինչև նույն թվականի նոյեմբերի 30-ը Վրաստանի 173,396 քաղաքացի առանց վիզայի չվերթներ է կատարել դեպի Շենգեն երկրներ [127: p. 23]: Չարկ է, այնուամենայնիվ, նշել, որ

վիզաների ազատականացումը ևս քաղաքական փոխապայմանավորման կիրառման կարևոր գործիք է ԵՄ-ի համար: 2013 թ. ընդունելով Երրորդ քաղաքացիների մուտքը դեպի ԵՄ երկրներ կարգավորող փաստաթուղթը [138]՝ ԵՄ-ն ներմուծեց վիզաների կասեցման մեխանիզմը, ինչը թույլ է տալիս առանց վիզաների ուղևորության ռեժիմի շահագործման պարագայում տվյալ երկրին որոշակի ժամանակով զրկել դրանից օգտվելու հնարավորությունից: 2016 թ. սեպտեմբերին ԶԶ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնապես ԵՄ-ից հայցեց վիզաների ազատականացման երկխոսության բացում, սակայն ԵՄ-ի կողմից դրական արձագանք չստացվեց: ԶԸԳԶ-ում միայն մակերեսորեն նշվում է, որ միջմարդկային շփումները պետք է խթանվեն արդեն իսկ կնքված փաստաթղթերի շրջանակներում, իսկ վիզաների ազատականացման շուրջ երկխոսությունը կարող է դիտարկվել միայն գործող համաձայնագրերի արդյունավետ իրագործման պարագայում [110: p. 26]: Այնուամենայնիվ, կարծում ենք՝ ԶԸԳԶ-ն, լինելով հավակնոտ փաստաթուղթ, այնուամենայնիվ, չի կարող համարվել ԶԶ-ԵՄ համագործակցության սահման, այլ պարզապես «անցումային գործարք», որը կարող է առաջիկա մի քանի տարվա ընթացքում վերանայվել և ենթարկվել էական փոփոխությունների: Մասնավորապես՝ առաջիկա հինգ տարիների ընթացքում ԵՄ-ն պետք է Զայաստանի հետ սկսի վիզաների ազատականացման երկխոսություն, քանզի այն անմիջական կապ չունի ԵՄ-ի հետ քաղաքական ասոցացման հետ և կարող է առաջարկվել երկկողմ հարաբերությունների առկա մակարդակում, հատկապես որ ԶԶ-ԵՄ համագործակցությունն այսօր ավելի բարձր աստիճանի վրա է, քան Վրաստան-ԵՄ և Մոլդովա-ԵՄ հարաբերություններն այս երկրներին ՎԱԳԾ-ների ներկայացման ժամանակ:

2.3. Զայաստանում, Վրաստանում և Մոլդովայում «Արևելյան գործընկերության» իրականացման վրա ազդող գործոնները

Զայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ԱլԳ-ի իրականացման վրա ազդող հիմնական գործոններից է եղել

Ռուսաստանի մոտեցումը դրա նկատմամբ: Ինչպես բազմիցս քննարկվել է, ԵՄ ինտեգրացիոն մոդելը հիմնված է սեփական գրավչության ուժի տարածման վրա, մինչդեռ ՌԴ վարած ինտեգրացիոն քաղաքականությունն էապես տարբերվում է: ԽՍՀՄ անկումից հետո Ռուսաստանը նորանկախ պետություններին դեռևս դիտարկում էր որպես իր ազդեցության գոտի՝ պամանավորված իրենից այդ պետությունների էներգետիկ կախվածությամբ, առկա հակամարտություններում էական ներգրավմամբ, Ռուսաստանում այդ երկրների ներգաղթյալ աշխատողների մեծ թվով և, անշուշտ, պատմական կապվածությամբ: Հիմնվելով այս մոտեցման վրա՝ Ռուսաստանը նվազ չափով է օգտվել ԱՊՀ կազմակերպական ներուժից և փոխարենն առանձին երկրների հետ հաստատել երկկողմ հարաբերություններ: Միևնույն ժամանակ, Ռուսաստանն իր արտաքին քաղաքականությունում ի զորու է կիրառել ավելի լայն գործիքակազմ [96: p. 929]՝ տնտեսական խթանիչներից մինչև կոշտ ուժ, քան ԵՄ-ն, որը ստիպված է սահմանափակվել իր իսկ հռչակված նորմատիվությամբ և բացառել ռազմական միջամտությունները:

Այնուամենայնիվ, Ռուսաստանի մոտեցումն առանձին երկրներին եվրոպականացման օրակարգին մեծապես պայմանավորված է ԵՄ-ի հետ տվյալ պետության հարաբերությունների սերտության աստիճանով: Որքան ընդլայնված ու շոշափելի է ԵՄ-ի հետ ինստիտուցիոնալ ինտեգրումը, այնքան սպառնալից այն կարող է ընկալվել Ռուսաստանի կողմից՝ հանգեցնելով առավել զորեղ հակազդեցության [50: p. 467]: Ընդ որում, Ռուսաստանի կողմից հետխորհրդային երկրները սովորաբար ընկալվում են որպես ինքնին սեփական ազդեցության գոտի, և այդ երկրներին իր կողմը գրավելու որևէ քայլ ձեռնարկվում է միայն արտաքին միջամտության, այս դեպքում՝ ԵՄ ներգրավմանն ի պատասխան: Ծայրահեղ իրավիճակներում Ռուսաստանն անգամ կարող է անվտանգ այնացնել կոնկրետ երկրներ և ռազմական միջամտության ճանապարհով լուծել իր արտաքին քաղաքական խնդիրները: Եթե ոչ Վրաստանի, ապա Հայաստանի և Մոլդովայի պարագայում Ռուսաստանը սեփական ռազմական կայանների միջոցով կարող է թե՛ պաշտպանել երկու երկրների անվտանգությունը, թե՛ ստեղծել նոր վտանգներ: Մասնավորապես՝ Հայաստանի

անդամակցությանը ՀԱՊԿ-ին և փաստաթղթերով ամրագրված երկկողմ ռազմավարական հարաբերությանը կարող են Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում Հայաստանի համար անվտանգության երաշխիքներ ապահովել, մինչդեռ Ռուսաստանի կողմից Ադրբեյջանին զենքի վաճառքը կարող է սպառնալիք լինել Հայաստանի համար: Թե՛ Հայաստանի, թե՛ Մոլդովայի պարագայում ՌԴ-ի գլխավոր գործիքներից է վերջիններիս Էներգետիկ կախվածությունը: Մասնավորապես՝ Հայաստանի դեպքում գազաբաշխիչ ցանցը պատկանում է ռուսական «Գազպրոմ» ընկերությանը, ինչի արդյունքում, օրինակ, իրանական գազի միջոցով ոլորտի բազմազանեցումն անիրատեսական է:

ՌԴ կոշտուժն, անշուշտ, առավել ցայտուն դրսևորվեց Վրաստանի հետ 2008 թ. օգոստոսյան պատերազմում, սակայն մինչ այդ ևս՝ 2006 թ., առևտրային սահմանափակումներ էին մտցվել վրացական գինիների ու ջրի նկատմամբ, և բազմաթիվ վրաստանցի ներգաղթյալներ վտարվել էին Ռուսաստանից: ԱլԳ Վիլնյուսի գազաթնաժողովի նախորդին ՌԴ-ն փորձեց հետ պահել Վրաստանին ԵՄ-ի հետ ԱՀ-ի ստորագրման շուրջ որոշում կայացնելուց՝ որպես հիմնական գործիք կիրառելով 1994 թ. գործող ազատ առևտրի համաձայնագիրը և Աբխազիայի ու Հվ. Օսիայի՝ Վրաստանի հետ ունեցած վարչական սահմաններին պատնեշների կառուցումը [47: p. 6]: Գազաթնաժողովից առաջ՝ 2013 թ. սեպտեմբերին, Մոլդովան ևս ենթարկվեց ռուսական սահմանափակումների դեպի ՌԴ գինու արտահանման հարցում, իսկ ավելի ուշ՝ 2014 թ. փետրվարին ՌԴ աջակցությամբ Գազաուզիայում (թրքախոսներով և ռուսախոսներով բնակեցված ինքնավար շրջան Մոլդովայում) կազմակերպվեց ԵՄ ինտեգրման և Եվրասիական Մաքսային Միության (ԵՄՄ) շուրջ հանրաքվե, որին մասնակցածների 98%-ի քվեարկել էին վերջինին միանալու օգտին [70: p. 2]: Վիլնյուսի գազաթնաժողովից առաջ ԵՄՄ-ին միանալու վերաբերյալ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հայտարարությունը և Վրաստանի ու Մոլդովայի նկատմամբ ռուսական քայլերն այնքան նշանակալի էին, որ դրանց հետևեց անգամ Շտեֆան Ֆյուլլերի հայտարարությունն առայն, որ «ԵՄ որոշ արևելյան հարևանների նկատմամբ ահռելի ճնշում է գործադրվում»: Մասնավորապես, Ֆյուլլերն նշեց. «ԵԱՏՄ նախագծի

զարգացումները պետք է հարգեն մեր գործընկերների ինքնուրույն որոշումները: ԵՄ-ի հետ համաձայնագրերի հնարավոր ստորագրման շուրջ Ռուսաստանի կողմից ցանկացած սպառնալիք անընդունելի է» [158]:

Ունենալով անհամեմատ ավելի մեծ ռազմական ու տնտեսական պոտենցիալ և ԵՄ-ի կողմից որևէ դիմադրություն չստանալով՝ ներկայումս Ռուսաստանը հեշտությամբ կառավարում է ներքին զարգացումներն Աբխազիայում ու Յվ. Օսիայում՝ փաստացի դրանք պահելով իր վերահսկողության տակ, հատկապես որ երկու տարածքների բնակիչները ստանում են ՌԴ քաղաքացիություն: Յարկ է նշել, այնուամենայնիվ, որ ՌԴ-Վրաստան հարաբերությունների նման լարումն էլ ավելի միավորեց վրացական հասարակությանն ու քաղաքական ուժերին (թե՛ իշխանությանը, թե՛ ընդդիմությանը) եվրոպական ինտեգրման գաղափարի շուրջ: Ի տարբերություն Վրաստանի՝ Յայաստանում և Մոլդովայում, ավելի կոնկրետ՝ Գյումրիում և Մերձդնեստրում, ռուսական զորքերի առկայությունը չի նպաստել երկու երկրներում եվրոպական ինտեգրման դիրքերի ամրապնդմանը, քանզի ՌԴ ռազմական ներկայությունը չի ընկալվել որպես անմիջական անվտանգային սպառնալիք, ավելի ընդհանուր Յայաստանում դրանք իրականացնում են խաղաղապահ գործառնություններ՝ վերահսկելով հայ-թուրքական փակ սահմանը:

Կոշտ ու ժիկիրառման հետ մեկտեղ ՌԴ-ն որոշ հետխորհրդային երկրների հետ հարաբերություններում ներմուծել է ինստիտուցիոնալ շրջանակ՝ ի դեմ ԵՄՄ-ի, որն, ըստ էության, Ռուսաստանի նորմատիվ պատասխանն էր ԱլԳ-ին: ԵՄ հարևանության քաղաքականությունից ծագող զարգացումները հաճախ չեն համընկել ՌԴ շահերի ու մոտեցումների հետ, ինչին վերջինս հակադարձել է մրցակից այլ ընտրանքային ինտեգրացիոն կառույց ստեղծելով: ԵՄՄ-ի ստեղծման պայմանագիրը ստորագրվել է Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի միջև 2007 թ. հոկտեմբերի 6-ին և աստիճանաբար ձևավորվելով՝ 2015 թ. հունվարի 1-ից վերակազմակերպվել է ԵԱՏՄ-ի: Ռուսաստանի կողմից ԵԱՏՄ-ն ընկալվում էր որպես երկարաժամկետ ծրագիր, որը ընդգրկուն և հեռանկարային ինտեգրացիայի միջոցով պետք է ամրապնդեր

հետխորհրդային երկրների միջև կապերը: Այլ կերպ ասած, ԵԱՏՄ-ն նախաձեռնություններ էր, որը հիմնվում է հետխորհրդային ժառանգության ու կապերի վրա՝ միևնույն ժամանակ դրանք համապատասխանեցնելով ներկային և նպաստում ընդհանուր ապագայի կերտմանը [146]: Այսպիսով ՌԴ-ն ցույց տվեց, որ իր արտաքին քաղաքականությունը հիմնվում է ոչ միայն Եներգետիկ կախվածության կամ ռազմական ուժի, այլև ինստիտուցիոնալ սկզբունքների վրա: Այլ կերպ ասած, Ռուսաստանը մտավ այն դաշտը, որտեղ մինչ այդ ԵՄ-ն մենիշխանություններ ուներ [52: p.9]:

Էմերսոնն ու Կոստանյանն իրենց 2013 թ. հրապարակումում [54] առաջարկել էին ԵՄ-Ռուսաստան աշխարհաքաղաքական մրցակցության հարթման բազմակողմանիորեն շահավետ տարբերակ: Մասնավորապես՝ նրանք գտնում էին, որ Ռուսաստանը կարող է «բարձրորակ» ազատ առևտրի համաձայնագրեր ստորագրել այն երկրների հետ, որոնք միաժամանակ ցանկանում են ԽՅԱԱԳ-ի մեջ լինել ԵՄ-ի հետ, իսկ հետագայում՝ նաև ազատ առևտրի համաձայնագիր բանակցել ԵՄ-ի և ԵՄՄ-ի միջև, ինչը թույլ կտա խուսափել գրոյական գումարով խաղից: Այնուամենայնիվ, հաշվի առնելով երկու կողմերի տարամետ արտաքին քաղաքական մոտեցումները՝ այս առաջարկները կիրառելի չէին անգամ 2013 թ-ին, իսկ 2014 թ. սկսված ուկրաինական ճգնաժամը ներկայում չափազանց նեղացրել է ԵՄ-ՌԴ երկխոսության դաշտն ու ԱԳ երկրներին կանգնեցրել աշխարհաքաղաքական երկընտրանքի առջև, որի շուրջ էլ մասնատվել են վերջիններիս դիրքորոշումները:

ԱԳ իրականացման վրա ազդող և սովորաբար դրա գրավչությունը նվազեցնող գործոններից է ԵՄ-ի անկարողությունը նպաստելու գործընկեր պետություններում հակամարտությունների կարգավորմանը: ԵՄ-ի կողմից փափուկ ուժի անբավարար կիրառումը և կոշտ ուժի ռեսուրսների բացակայությունն ԱԳ-ին մասնակցող երկրներին թույլ չի տվել սեփական անվտանգային խնդիրների լուծումը կապել ԵՄ-ի հետ: Չնայած նրան, որ 2003 թ. ընդունված ԵԱՌ-ով տարածաշրջանային հակամարտություններն ու «ձախողված պետությունները» սահմանվում են որպես ԵՄ արտաքին քաղաքական հիմնական

սպառնալիքներ ու մարտահրավերներ [128]՝ Արցախի, Աբխազիայի ու Յվ. Օսիայի և Մերձդնեստրի հակամարտության ու ներքում ԵՄ-ն խիստ սահմանափակ ներգրավվածություն է ունեցել :

ԵՄ-Յայ աստան 2006 թ. ԵՅԲ գործողությունների ծրագրով (ԳԾ) և ԵՄ-Յայ աստան 2017 թ. ստորագրված ՅԸԳՅ-ով նախատեսվում է ԵՄ-ի ակտիվ մասնակցություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը ինչպես ԵԱՀԿ-ի հետ սերտ համագործակցության, այնպես էլ հետագա ավելի խորը ներգրավվածության միջոցով [129: ր. 9, 110: ր. 17], սակայն ԵՄ-ն ուղղակիորեն ներկայացված չէ ԵԱՀԿ Մինսկի խմբում: ԵՄ-ն հակամարտության շուրջ բանակցություններին փորձել է ներգրավել Յվ. Կովկասում իր հատուկ ներկայացուցչի միջոցով, սակայն վերջինիս մասնակցությունը գործընթացին սահմանափակ է եղել [56: ր. 184]:

ԵՄ թույլ ներգրավվածության հիմքում ընկած է երկու հիմնական գործոն: Նախ, Յայ աստանի սերտ կապվածությունը Ռուսաստանի հետ ռազմական ոլորտում սահմանափակում է հակամարտության կարգավորմանը մասնակցելու ԵՄ-ի ներուժը: Երկրորդ, ԼՂ հակամարտության մյուս կողմն Ադրբեջանն է, որը ևս ներառված է ԵՅԲ-ում, ինչն իր հերթին նեղացնում է ԵՄ-ի գործողությունների շրջանակը: Վրաստանի ու Մոլդովայի պարագայում հակամարտության մյուս կողմն առնվազն անուղղակիորեն Ռուսաստանն է, ինչը թույլ է տալիս ԵՄ-ին պաշտպանել ԵՅԲ երկրների շահերը, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի պարագայում միակողմանիությունը կդիտվի որպես անհավասար մոտեցում գործընկերների նկատմամբ, ինչը կարող է հանգեցնել երկրներից մեկում ԵՄ-ի լեգիտիմության կտրուկ անկման: Նման իրավիճակում ԵՄ-ն գերադասում է Յայ աստանի ու Ադրբեջանի հետ իր հարաբերություններում շրջանցել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը և կենտրոնանալ ժողովրդավարացման ու մարդու իրավունքների վրա: Լ. Սիմաոն նշում է, որ ԵՄ-ն անգամ չի էլ փորձել երկխոսության մեջ մտնել Լեռնային Ղարաբաղի փաստացի իշխանությունների կամ առնվազն հասարակության որոշ խմբերի հետ, ինչը կարող էր նպաստել կարգավորման գործընթացին [93: ր. 198]:

2003 թ. Վարդերի հեղափոխության արդյունքում իշխանության գալուց հետո Միխեիլ Սասնաչվիլին եվրաինտեգրումը հայ տարածք Վրաստանի արտաքին քաղաքական գերակա ուղղությունն էր, իսկ Ռուսաստանի աջակցությունն Աբխազիային ու Յվ. Օսիային ընկալվում էր՝ որպես Վրաստանի ինքնիշխանության սպառնալիք: Նման զարգացումները Վրաստանը դարձրեցին ԵՄ-ի հենասյունը Յվ. Կովկասում, իսկ Աբխազիային ու Յվ. Օսիային հարցում ԵՄ-ն ավելի հստակ դիրքորոշում որդեգրեց: ԵՄ-Վրաստան ԳԾ-ում նշվում է, որ ԵՄ-ն պատրաստ է շարունակել աջակցել Վրաստանի ներքին խնդիրների կարգավորմանը՝ ինչպես ԵԱՀԿ-ի հետ սերտ համագործակցության, այնպես էլ հետագա ավելի խորը ներգրավվածության միջոցով [106]: Բացի այդ, ԵՄ-ն նախատեսում էր միջամտել կարգավորման գործընթացին՝ հիմնվելով Վրաստանի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության սկզբունքների վրա: Իսկ 2008 թ. հնգօրյա պատերազմից հետո՝ 2008 թ. հոկտեմբերին Եվրոպական խորհուրդն արտահերթ հանդիպման արդյունքում պատրաստեց եզրակացությունների փաստաթուղթ, որում նշվում է. «Եվրոպական խորհուրդը դատապարտում է Ռուսաստանի միակողմանի որոշումը՝ ճանաչել Աբխազիային ու Յվ. Օսիային անկախությունը: Այդ որոշումն անընդունելի է, և Եվրոպական խորհուրդը կոչ է անում այլ պետություններին չճանաչել այդ անկախությունը» [112: ք. 2]: Նույն փաստաթղթում նաև կոչ է արվում Ռուսաստանին դուրս հանել սեփական զորքերը Վրաստանի տարածքից [112: ք. 3]: Նման հայտարարություններն ակնհայտորեն ցույց էին տալիս ԵՄ-ի աջակցությունը Վրաստանին, ինչը վերջինիս դնում էր շատ ավելի շահեկան վիճակում, քան Յայաստանը Լեռնային Ղարաբաղի հարցում: Յետագայում ԵՄ-ն նաև Եվրոպական անվտանգության և պաշտպանական քաղաքականության շրջանակներում փաստազանց ամառներում ուղարկեց Վրաստան, ինչը երբևէ չի կիրառվել Լեռնային Ղարաբաղի պարագայում: Աբխազիայում ու Յվ. Օսիայում հակամարտությունների լարումը ԵՄ-ին նաև դրդեց ընդլայնել ներգրավվածությունը հետխորհրդային տարածքում, ինչի արդյունքում ԵՅԹ-ի հիմքի վրա ստեղծվեց ԱԳ-ն, որը թեև կրկին ԵՄ-ին հնարավորություն էր տալիս ուղղակիորեն ազդեցություն ունենալ հակամարտությունների կարգավորման

վրա, սակայն ապահովում էր ավելի ընդգրկուն գործիքակազմ «փափուկ ու ժ» (քաղաքացիական հասարակության ակտիվացում, վիզայի ազատականացում և այլն) կիրառելու համար: Բացի այդ, Վրաստանն իր ռազմական պաշտպանության հարցում մեծապես հիմնվում էր ԱՄՆ-ի աջակցության վրա, ինչը որևէ կերպ չի խանգարում Վրաստանում ԵՄ ներգրավվածությանը, քանզի այստեղ եվրոպականացումն ու արևմտականացումը գրեթե ամբողջությամբ համընկնում են [55: p. 7]: Վրաստանի դեպքում հակամարտությանն են ներկայացնում իր հստակ դիրքորոշման շնորհիվ ԵՄ-ն փոխապայմանավորման սկզբունքի կիրառման ավելի մեծ դաշտ ունի և կարող է անմիջականորեն կապի մեջ մտնել հակամարտող կողմերի հետ, ինչն էապես ընդլայնում է ԵՄ ներգրավվածությունը կարգավորման գործում:

Մոլդովայի պարագայում ԵՄ ներգրավվածությունը շատ ավելի տեսանելի է: Ունենալով հստակ դիրքորոշում Մերձդնեստրի հակամարտության հարցում, այն է՝ Մոլդովայի տարածքային ամբողջականությանն աներկբա աջակցություն, ԵՄ-ն անգամ մինչև ԵՅԶ-ի մեկնարկը որոշ «կարգապահական» միջոցներ էր կիրառել Մերձդնեստրի նկատմամբ [108]: Մասնավորապես՝ հակամարտության կարգավորման գործում Մոլդովայի հետ համագործակցության բացակայության հիմնավորմամբ 2003 թ. ԵՄ-ն Մերձդնեստրի նկատմամբ սահմանել էր դեպի ԵՄ ճանապարհորդության արգելք¹: Նման միջոցների երկրորդ խումբը կիրառվեց 2004 թ. Մերձդնեստրում լատինատառ մոլդովական դաբոցների դեմ պայքար ծավալած անձանց նկատմամբ [82: p. 159]: 2005 թ. ԵՄ-ն միացավ բանակցությունների «5+2» ձևաչափին (Մոլդովա, Մերձդնեստր, Ռուսաստան, Ուկրաինա, ԵԱՀԿ և ԵՄ ու ԱՄՆ՝ որպես դիտորդներ), ինչպես նաև առաջադրեց խնդրով զբաղվող հատուկ հանձնակատար [17: pp. 47-49]: 2005 թ. ԵՄ-ն նաև Մոլդովայում և Ուկրաինայում հիմնեց Սահմանային օժանդակության առաքելությունը՝ փորձելով Մերձդնեստրը համապատասխանեցնել Մոլդովայի մաքսային ընթացակարգերին [68: p. 1278]: ԵՄ-Մոլդովա ԳԾ-ում ևս Մերձդնեստրի խնդրին առաջնային կարևորություն է տրվում, ինչի նպատակով ԵՄ-ն աջակցում է Մոլդով-

¹ Թեև այս «կարգապահական» միջոցները երբեմն հանվում էին, և Մերձդնեստրի բնակիչներին երբեմն թույլ էր տրվում ճանապարհորդել դեպի ԵՄ: Այսպիսով ԵՄ-ն փորձում էր Մերձդնեստրում ստեղծել երկխոսության նպաստավոր միջավայր:

վայ ու մ ժողովրդավարացման երկարաժամկետ գործընթացին՝ նպատակ ունենալով Մերձդնեստրի համար Մոլդովյան դարձնել բարգավաճող, կայուն ու ավելի գրավիչ [131]: Չսարդ միջոցների մեկ այլ խումբ [109] ընդունվեց նաև 2008 թ.՝ ԱԳ հիմնման նախօրյակին՝ վերահաստատելով ԵՄ մտահոգվածությունը Մերձդնեստրի հիմնախնդրով: Սակայն ԵՄ-ի մոտեցումը հիմնվում էր ժողովրդավարության խթանման վրա և հակամարտության կարգավորմանը նպաստելու նպատակով փորձում էր բարձրացնել Մոլդովայի գրավչությունը: Եվ թեև Ռուսաստանի հակազդեցության արդյունքում ԵՄ-ն ու ժերի հարաբերակցության հարցում նշանակալի արդյունքի չի կարողացել հասնել, սակայն Մոլդովայի Հանրապետության¹ (ՄՀ) հետ ՄՀ-ի ստորագրման միջոցով Մերձդնեստրին դրել է այնպիսի իրավիճակում, որ վերջինս պետք է ընտրի՝ կամ հետևել ՄՀ-ի օրինակին ու գնալ եվրաինտեգրման ճանապարհով, կամ միտվել դեպի ԵԱՏՄ՝ Էապես կրճատելով արտահանումները դեպի ԵՄ: Սակարելի է համարել ԵՄ-ի կողմից հակամարտության կարգավորման գործում «փափուկ ու ժի» կիրառման տեսանկյունի արդյունք:

Վրաստանի և Մոլդովայի հետ կնքված ԱՀ-ներում ԵՄ-ն շարունակում է իր աջակցությունը հայտնել հակամարտությունների կարգավորման գործընթացին: Մասնավորապես՝ նշվում է, որ ԵՄ-ն նպատակ ունի երկու երկրների համար ստեղծել անվտանգային միջավայր՝ հաշվի առնելով նրանց ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը [130, 131]:

ԱԳ իրականացման վրա ազդող մեկ այլ կարևոր գործոն է շահառու երկրներում ներքին դրությունը և մոտեցումները ԵՄ-ին: Իհարկե, դրանք իրենց հերթին սովորաբար պայմանավորված են լինում արտաքին գործոններով, սակայն երբեմն ներքին տեղաշարժերը բավականաչափ կարևոր են ԱԳ-ի իրականացման վրա ազդելու համար: Այս պարագայում հատկապես տեղին է քննարկել Մոլդովայի օրինակը, քանզի այստեղ ԽՍՀՄ փլուզումից հետո տեղի են ունեցել բազմաթիվ ներքաղաքական ու սոցիալական փոփոխու-

¹ Մոլդովայի Հանրապետությունն ասելով՝ նկատի է առնվում Մոլդովայի՝ Մերձդնեստրը չներառող տարածքը:

թյուրություններ, որոնց արդյունքում երկիրը մի քանի անգամ փոխել է արտաքին քաղաքական հիմնական ուղղությունը: Հայաստանում ԱԳ իրականացման ողջ ընթացքում էական ներքին փոփոխություններ չեն եղել, պետական իշխանությունը գերազանցապես կենտրոնացած է եղել մեկ կուսակցության ձեռքում, որն էլ վերահսկել է ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման ողջ գործընթացը: Վրաստանում թեև 2012 թ. տեղի ունեցավ իշխանափոխություն, սակայն դա մեծ հաշվով չփոխեց երկրի արտաքին քաղաքական կուրսը, քանզի ԵՄ ինտեգրումը շարունակեց մնալ առաջնահերթություն: Մինչդեռ Մոլդովայում սոցիալ-քաղաքական խնդիրները կարևոր նշանակություն են ունեցել ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման համար:

Մանրամասնորեն չանդրադառնալով երկրի ներքին դրությունը մինչև ԱԳ հիմնումը՝ նշենք, որ մինչ այդ Մոլդովայում իշխում էր ՄՅԿԿ-ն, որի արտաքին քաղաքական կուրսը պարբերաբար տատանվել է ԵՄ-ի ու ՌԴ-ի միջև: 2009 թ. ապրիլին երկրում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում հաղթող ճանաչվեց ՄՅԿԿ-ն, որին, սակայն, անմիջապես հաջորդեցին զանգվածային ցույցերը (այսպես կոչված, «Թվիթերյան հեղափոխությունը»), որոնց մասնակիցները ընտրությունների արդյունքները համարում էին կեղծված և պահանջում ձայների վերահաշվարկ [26: ք. 61]: Արդյունքում նույն տարվա հուլիսին անցկացվեցին նոր ընտրություններ, որտեղ արդեն ընդդիմությունը (Մոլդովայի Լիբերալ-դեմոկրատական կուսակցություն (ՄԼԴԿ), Մոլդովայի դեմոկրատական կուսակցություն (ՄԴԿ), Լիբերալ կուսակցություն և «Մեր Մոլդովա» դաշինք), ստացավ մեծամասնություն և կազմելով «Եվրոպական ինտեգրման դաշինք» կոալիցիա՝ ձևավորեցին կառավարությունը և արտաքին քաղաքական առաջնահերթություն սահմանեցին ԵՄ անդամակցությունը: Անմիջապես սկսվեցին նաև ԵՄ-ի հետ ԱՀ-ի, ներառյալ՝ ԽՅԱԱԳ-ի ստորագրման շուրջ բանակցությունները:

Այնուամենայնիվ, Մոլդովան ստիպված եղավ նոր խորհրդարանական ընտրություններ անցկացնել, քանզի գործող խորհրդարանը չէր կարողանում ընտրել երկրի նախագահ: 2009 թ.

սեպտեմբերի 11-ից նախագահի ժամանակավոր պաշտոնակատար, Լիբերալ կուսակցության նախագահ Միխայի Գիմպուլն: 2010 թ. ընտրությունների արդյունքում ձևավորվեց «Եվրոպական ինտեգրման դաշինք» II-ը, որում արդեն ներկայացված էր «Մեր Մոլդովա» դաշինքը: Նոր կոալիցիան ևս անկարող եղավ ընտրել երկրի նախագահ մինչև 2012 թ.: Այս ընթացքում նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի դերում եղան ՄԼԴԿ նախագահ Վլադիմիր Ֆիլատը և ՄԴԿ նախագահ Մարիան Լուպուս, և միայն 2012 թ. մարտին ՄԴԿ բոյկոտի արդյունքում հնարավոր եղան Մոլդովայի նախագահ ընտրել Ն. Տիմոֆտիին, ով պաշտոնավարեց մինչև 2016 թ.:

Ինչպես ներկայացվում է աշխատանքի 3-րդ գլխում, 2014 թ. ԵՄ-ի հետ ԱՅ-ն ստորագրելուց հետո՝ հերթական խորհրդարանական ընտրությունների արդյունքում եվրոպամետ քաղաքական կուսակցությունները մեծամասնություն ստացան, սակայն Մոլդովայի Սահմանադրական դատարանի որոշմամբ՝ 2016 թ. երկրի նախագահն ընտրվեց ոչ թե խորհրդարանի, այլ համաժողովրդական քվեարկությամբ: Արդյունքում պաշտոնը զբաղեցրեց իշխող կոալիցիայի հիմնական հակառակորդի՝ Մոլդովայի Հանրապետության սոցիալիստների կուսակցության (ՄՅՍԿ) նախագահ Իգոր Դոդոնը, ում արտաքին քաղաքական մոտեցումները հակված են ՌԴ-ի հետ հարաբերությունների բարելավմանը, անգամ՝ ԵՄ-ի հետ ստորագրված ԱՅ-ն չեղարկելուն [156, 157]:

Չնայած նրան, որ Ալ Գ գործառման ընթացքում Մոլդովան եղել է դրա առաջամարտիկներից մեկը և արդեն իսկ ԵՄ-ի հետ ստորագրել է ԱՅ-ն, ներառյալ՝ ԽՅԱԱԳ, այնուամենայնիվ, արտաքին քաղաքական կուրսի հարցում քաղաքական ղեկավարության շրջանում առկան ման տարբերությունները թույլ չեն տալիս երաշխավորված համարել Մոլդովայի և ԵՄ-ի միջև հարաբերությունների գործող մակարդակի կայունությունը: Արդեն անգամ ԵՄ-ի կողմից դժգոհություններ են արտահայտվում Մոլդովայում բարեփոխումների ցածր տեմպի առնչությամբ [151]:

Ալ Գ գործառման վրա ազդող այլ գործոններից կարելի է առանձնացնել նաև ԵՄ երկրների որոշակի անմիասնականությունը դրան վերագրվող կարևորության հարցում, ինչպես նաև շահառու

երկրներից ԵՄ-ի կողմից պահանջվող փոփոխությունների և վերջիններիս համար դրանցից ստացվելիք օգուտների բացասական հարաբերակցությունը: Այնուամենայնիվ, այս երկու գործոններն էապես ավելի ցածր նշանակություն են ունեցել Ալ Գ իրականացման վրա, և դրանց առանձին քննարկումը տեղին չէ:

Ամփոփելով Ալ Գ իրականացման վրա ազդող հիմնական գործոնների վերլուծությունը և դրանք դիտարկելով եվրոպականացման՝ Ս. Լավենեսքի և Ֆ. Շիմմելֆենիգի առաջարկած երեք մոդելների (ինստիտուցիոնալ, ուժահեն և տեղային) շրջանակներում՝ կարող ենք կատարել հետևյալ դատողությունները: Կառավարման սեփական նմուշների տարածման համար ԵՄ նորմատիվ ռեսուրսները սովորաբար անբավարար են, և թեև, օրինակ, Վրաստանի պարագայում դրանք նկատելիորեն գրավիչ են եղել, այնուամենայնիվ, դժվար է պնդել, որ ԵՄ-ն ուսումնասիրվող երեք երկրներում կարողացել է իր ինստիտուցիոնալ ներուժի շնորհիվ նպաստել դրանց աշխարհաքաղաքական կողմնորոշմանը դեպի ԵՄ: Երեք երկրների պարագայում Ալ Գ գործառնումը պայմանավորող գործոնների համախումբն առավել ապես ներառված է ուժահեն մոդելի շրջանակներում: Թե՛ Չայաստանի, թե՛ Վրաստանի, թե՛ Մոլդովայի արտաքին քաղաքական քայլերը մեծապես պայմանավորված են եղել Ռուսաստանի հետ հարաբերությունների բնույթով ու մակարդակով և ԵՄ-ի հետ այս երկրների համագործակցության խորացման նկատմամբ ՌԴ-ի մոտեցմամբ: Այնուամենայնիվ, Մոլդովայի պարագայում կիրառելի է նաև տեղային մոդելը, քանզի երկրի ներքաղաքական տեղաշարժերն էապես պայմանավորել են արտաքին քաղաքական կողմնորոշումը:

**ԳԼՈՒԽ 3. «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆՆԿԵՐՈՒ ԹՅԱՆ» ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԴԻՍԿՈՒՐՍԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՈԱՆԿԱՐՆԵՐԸ**

**3.1. «Արևելյան գործընկերության» տեղը Հայաստանի, Վրաստանի և
Մոլդովայի խորհրդարանական դիսկոնրսում**

Հաշվի առնելով այն, որ Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում կիրառվում է խորհրդարանական կառավարման ձևը և խորհրդարանին են վերապահված արտաքին քաղաքական կոնսիսահմանման գործառնությունը՝ անհրաժեշտ է համադրաբար վերլուծել երեք երկրների օրենսդիր մարմիններում ներկայացված քաղաքական ուժերի դիրքորոշումները ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման վերաբերյալ և դրանց հիման վրա կատարել որոշ ընդհանրացումներ արտաքին քաղաքական հետագա զարգացումների վերաբերյալ: Այս գլխում ամփոփված են ուսումնասիրվող երեք երկրների խորհրդարանների բոլոր խմբակցությունների մեկական ներկայացուցիչների հետ անցկացված խորին հարցազրույցների արդյունքները, սակայն մինչ դրանց անցնելը հարկ է հակիրճ ներկայացնել Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարաններում տեղերի բաշխումը:

Հայաստանում վերջին խորհրդարանական ընտրություններն անցկացվել են 2017 թ. ապրիլի 2-ին, որոնց արդյունքում Ազգային ժողովում (ԱԺ) պատգամավորական տեղեր զբաղեցրին երկու կուսակցությունների և կուսակցությունների երկու դաշինքների ներկայացուցիչներ՝ կազմելով չորս խորհրդարանական խմբակցություն՝ պատգամավորական տեղերի հետևյալ բաշխմամբ. «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» (ՀՀԿ) խմբակցություն՝ 58 տեղ, «Ծառուկյան» խմբակցություն՝ 31 տեղ, «Ելք» խմբակցություն՝ 9 տեղ և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» (ՀԾԴ) խմբակցություն՝ 7 տեղ: Պատգամավորների

ընդհանուր թիվը 105 է: Հաջորդ խորհրդարանական ընտրությունները նախատեսված է անցկացնել 2022 թ.¹:

Վրաստանում վերջին խորհրդարանական ընտրություններն անցկացվել են 2016 թ. հոկտեմբերի 8-ին, և արդյունքում խորհրդարանում տեղեր զբաղեցրին չորս քաղաքական ուժեր՝ հետևյալ համամասնությամբ. «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» դաշինք՝ 115 տեղ, «Միացյալ ազգային շարժում» կուսակցություն՝ 27 տեղ, «Վրաստանի հայրենասերների դաշինք»՝ 6 տեղ, «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» կուսակցություն՝ 1 տեղ, ևս 1 տեղ բաժին է հասել անկախ թեկնածուի: Պատգամավորների ընդհանուր թիվը 150 է: Հաջորդ խորհրդարանական ընտրությունները նախատեսված է անցկացնել 2020 թ.²:

Մոլդովայում վերջին խորհրդարանական ընտրություններն անցկացվել են 2014 թ. նոյեմբերի 30-ին, իսկ արդյունքում պատգամավորական տեղերը բաշխվել են հինգ ուժերի միջև հետևյալ համամասնությամբ՝ Մոլդովայի Հանրապետության Սոցիալիստների կուսակցություն (ՄՅՍԿ)՝ 25 տեղ, ՄԼԴԿ՝ 23 տեղ, ՄՅԿԿ՝ 21 տեղ, ՄԴԿ՝ 19 տեղ և Լիբերալ կուսակցություն՝ 13 տեղ: Այնուամենայնիվ, Մոլդովայի խորհրդարանական խմբակցությունների մեծ մասում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան հաջորդող տարիների ընթացքում, և փոխվեց նրանց պատգամավորական տեղերի հարաբերակցությունը: ՄԼԴԿ-ից, ՄՅԿԿ-ից և Լիբերալ կուսակցությունից պատգամավորների մեծ արտահոսքի արդյունքում ընդլայնվեց ՄԴԿ-ի խմբակցությունը, ձևավորվեց Մոլդովայի Եվրոպական ժողովրդական կուսակցությունը, իսկ որոշ պատգամավորներ դարձան անկախ: Ներկայումս Մոլդովայի խորհրդարանում պատգամա-

¹ 2015 թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ-ում անցկացված հանրաքվեի արդյունքում ընդունվել է երկրի նոր սահմանադրությունը, որի համաձայն՝ Հայաստանն անցում է կատարում խորհրդարանական կառավարման համակարգի: Նոր սահմանադրությունն ուժի մտել է մտել 2018 թ. ապրիլից՝ ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնավարման լիազորությունների ավարտից հետո:

² 2010 թ. հոկտեմբերի 15-ին Վրաստանում անցկացված հանրաքվեով ընդունվել է նոր սահմանադրություն, ըստ որի՝ 2013 թ. նախագահական ընտրություններից հետո 2012 թ. ընտրված խորհրդարանը ձևավորեց նոր կառավարություն՝ այդպիսով երկիրը սկիզբ տալով խորհրդարանական կառավարմանը: 2012 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում հաղթանակ տարավ միլիարդատեր գործարար Բի-ձինա Իվանիշվիլուն ստեղծած «Վրացական երազանք» կուսակցությունը, իսկ գործող նախագահ Միխեիլ Սասկաշվիլուն ղեկավարած «Միացյալ ազգային շարժում» կուսակցությունը պարտություն կրեց՝ դառնալով ընդդիմություն:

վորական տեղերը բաշխված են հետևյալ համամասնությամբ՝ ՄԴԿ՝ 42 տեղ, ՄՅՍԿ՝ 24 տեղ, Լիբերալ կուսակցությանը՝ 9 տեղ, Եվրոպական ժողովրդական կուսակցությանը՝ 9 տեղ, ՄՅԿԿ՝ 6 տեղ, ՄԼԴԿ՝ 5 տեղ, անկապատ ավորներ՝ 6 տեղ: Պատգամավորների ընդհանուր թիվը 101 է: Հաջորդ խորհրդարանական ընտրություններն անցկացվելու են 2018 թ.¹:

ԵՄ-ի հետ հարաբերությունների շուրջ առկա մոտեցումներն առավել համակարգված ձևով ներկայացնելու նպատակով խորին հարցազրույցների վերլուծության հիման վրա ստացված տեղեկությունները խմբավորվել են երեք հիմնահարցային կատեգորիաներում՝ [1] ԵՄ-ի տեղ արտաքին քաղաքականությունում, [2] Եվրոպական ինտեգրումը՝ որպես աշխարհաքաղաքական ընտրություն և [3] ակնկալիքներ արտաքին քաղաքական հետագա զարգացումների վերաբերյալ: Երրորդ հատվածը ներկայացված է հաջորդ ենթագլխում:

Ինչպես արդեն նշվել է, երեք երկրների ազգային անվտանգության հայեցակարգերում ԵՄ-ն համարվում է կարևոր արտաքին քաղաքական գործընկեր, իսկ Վրաստանի ու Մոլդովայի համար Եվրոպական ինտեգրումը գերակա արտաքին քաղաքական ուղղություն է: Աշխատանքի այս հատվածը նպատակ ունի ուսումնասիրելու ԵՄ-ի նկատմամբ առկա խորհրդարանական դիրքորոշումները և դրանց համապատասխանությունը պաշտոնապես սահմանված մոտեցումներին:

Հայաստանի խորհրդարանական ուժերի շրջանում, կարելի է ասել, առկա է կոնսենսուս ԵՄ-ի նկատմամբ պատկերացումների հարցում: Վերջինիս հետ համագործակցությունն ընդհանուր առմամբ ընկալվում է որպես համակողմանի զարգացման ու բարեփոխումների աղբյուր, սակայն չի համարվում գերակա արտաքին քաղաքական ուղղություն:

ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Աշոտյանը գտնում է, որ ԵՄ-ն ԱլԳ իրականացման

¹ 2000 թ. սահմանադրական փոփոխություններից հետո Մոլդովայում կիրառվում է խորհրդարանական կառավարման ձևը: Ինչպես արդեն նշվել է, 2009-2012 թթ. ընթացքում Մոլդովայի խորհրդարանը չէր կարողանում ընտրել երկրի նախագահ, քանզի ոչ մի քաղաքական ուժ չէր ստացել բավարար թվով պատգամավորական տեղեր:

տարիներին նպաստել է Յայաստանում ժողովրդավարացման միջոցով անվտանգ ու բարեկեցիկ կյանքի ապահովմանը [162]: ՅՅԿ խմբակցության ներկայացուցչի դիտարկմամբ՝ ԵՄ-ն, որպես ազգային պետությունների կայացման փորձով ստեղծված կառույց, Յայաստանի համար զարգացման ուղենիշ է [163]: Բացի այդ, նա շեշտում է, որ Յայաստանը եվրոպական արժեքային ու քաղաքականության դաշտում է, և անտրամաբանական կլիներ ԵՄ-ի հետ հարաբերությունների չզարգացնելը: Ռեսպոնդենտի կարծիքով՝ Յայաստան-ԵՄ համագործակցության առաջնային օգուտը ներքաղաքական մշակույթի զարգացումն է: «Սկսած մեր կառավարման համակարգից ու կուսակցությունների դերից մինչև քաղաքացիական հասարակությունն ու հիմնարար ազատություններ մեր արձանագրած առաջընթացում մեծ է ԵՄ-ի, ԵԽ-ի, եվրոպական ընտանիքի դերակատարումը», - նշում է նա [163]: «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր, ՅՅ Աժ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Չոհրաբյանի կարծիքով՝ ԵՄ-ի հետ համագործակցության գլխավոր օգուտը քաղաքացիական հասարակության զարգացումն է, որը, սակայն, մեծ հաշվով չի նպաստել ներքին ժողովրդավարության զարգացմանը: «Ես կարող եմ ասել, որ ԱլԳ-ին մասնակցությունից հետո Յայաստանում քաղաքացիական հասարակությունը շատ արագ զարգացավ և դարձավ դրոշակակիր: Այսօր մենք ունենք հասարակություն, որը մի քայլ առաջ է քաղաքական կուսակցություններից: Օրակարգ առաջադրելու առումով ԱլԳ քաղաքացիական հասարակության ֆորումի մեր ազգային պատճառման առաջատար է վեց գործընկեր երկրների միջև», - նշում է Ն. Չոհրաբյանը [164]: Այնուամենայնիվ, ըստ նրա՝ ԵՄ-ն չի կարողացել համագործակցությունից ստացվելիք օգուտներն արդյունավետորեն ներկայացնել հանրությանը, ինչի արդյունքում վերջինիս շրջանում ԵՄ-ն արմատավորվել է որպես ազգային ավանդույթների ոչ հարիր արժեհամակարգ՝ առաջացնելով հակազդեցություն [164]: ՅՅ Աժ «Ելք» խմբակցության պատգամավոր, ՅՅ Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ Արտակ Չեյնալյանի բնորոշմամբ՝ ԱլԳ-ում Յայաստանի ներգրավվածությունը նպաստում է եվրոպական արժեքների տարածմանը,

ինչը բխում է Հայաստանի շահերից. «Արևելյան գործընկերության ունը եվրոպական արժեհամակարգի տարածման, ընդլայնման ձև է, ինչը մենք ողջունում ենք և ուզում ենք, որ դատողի ունենա» [165]: Միևնույն ժամանակ, Ա. Չեյնալյանը գտնում է, որ որպես կողմնակի արդյունք՝ ԱԼԳ-ն կարող է նպաստել Ադրբեջանում ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը, ինչը դրականորեն կանդրադառնա տարածաշրջանային կայունության վրա [165]: ՀՀԴ խմբակցության ղեկավար, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ Արմեն Ռուստամյանի դիտարկմամբ՝ «այն խնդիրները, որոնց լուծման ավելի հեշտ ու անմիջական ռեսուրս ունենք ԵԱՏՄ դաշտում, պետք է լուծվեն ԵԱՏՄ անդամակցության շրջանակներում, իսկ այն, ինչն այդպես հնարավոր չէ անել, ԵՄ դաշտում պետք է անենք» [166]: Ըստ նրա՝ ԵՄ-ի հետ համագործակցությունը հատկապես կարևոր է պաշտպանության ձևավորման ու ամրապնդման տեսանկյունից, քանզի դրա միջազգային լավագույն փորձն առկա է հենց Եվրոպայում: Այնուամենայնիվ, Ա. Ռուստամյանի գնահատմամբ՝ ներքին ժողովրդավարությունն անկարելի է կառուցել արտաքին միջամտությամբ. այն պայմանավորված է ներքին ռեսուրսներով [166]: Ուստի ԵՄ-ի հետ համագործակցությունը կարող է ծառայել միայն որպես կողմնակի օժանդակություն:

Վրաստանի խորհրդարանական ուժերի շրջանում հստակորեն առկա է միասնական մոտեցում ԵՄ-ի նկատմամբ. այն, անշուշտ, դիտարկվում է որպես երկրի արտաքին քաղաքականության գերակա ուղղություն, իսկ ԵՄ-ին անդամակցությունը՝ առաջնահերթություն: 2008 թ. Ռուսաստանի հետ հարաբերությունների խզումից հետո ԵՄ-ի նկատմամբ նման մոտեցումը զարմանալի չէ: Նոր իրողություններում այն, ըստ էության, երկրի միակ իրատեսական արտաքին քաղաքական ու աշխարհաքաղաքական ընտրությունն է:

«Վրացական երազանք» դաշինքի պատգամավոր, Վրաստանի խորհրդարանի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Իսկո Դասենիի դիտարկմամբ՝ ԵՄ-ն Վրաստանի ժողովրդավարացման գլխավոր մղիչ ուժն է. «ԵՄ-ն նպաստել է Վրաստանում խաղաղ իշխանափոխությանը և այսօր էլ նպաստում է ժողովրդավարական կառավարման ամրապնդմանը» [167]: Ի. Դասենիի

բնորոշմամբ՝ ԵՄ-ի հետ ԱՅ-ի ստորագրումն ու վիզաների ազատականացումը թույլ են տալիս Վրաստանին Էլ ավելի մոտենալ «Եվրոպական համայնքին», ինչն էապես նպաստում է երկրի աշխարհաքաղաքական նպատակին՝ ԵՄ անդամակցությանը [167]: Այս կարծիքն է կիսում Վրաստանի խորհրդարանի փոխնախագահ, «Միացյալ ազգային շարժում» կուսակցության պատգամավոր, Եվրոպական ինտեգրման հանձնաժողովի անդամ Սերգի Կապանաձեն, ով գտնում է, որ Ալ Գ-ին Վրաստանի անդամակցությունը մեծապես նպաստել է երկրի ժողովրդավարացմանը, դատական համակարգի ու անվտանգության ոլորտի կատարելագործմանը [168]: Վրաստան-ԵՄ ԱՅ-ն վերջինիս կողմից բնորոշվում է հետևյալ կերպ. «Ասոցացման համաձայնագիրը և հատկապես խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը կարևոր են ինստիտուցիոնալ կայունության տեսանկյունից: Դրանց միջոցով հնարավոր է շուկայական տնտեսության ու սեփականության իրավունքի սկզբունքներն ամրագրել Վրաստանի օրենսդրական դաշտում և արմատավորել վրացական հասարակությանը» [168]: «Վրաստանի հայրենասերների դաշինք» կուսակցությունն արտաքին քաղաքականության հարցում ևս լիովին սատարում է լիարժեք Եվրոպական ինտեգրումը: Կուսակցության պատգամավոր, Վրաստանի խորհրդարանի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Ադա Մարչանիան նշում է. «ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի կնքումից և վիզաների ազատականացումից հետո Վրաստանի հաջորդ քայլը պետք է լինի ԵՄ-ին լիարժեք անդամակցությունը, և դրան պետք է ձգտի վրաց ողջ հասարակությունը» [169]:

Մոլդովայի պարագայում ԵՄ-ի շուրջ խորհրդարանական մոտեցումներն ավելի տարբերվող են, քան Հայաստանի և Վրաստանի պարագայում: Այստեղ թե՛ ազգային ինքնության խնդիրը, թե՛ կուսակցությունների գաղափարախոսական տարբերությունները հանգեցրել են ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման շուրջ տարամետ խորհրդարանական դիրքորոշումների ձևավորմանը: Թեև Մոլդովայում Եվրոպական ինտեգրումը հռչակված է երկրի արտաքին քաղաքական գերակա ուղղություն և ԱՅ-ի, ներառյալ՝ ԽՅԱԱԳ-ի ստորագրմամբ ու վիզաների ազատականացմամբ Մոլդովան հնա-

րավորինս մոտեցել է ԵՄ-ին (ինչպես և Վրաստանը), այնուամենայնիվ, երկրի խորհրդարանական ուժերի շրջանում առկա է միասնական մոտեցում արտաքին քաղաքականության վերաբերյալ¹:

ՄԴԿ խորհրդարանական խմբակցության ներկայացուցիչ, Արտաքին քաղաքականության և Եվրոպական ինտեգրման հանձնաժողովի նախագահ Վիոլետա Իվանովը ԵՄ-ն դիտում է որպես Մոլդովայի գերակա շահերի իրականացմանը նպաստող ուժ, որը կարող է Էապես բարելավել երկրի տնտեսական դրությունը [170]. «Մենք փորձում ենք ԵՄ-ի հետ համագործակցությունը ծառայեցնել Մոլդովայում կենսապայմանների բարելավմանն ու ժողովրդավարացմանը՝ մինևույն ժամանակ զարգացնելով հարաբերություններն ԱՊՅ երկրների հետ» [170]: ՄՅՍԿ պատգամավոր, Մոլդովայի խորհրդարանի Արտաքին քաղաքականության և Եվրոպական ինտեգրման հանձնաժողովի անդամ Ադրիան Լեբեդիսկին գտնում է, որ Ալ Գ-ին Մոլդովայի մասնակցությունն Էապես չի նպաստել երկրի ժողովրդավարացմանն ու զարգացմանը, քանզի Մոլդովայում շարունակում են գործել «մարդ-կուսակցություններ», իսկ քաղաքական համակարգն անկայուն է [171]: Ըստ նրա՝ Ալ Գ-ի արդյունքում Մոլդովան հայտնվել է այնպիսի կարգավիճակում, որ երկրի իշխանությունները պարզապես ամեն կերպ փորձում են ստանալ ԵՄ ֆինանսական աջակցությունը. «Ասոցացման համաձայնագիրը Մոլդովային Էական տնտեսական ու քաղաքական օգուտներ չի բերում: Այն ստորագրվեց խորհրդարանական ընտրությունների նախաշեմին: Այդպիսով իշխանությունները փորձում էին բնակչությանը ցույց տալ, որ Մոլդովան մոտ է ԵՄ անդամակցությանը, և ստանալ խորհրդարանական մանդատներ» [171]: ՄԴԿ-ի մոտեցումներին են հարում նաև 2009 թ. վերջինիս հետ «Եվրոպական ինտեգրման դաշինք» կազմած երկու կուսակցությունների՝ Լիբերալ կուսակցության և ՄԼԴԿ-ի, ինչպես նաև Եվրոպական ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները, որոնք Մոլդովան համարում

¹ Չարկ է նշել նաև, որ թեև Մոլդովայի խորհրդարանում մեծամասնությունն ունի ՄԴԿ-ն, երկրի նախագահի պաշտոնը 2016 թ. հոկտեմբերի 30-ի համաժողովրդական ընտրությունների արդյունքում զբաղեցրել է ՄՅՍԿ առաջնորդ Իգոր Դոդոնը, որն ի տարբերություն ՄԴԿ-ի՝ վերապահ մոտեցում ունի ԵՄ-ի նկատմամբ: Ուստի ի տարբերություն Չայաստանի ու Վրաստանի՝ Մոլդովայի նախագահի ու խորհրդարանական մեծամասնության միջև առկա են Էական տարբերություններ արտաքին քաղաքական կուրսի շուրջ:

Են բնականորեն կապված «Եվրոպական համայնքի» հետ: Օրինակ՝ Մոլդովայի խորհրդարանի փոխնախագահ, Եվրոպական ժողովրդական կուսակցության պատգամավոր, Արտաքին քաղաքականության և Եվրոպական ինտեգրման հանձնաժողովի անդամ Վալերիո Գիլեցկին, ով նշում է. «ԵՄ-ի հետ խորը հարաբերությունները Մոլդովայի տնտեսության վերականգնման կարևոր խթան են, և մենք պետք է փորձենք առավելագույնը քաղել Ասոցացման համաձայնագրի իրականացումից՝ ձգտելով իարժեք ինտեգրման» [172]: ՄՅԿ-ն ժամանակի ընթացքում փոխել է իր մոտեցումները ԵՄ-ի նկատմամբ, և ներկայումս էլ դժվար է հստակորեն այն ուրվագծել: 2000-ական թթ.՝ Վլադիմիր Վորոնինի նախագահության և խորհրդարանում ՄՅԿ-ի մեծամասնության շրջանում, երկրի իշխանությունները հիմնականում սատարում էին ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացումը՝ Եվրոպական ինտեգրումը հռչակելով արտաքին քաղաքական առաջնահերթություն: 2009 թ. պարտվելով խորհրդարանական ընտրություններում՝ ՄՅԿ-ն որդեգրեց Եվրոսկեպտիկ մոտեցում, սակայն 2014 թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին կրկին վերադարձավ Եվրոպամետքաղաքական կուրսին:

Ամփոփելով Չայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարանական ուժերի շրջանում ԵՄ-ի նկատմամբ դիրքորոշումների ներկայացումը՝ կարող ենք փաստել, որ դրանցից ոչ մեկը միանշանակ բացասական մոտեցում չունի ԵՄ-ին, և անհրաժեշտ է համարում վերջինիս հետ հարաբերությունների զարգացումը: Այնուամենայնիվ, այս հարցում երեք երկրների խորհրդարանական դիսկուրսում առկա են որոշակի տարբերություններ, որոնք հակիրճ կարելի է նկարագրել հետևյալ կերպ: Վրաստանում ԵՄ-ն դիտարկվում է բացարձակապես դրական լույսի ներքո, իսկ Եվրոպական ինտեգրացիան բոլոր խորհրդարանական ուժերի համար գերակա ուղղություն է: Չայաստանում խնդրի շուրջ առկա է պրագմատիկ մոտեցում, և թեև ԵՄ-ի հետ համագործակցությանը դիտարկվում է որպես զարգացման կարևոր խթան, սակայն ոչ մի կուսակցության կողմից Եվրոպական ինտեգրումը չի ընկալվում որպես գերակա արտաքին քաղաքական ուղղություն: Մոլդովայում ԵՄ-ի նկատմամբ դիրքորոշումներն

ավելի մասնատված են. խորհրդարանական ոչ բոլոր ուժերն են սատարում երկկողմ հարաբերությանը ու նեների զարգացման ընթացքը:

Աշխարհաքաղաքական տեսանկյունից ԵՄ-ի հետ հարաբերությանը ու նեների զարգացումն ավելի էական դիրքորոշումային տարբերություններ է առաջացնում, քան ԵՄ-ի նկատմամբ ընդհանուր մոտեցումը: ԵՄ-ն ու ՌԴ-ն, լինելով հետխորհրդային տարածաշրջանում ամենաազդեցիկ դերակատարները, դարձել են փոքր պետությունների, այս դեպքում՝ Յայաստանի, Վրաստանի և Մոլդովայի արտաքին քաղաքական կողմնորոշման հիմնական ուղղությունները: Ունենալով սակավ բնական ռեսուրսներ և ներգրավված լինելով էթնոքաղաքական հակամարտություններում՝ երեք երկրներն ինքնաբավ արտաքին քաղաքականություն իրականացնելու սահմանափակ ներուժ են ունեցել, ինչը հստակորեն արտացոլված է խորհրդարանական ուժերի դիրքորոշումներում:

Յայաստանը և Մոլդովան թեև գտնվում են տարբեր տարածաշրջանային դրությունների մեջ և ունեն միմյանցից տարբերվող ներքին ու արտաքին խնդիրներ, սակայն երկու երկրների պարագայում էլ առկա է ԵՄ-ի ու ՌԴ-ի հետ հավասարակշռված հարաբերությունների պահպանման խնդիրը. նույնիսկ ծայրահեղ եվրոպամետ կամ ծայրահեղ ռուսամետ կուսակցություններն առաջ են քաշում երկու ուժերի հետ առավել ասես համաչափ շփման անհրաժեշտությունը՝ գերազանցապես պայմանավորված անվտանգային հիմնախնդիրներով:

Արմեն Աշոտյանը և ՅՅԿ խմբակցության մեկ այլ ներկայացուցիչ գտնում են, որ տարբեր բնագավառներում, հատկապես՝ անվտանգության ոլորտում, ՅՅ-Ռուսաստան սերտ հարաբերությունները բնական են, քանզի ԵՄ-ն թեև նպաստում է տարածաշրջանային կայունությանը, սակայն չունի դա երաշխավորելու քաղաքական ու ռազմական ներուժ [162, 163]: Ըստ նրանց՝ Յայաստանի արտաքին քաղաքականությունը հիմնականում խարսխված է անվտանգության գործոնի վրա, որտեղ գերակա է և ներկայում մրցակից չունի ՌԴ-ի հետ ունեցած ռազմավարական դաշնակցությունը, ՅԱԴԿ-ն ու Յայաստանում գտնվող ռուսական

նազմաբազան [162, 163]: Ուստի երկու ռեսպոնդենտների կողմից էլ Հայաստանի մուտքը ԵԱՏՄ դիտարկվում է որպես բնականոն գործընթացի արդյունք, քանզի այն հետապնդվող նազմավարություններ, որին որևէ այլ ընտրանք չկար [162, 163]: Ա. Աշոտյանի դիտարկմամբ՝ Հայաստանի մուտքը ԵԱՏՄ պայմանավորված էր նաև տնտեսական գործոններով, քանզի ՀՀ ապրանքները, աշխատուժն ու ծառայությունները ռուսական շուկայում ավելի մրցունակ են, քան եվրոպականում [162]: «Ծառուկյանի» և «Ելք» խմբակցությունների պատգամավորներ Նաիրա Չոհրաբյանի և Արտակ Չեյնալյանի բնորոշմամբ՝ Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին «պարտադրված քաղաքական ընտրություն» էր, քանզի ներկայում էլ ԵԱՏՄ անդամակցությունից տնտեսական օգուտները տեսանելի չեն [164, 165]: Այնուամենայնիվ, երկու գործիչներն էլ համաձայն են, որ ԵՄ ներգրավվածությունն արցախյան հակամարտության կարգավորման գործում դեկլարատիվ բնույթի է, և ԵՄ-ի կողմից անվտանգության ապահովման այլ ընտրանքային մոդելներ չեն առաջարկվել [164, 165]: ՀՀ պատգամավոր Արմեն Ռուստամյանի դիտարկմամբ՝ Հայաստանը կարողացել է արդյունավետ հավասարակշռություն պահպանել ԵՄ-ի ու ՌԴ-ի միջև և երկու կողմերի հետ համագործակցել Հայաստանի համար առավել շահավետ շրջանակներում [166]:

Մոլդովյան թեև 2014 թ. ստորագրել է, և 2016 թ. սկսած արդեն ուժի մեջ է մտել ԵՄ-ի հետ ԱՀ-ն, սակայն երկրի նույնիսկ եվրոպամետ ուժերը պատրաստ չեն դրա արդյունքում նվազեցնել ՌԴ-ի հետ հարաբերությունների մակարդակը: ՄԴԿ ներկայացուցիչ Վ. Իվանովն ամբողջությամբ պաշտպանում է Մոլդովյան լիարժեք եվրոպական ինտեգրմանը, սակայն ըստ նրա՝ դա որևէ կերպ չպետք է բացասաբար անդրադառնա ՌԴ-ի հետ հարաբերությունների վրա. «Մենք փոքր երկիր ենք և կախված ենք տարածաշրջանային հիմնական ուժերի միջև հարաբերությունների դինամիկայից: Մենք արդեն ԵՄ ասոցացված անդամ ենք, որովհետև դա է Մոլդովյան տրամաբանական քաղաքական ուղին, սակայն միևնույն ժամանակ մենք վստահ ենք, որ դա չի խաթարի Ռուսաստանի հետ համագործակցությունը» [170]: Այս մոտեցումը խարսխված է նաև ՄԼԴԿ-ի, Լիբերալ կուսակցության և եվրոպական ժողովրդական կուսակցության դիսկուրսում: Վերջինի

ներկայացուցիչ Վ. Գիլեցկին նշում է, որ Մոլդովյան բազում թելերով կապված է ԵՄ-ի հետ և պետք է ձգտի անդամակցել վերջինին, սակայն նա Ռուսաստանը ևս համարում է Մոլդովյան գործընկեր, որի հետ անհրաժեշտ է պահպանել փոխահավետ հարաբերություններ [172]: ՄՅՍԿ ներկայացուցիչ Ա. Լեբեդինսկին աշխարհաքաղաքական տեսանկյունից վերապահումով է մոտենում ԵՄ-ի հետ խորը հարաբերությունների հաստատմանը՝ գտնելով, որ Մոլդովյան չպետք է կորցնի իր ավանդական գործընկերոջը՝ ՌԴ-ին, իսկ ԵՄ-ի հետ համագործակցությունը պետք է ծավալվի միայն որոշ ոլորտներում, քանի որ վերջինս ոչ մի դեր չունի Մերձդնեստրի հակամարտության կարգավորման գործում, մինչդեռ Ռուսաստանը դրանց դինամիկայի վրա ազդելու առեւտրային ռեսուրսներ ունի [171]:

Վրաստանի պարագայում խորհրդարանական ուժերի շրջանում առկա է նկատելի փոխհամաձայնությունն աշխարհաքաղաքական դիրքավորման տեսանկյունից: Ռուսաստանի հետ լարված հարաբերությունների արդյունքում վերջինս երկրորդական տեղ է զբաղեցնում Վրաստանի արտաքին քաղաքական օրակարգում: Ե՛վ իշխանական, և՛ ընդդիմադիր կուսակցությունները լիարժեք եվրոպական ինտեգրացիան համարում են երկրի արտաքին քաղաքական անվերապահ գերակայություն, իսկ Ռուսաստանը հիմնականում ընկալվում է միայն որպես սպառնալիք, այլ ոչ թե գործընկեր: Այլ կերպ ասած՝ Վրաստանի խորհրդարանական դիսկուրսում գրեթե բացակայում է ԵՄ-ի ու ՌԴ-ի միջև հավասարակշռված հարաբերությունների պահպանման անհրաժեշտությունը: «Վրացական երազանք» դաշինքի ներկայացուցիչ Ի. Դասենին այս առնչությամբ նշում է. «Մեր գլխավոր արտաքին քաղաքական նպատակը ԵՄ-ին ու ՆԱՏՕ-ին անդամակցելն է, ինչին Ռուսաստանն ամեն կերպ փորձում է խոչընդոտել՝ մասնատել Վրաստանը, առևտրային խոչընդոտներ ստեղծել և այլն: Սակայն մենք դժվար ճանապարհ ենք անցել և ժամանակի ընթացքում հասկացել ենք, որ առանց Ռուսաստանի էլ կարող ենք» [167]: Համանման դիրքորոշում ունի «Միացյալ ազգային շարժում» կուսակցության պատգամավոր Ս. Կապանաձեն, ում դիտարկմամբ՝ «Ռուսաստանը բռնապետություն է, որը խախտել է միջազգային իրավունքի սկզբունքներն ու կնքված

բոլոր համաձայնագրերը, ներկայումս էլ բռնազավթել է Վրաստանի տարածքները» [168]: ՌԴ-ի հետ հարաբերությունների շուրջ փոքր-ինչ ավելի մեղմ դիրքորոշում ունի «Վրաստանի հայրենասերների դաշինք»-ի պատգամավոր Ա. Մարշանիան, որը ևս եվրոպական ինտեգրումը համարում է Վրաստանի արտաքին քաղաքական գերնպատակը, սակայն միաժամանակ կարծում է, որ անհրաժեշտ է եզրեր գտնել Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման համար. «Մենք կողմ ենք լիարժեք եվրոպական ինտեգրմանը, սակայն Վրաստանի ազգային շահերից է բխում նաև Ռուսաստանի հետ որոշակի հարաբերությունների պահպանումը» [169]:

Ամփոփելով աշխարհաքաղաքական տեսանկյունից եվրոպական ինտեգրման շուրջ խորհրդարանական ուժերի դիրքորոշումների քննարկումը՝ կարելի է նշել, որ Վրաստանում ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացումն ու ԵՄ լիարժեք անդամակցությունն արտաքին քաղաքական առաջնահերթություն են, որոնք պայմանավորված չեն ՌԴ-ի կամ այլ դերակատարների հետ հարաբերությունների զարգացման դիմադրությամբ: Այստեղ Ռուսաստանը չի ընկալվում որպես գործընկեր, և միայն մեկ փոքրաթիվ խորհրդարանական խմբակցություն է վերջինիս հետ հարաբերությունները բարելավելու իրական անհրաժեշտություն տեսնում: Հայաստանում և Մոլդովայում իրավիճակն էապես այլ է: Այստեղ Ռուսաստանը հիմնականում ընկալվում է որպես կարևոր գործընկեր, որի հետ սերտ հարաբերություններն էական նշանակություն ունեն երկու երկրների անվտանգային քաղաքականության համատեքստում: Հայաստանում և Մոլդովայում ոչ մի քաղաքական կուսակցության ներկայացուցիչ չի սատարում ՌԴ-ի հետ հարաբերությունների մակարդակի իջեցումը, առավել ևս՝ խզումը: Արտաքին քաղաքական դաշտում ԵՄ-ի ու ՌԴ-ի միջև հավասարակշռության պահպանումը դիտարկվում է որպես պետության գերակա շահերի իրականացման նախապայման:

3.2. ԵՄ-ի հետՅայ աստանի, Վրաստանի և Մոլդովայի

հարաբերությունների զարգացման հեռանկարները

Այսօր, լինելով ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման հիմնական հարթակ, ինչպես ցույց է տրվել աշխատանքում, ենթարկվել է տարբեր փոփոխությունների, անգամ՝ փոխակերպումների՝ պայմանավորված մի շարք գործոններով՝ աշխարհաքաղաքական միջավայր, հարևան երկրների հետ շփման ԵՄ գործիքակազմ, ԵՄ արտաքին գործողությունների ներքին փոխամածայնեցվածություն, շահառու երկրների կողմից ԵՄ քաղաքականության ընդունման ու կիրառման պատրաստակամություն, եվրոպական նորմերի ու արժեքների համապատասխանություն շահառու երկրների առանձնահատկություններին և այլն: Յայ աստանում, Վրաստանում և Մոլդովայում ժամանակի ընթացքում տեղի ունեցած տեղաշարժերն էապես ձևափոխել են Այգ գործողության շրջանակը և հստակեցրել ԵՄ-ի հետ հարաբերությունների բնույթն ու մակարդակը: Ի տարբերություն 2008-2009 թթ.՝ այժմ երեք երկրներն էլ շրջանակային համածայնագրեր են կնքել ԵՄ-ի հետ, որոնք, փոխարինելով 1990-ական թթ. գործող ԳՅՅ-ներին, նոր փուլ են բացել բացել երկկողմ հարաբերություններում: Այդ փաստաթղթերը, ներառելով համագործակցություն հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, առաջարկում են շահառու երկրների հետ հարաբերությունների զարգացման համապարփակ զարգացման օրակարգ, որի իրականացումն, այնուամենայնիվ, դժվար է ապահովել ԵՄ ներկայիս գործիքակազմով:

Աշխատանքի այս հատվածում նախորդիվ ներկայացված իրողությունների ու կատարված վերլուծության հիման վրա քննարկվում է ԵՄ-ի հետ Յայ աստանի, Վրաստանի ու Մոլդովայի հարաբերությունների հետագա զարգացման հեռանկարներն ու հիմնական խնդիրները: Ինչպես արդեն նշվել է, այս ենթագլխում ներկայացվում են նաև խնդրի վերաբերյալ երեք երկրների խորհրդարանական ուժերի դիրքորոշումները, ինչը թույլ է տալիս հեղինակի վերլուծությունը հագեցնել նաև էմպիրիկ տեղեկություններով:

ԵՄ-Յայ աստան հարաբերությունների զարգացման վրա Էսպես ազդել է ՌԴ-ի հետ վերջինիս հարաբերությունների բնույթը և քաղաքական, տնտեսական ու ռազմական կապվածության աստիճանը՝ պայմանավորված գերազանցապես անվտանգության հիմնահարցով: Դեռևս 1990-ական թթ. ՌԴ-ի հետ հաստատելով ռազմավարական հարաբերություններ և դառնալով ՅԱՊԿ-ի հիմնադիր անդամ՝ Յայ աստանն իր արտաքին քաղաքական ու անվտանգային օրակարգում Էական դեր հատկացրեց Ռուսաստանին՝ միաժամանակ պահպանելով համագործակցային հարաբերություններ ԵՄ-ի հետ: Սակայն անկախացումից ի վեր Յայ աստանի ներքին ու արտաքին քաղաքական, կարելի է ասել, բոլոր զարգացումների առանցքում եղել են արցախյան հակամարտության կարգավորումն ու պետականության պահպանումը, որոնց համատեքստում ՌԴ նշանակություն են աստիճանաբար ավելացել է՝ հանգեցնելով նաև համագործակցության այլ ոլորտների զարգացմանը: ՌԴ-ն, մասնակցելով մինսկյան գործընթացին և լինելով Յայ աստանին զենքի հիմնական մատակարարը, ավանդապես եղել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնական դերակատարներից մեկը և Յայ աստանի քաղաքական օրակարգում ամրապնդվել որպես անվտանգության երաշխավոր: Ի հակառակ սրան՝ Ռուսաստանը Յայ աստանին չի առաջարկել քաղաքական ու տնտեսական համակարգի զարգացման ձևաչափ և մեծ հաշվով չի էլ նպաստել դրան, ինչի արդյունքում Յայ աստանը սերտ հարաբերություններ է զարգացրել նաև ԵՄ-ի հետ՝ ներգրավվելով ԵՅԶ-ում, այնուհետև՝ ԱԼԳ-ում և բարեփոխումներ խթանել տարբեր ոլորտներում:

ԱԼԳ-ի միջոցով ԵՄ-ն ձգտում էր հնարավորինս խորացնել հարաբերությունները հարևան երկրների, այդ թվում՝ Յայ աստանի հետ, ինչի արդյունքում բանակցվում էր երկկողմ ԱՅ-ն, ներառյալ՝ ԽՅԱԱԳ-ն, որի ստորագրումը կարող էր Յայ աստանի համար խթան հանդիսանալ եվրոպական ինտեգրման քաղաքական ուղղությամբ շարժվելու համար: Այնուամենայնիվ, ՅՅ-ն որպես առևտրատնտեսական զարգացման հիմնական շրջանակ ընտրեց ԵԱՏՄ-ն, որին անդամակցությունը 2015 թ. սկսած պայմանավորում է նաև այլ դերակատարների, այդ թվում՝ ԵՄ-ի հետ առևտրի կազմակերպումը,

մինչդեռ բազում այլ ոլորտներում (կրթություն, առողջապահություն, տրանսպորտ և այլն) Հայաստանն ազատ է համագործակցել ցանկացած պետության կամ պետությունների խմբի հետ, ինչի շնորհիվ 2017 թ. ստորագրվեց ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ն՝ մասամբ վերականգնելով Հայաստանի արտաքին քաղաքականությունում խախտած հավասարակշռությունը: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ նախ, այդ հավասարակշռությունը չափազանց «փխրուն» է՝ հաշվի առնելով Հայաստանի անվտանգային խնդիրները: Ինչպես արդեն նշվել է, արցախյան հակամարտությունը գերակա նշանակություն ունի ՀՀ-ի համար, և քաղաքական տնտեսական զարգացումը կարող է երկրորդ պլան մղվել՝ կախված կոնֆլիկտի հետագա զարգացումներից: Անվտանգության երաշխիքներ տրամադրելու ԵՄ-ի անկարողությունը կարող է անկայուն իրավիճակներում հանգեցնել վերջինիս կողմից խթանվող սոցիալ-քաղաքական փոփոխություններին տրվող կարևորության կտրուկ անկման: Այնուամենայնիվ, Հայաստանը պետք է ձգտի առկա պայմաններում ԵՄ-ի հետ հարաբերությունների առավելագույն զարգացման, ինչը տեսանելի ապագայում թեև չի կարող փոխակերպել երկրի քաղաքական և առավել ևս՝ տնտեսական համակարգերը, սակայն ունակ է Եապես բարելավել հասարակական կյանքի տարբեր ոլորտները:

Այս մոտեցումն առկա է նաև Հայաստանի խորհրդարանական ուժերի շրջանում: ՀՀ ԱԺ ՀՀԿ խմբակցության ներկայացուցիչը, պաշտպանելով ԵԱՏՄ անդամակցության անհրաժեշտությունը, գտնում է, որ ԵՄ-ի հետ հարաբերությունները ևս կարևոր են Հայաստանի համար, և ներկայում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դրանց զարգացման ուղղությամբ, քանզի «նոր համաձայնագիրը մի հանգրվան է, որից հետո կարող է ավելի խորը համագործակցություն լինել» [163]: «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր Ն. Չոհրաբյանը ՀԸԳՀ-ն համարում է Հայաստանին տրված հաջողության բանալի, որի օգտագործումից է կախված նախատեսվող բարեփոխումների արդյունավետությունը. «Հայաստանին տնային առաջադրանքը տրված է, և անհրաժեշտ է քաղաքական կամք ցուցաբերել այն լուծելու համար» [164]: «Ելք» խմբակցության ներկայացուցիչ Ա. Չեյնալյանը թեև գտնում է, որ 2013 թ. այնուամենայն-

Նիվ հնարավոր էր ԵՄ-ի հետ ստորագրել ԱՅ-ն, սակայն ըստ նրա՝ ներկայումս էլ ԵՄ-ի հետ համագործակցության լայն հնարավորություններ կան. «Մենք չկարողացանք ստորագրել ԱՅ-ն, որովհետև առկա էր Ռուսաստանի ճնշումը, բայց այսօր բարեբախտաբար ունենք նոր փաստաթուղթ և դրա շրջանակներում պետք է փորձենք առաջ շարժվել» [165]: ՀՀ-ի խմբակցության նախագահ Ա. Ռուստամյանը Հայաստանի հետագա արտաքին քաղաքական զարգացումը տեսնում է ԵՄ-ի ու ՌԴ-ի հետ հավասարակշռված հարաբերությունների զարգացման մեջ. «Հայաստանը պետք է օգտվի փոխընթացման ընձեռած հնարավորություններից և այն ուղորտներից, որտեղ ԵՄ-ի ու Ռուսաստանի շահերը չեն հակասում: Միայն այս ճանապարհով է հնարավոր լուծել երկրի առջև ծառայած սոցիալ-քաղաքական խնդիրները» [166]:

Այսպիսով, Հայաստանի՝ առնվազն առաջիկա մի քանի տարիների արտաքին քաղաքական օրակարգը հստակ է և, հավանաբար, չի ենթարկվի էական փոփոխությունների, քանզի այն աջակցություն ունի թե՛ վերջին տասնամյակում երկրում իշխող ՀՀԿ-ի, թե՛ 2018 թ. մայիսի 8-ին ընտրված նոր վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից: Առաջիկա տարիներին, կարծում ենք, կամրապնդվի որդեգրված արտաքին քաղաքական գիծը՝ ապահովելով ԵԱՏՄ-ին կայուն անդամակցություն և ՀԸԳՀ-ի արդյունավետ իրականացումը: Հայաստանը, կարելի է ասել, արդեն իսկ խուսափել է ԵՄ-ի և ՌԴ-ի միջև աշխարհաքաղաքական բախման կիզակետ լինելուց՝ հնարավորություն ստեղծելով ՌԴ-ի հետ ռազմական ու տնտեսական կապվածությունը համարել քաղաքական արդիականացման, սոցիալական և այլ ուղորտներում ԵՄ-ի հետ համագործակցությունը:

Վրաստանի և ԵՄ-ի միջև հարաբերությունների սերտացումը, ինչպես հայտնի է, սկսվել է 2003 թ.՝ Մ. Սաակաշվիլի ու իշխանության գլուխը հետո, երբ եվրոպական ինտեգրումը հռչակվեց երկրի արտաքին քաղաքական գերակայություն, իսկ Ռուսաստանի հետ հարաբերությունների հավասարակշռման փորձ անգամ չէր արվում: Ընդհակառակը՝ վերջինիս հետ երկկողմ հարաբերությունները Սաակաշվիլի ու իշխանության տարիներին աստիճանաբար

վատթարացան՝ հանգեցնելով 2008 թ. հնգօրյա պատերազմին, որի արդյունքը եղավ Աբխազիայի և Յվ. Օսիայի անկախության ինքնահռչակումն ու փաստացի անջատումը Վրաստանից: Իրադարձությունների նման զարգացումը թեև ամրապնդեց ԵՄ-ի դիրքերը Վրաստանում, սակայն գրեթե անհնար դարձրեց անմիջական հարևան Ռուսաստանի հետ նորմալ հարաբերությունների վերականգնումը: ԵՄ-ն այս պարագայում ևս, ինչպես քննարկվել է, անգորգտնվեց Էական նպաստներելու լարվածության թուլացմանը, սակայն դրանով ԵՄ հեղինակությունը Վրաստանում չնվազեց, քանզի վերջինս ի սկզբանե սեփական անվտանգության ապահովումը կապում էր ոչ թե ԵՄ-ի, այլ ՆԱՏՕ-ի, հատկապես՝ դրա ամենախոշոր ռազմական ուժի՝ ԱՄՆ-ի հետ: Բացի այդ, կարևոր է հաշվի առնել Վրաստանի կողմից եվրոպական ինտեգրմանն ու կոնֆլիկտների նվերագրվող կարևորությունը: Եթե Յայաստանն անվերապահ մոտեցում ունի արցախյան հակամարտության նկատմամբ, ապա Վրաստանը, ինչպես պատմությունը ցույց է տվել, պատրաստ է նժարների վրա դնել եվրոպական ինտեգրումը և Աբխազիայի ու Յվ. Օսիայի հակամարտությունների կարգավորումը:

Յաստատուն ձևով շարժվելով դեպի արևմտականացում, այս դեպքում՝ ԵՄ-ի հետ հարաբերությունների սերտացում, Վրաստանն ամեն կերպ փորձել է կատարել, երբեմն էլ՝ գերակատարել ԱԳ շրջանակներում ԵՄ-ի կողմից առաջարկվող պահանջները և «ավելին ավելիի դիմաց» սկզբունքով ստանալ որոշ առավելություններ: 2014 թ. ԱՅ-ի ստորագրմամբ Վրաստանը պարտավորվեց առևտրատնտեսական, քաղաքական, իրավական և այլ ոլորտներում ենթարկվել ԵՄ նորմերին՝ այդպիսով խոշոր քայլ կատարելով դեպի ԵՄ անդամակցություն: Սրան մեծապես նպաստում է նաև վիզաների ազատականացված ռեժիմը, որը դյուրացրել է Վրաստանի ու ԵՄ-ի քաղաքացիների միջև հաղորդակցումը: Նման զարգացումները լուրջ հիմք են ստեղծել Վրաստանի լիարժեք եվրոպական ինտեգրման համար, սակայն աստիճանաբար սրել են Ռուսաստանի հետ հարաբերությունները, որոնք կարող են վտանգ հանդիսանալ Վրաստանի անվտանգության տեսանկյունից: ՌԴ-ն ներկայումս ամբողջապես տիրապետում է Աբխազիային ու Յվ. Օսիային, որտեղ

տեղակայված գործառնության միջոցով կարող է անվտանգային ինդիկատորներ լուծել, մինչդեռ Վրաստանը որևէ ռազմական դաշինքի անդամ չէ և որևէ նոր ռազմական բախման պարագայում չի կարող կոլեկտիվ աջակցություն ակնկալել: Թեև նոր ռազմական գործողություններ կանխատեսելի չեն, սակայն հաշվի առնելով այն, որ ԵՄ-ն ինքնին անվտանգություն պահանջ ունի և չի կարող այս հարցում Վրաստանին էսպես աջակցել, կարծում ենք՝ Վրաստանը պետք է փորձի որոշակի կայունություն ստեղծել ՌԴ-ի հետ հարաբերություններում:

Վրաստանի խորհրդարանական ուժերի շրջանում հիմնականում առկա է թշնամական վերաբերմունք ՌԴ-ի նկատմամբ և փոխզիջումային մոտեցումն անգամ չի ել քննարկվում թե՛ իշխանության, թե՛ ընդդիմության կողմից՝ պայմանավորված այն հիմնարար ընկալմամբ, որ ՌԴ-ն որևէ կերպ չի կարող միջամտել Վրաստանի եվրոպական ինտեգրմանը: Մասնավորապես՝ «Վրացական երազանք» դաշինքի պատգամավոր Ի. Դասենին գտնում է, որ Վրաստանը պետք է շարժվի լիարժեք եվրոպական ինտեգրման, այն է՝ ԵՄ-ին անդամակցության ուղով, իսկ հակամարտությունների կարգավորումը կախված է ՌԴ-ի բանակցային մոտեցումից. «Կոնֆլիկտների կարգավորումը կարող է երկար ժամանակ պահանջել, քանզի Ռուսաստանն ամեն կերպ նպաստում է Աբխազիայում ու ՉՎ. Օսիայում Վրաստանի մնացած մասի նկատմամբ կոշտ դիրքորոշման ձևավորմանը: Դժվար է ասել, թե ինչպիսի արձագանք կլինի ՌԴ-ի կողմից, եթե Վրաստանն անդամակցի ԵՄ-ին, սակայն միևնույնն է մենք պետք է դրան ձգտենք» [167]: «Միացյալ ազգային շարժման» պատգամավոր Ս. Կապանաձեն առաջիկայում հակամարտությունների կարգավորման միակ լուծում է տեսնում ՌԴ գործերի դուրսբերումը Վրաստանի տարածքից, սակայն դա առաջիկայում չի ակնկալում, ինչի պատճառով էլ գտնում է, որ եվրոպական ինտեգրումը չպետք է կապել դրա հետ, քանի որ Ռուսաստանը միևնույնն է շարունակելու է ռազմական վերահսկողություն և պահպանել Աբխազիայում և ՉՎ. Օսիայում. «Մենք չենք կարող Ռուսաստանի հետ բանակցել տարածքների շուրջ, կարող ենք բանակցել միայն ռուսական գործերի դուրսբերման շուրջ» [168]:

Այս հարցում միայն «Վրաստանի հայրենասերների դաշինք» կուսակցության ներկայացուցիչ Ա. Մարշանիան է, որ համեմատաբար մեղմ դիրքորոշում ունի և գտնում է, որ անհրաժեշտ է երկխոսության միջոցով լուծում գտնել առկա հակամարտության ունեներին, ինչը կարող է միայն նպաստել եվրոպական ինտեգրմանը. «Մենք որևէ կերպ չենք վիճարկում եվրոպական ուղու առաջնահերթությունը, սակայն հնարավոր էլ չէ ապրել մշտական ռազմական վտանգի պայմաններում» [169]:

Այսպիսով, ակնհայտ է, որ առաջիկա տարիներին Վրաստանը շարունակելու է հետևել իր հիմնական արտաքին քաղաքական գծին և ձգտելու է հնարավորինս շուտ դառնալ ԵՄ լիարժեք անդամ: Ակնհայտ է նաև, որ այս գործընթացը դեռևս զուգակցվելու է ՌԴ-ի հետ լարված հարաբերություններով: Վրաստանի հաջորդ խորհրդարանական ընտրություններն անցկացվելու են 2020 թ., սակայն նույնիսկ իշխանափոխության պարագայում արտաքին քաղաքական որևէ փոփոխություն չի ակնկալվում: Չարկ է նաև նշել, որ չնայած Վրաստանի գերակա նպատակ է ԵՄ լիարժեք անդամակցությունը, սակայն Աբխազիայի և ՉՎ. Օսիայի հակամարտությունների առկայության պայմաններում դեռևս դժվար է ԵՄ-ի կողմից ակնկալել անգամ անդամակցության արտենցիալ թեկնածուի կարգավիճակի շնորհում Վրաստանին:

Մոլդովայի արտաքին քաղաքական օրակարգը ԽՍՀՄ փլուզումից ի վեր ենթարկվել է բազում փոփոխությունների, իսկ ԵՄ-ն ու ՌԴ-ն միմյանց փոխարինել են երկրի առաջնահերթությունների սպեկտրում: ՄՅԿԿ-ի իշխանության սկզբնական տարիներին Մոլդովան առավելապես միտված էր դեպի արևելք, սակայն 2003 թ. Մերձդնեստրի խնդրի առնչությամբ ՌԴ-ի կողմից առաջարկված հայտնի հուշագիրը ստիպեց Կոմունիստական կուսակցությանը փոխել երկրի արտաքին քաղաքական ուղեգիծը և սերտացնել հարաբերությունները ԵՄ-ի հետ: 2009 թ. իշխանության եկած «Եվրոպական ինտեգրման դաշինքն» ամրապնդեց ԵՄ տեղը երկրի արտաքին քաղաքականությունում, սակայն ՌԴ աջակցությունը Մերձդնեստրի ինքնահռչակ հանրապետությանն ու Գագաուզիայում գերազանցապես ռուսամետ քննադատության առկայությունը սահմանա-

փակում են Մոլդովայի արտաքին քաղաքական կողմնորոշումը: Անվտանգության հիմնահարցը, գույքորդվելով ազգային ինքնության խնդրի և երկրում աղքատության բարձր մակարդակի հետ, խճճում են Մոլդովայի ինտեգրման հեռանկարները:

Մոլդովան ի գորու չէ Մերձդնեստրի հակամարտությունը և քաղաքի վայլ խնդիրները լուծել սեփական ռեսուրսներով, սակայն քաղաքական ու տնտեսական համակարգերի արդիականացման անհրաժեշտությունն ու Ռուսիայի հետ պատմական կապվածությունը ստիպեցին 2014 թ. ԵՄ-ի հետ ստորագրել ԱՅ, ինչպես նաև ՎԱԳԾ և ԵՄ-ի հետ հարաբերությունները բարձրացնել նոր մակարդակի վրա: Մոլդովան պատրաստակամորեն կատարում էր ԵՄ պահանջները՝ որպես նպատակ ունենալով լիարժեքորեն անդամակցել վերջինիս: Նման զարգացումները բարձրացրին ԵՄ-ի նշանակությունը Մոլդովայի տնտեսաքաղաքական զարգացման գործում: Միևնույն ժամանակ Մոլդովան հարաբերությունների որոշակի մակարդակ պահպանեց Ռուսաստանի հետ: 2016 թ. ՄՅՍԿ նախագահ Իգոր Դոդոնի՝ նախագահ ընտրվելուց հետո Մոլդովայում նոր թափ է ստացել ՌԴ-ամեն քաղաքականությունը: Թեև խորհրդարանում գերակշռում են եվրոպամետ ուժերը, Դոդոնը հանդես է եկել ԵՄ-ի հետ ԱՅ-ն չեղարկելու, անգամ՝ 2011 թ-ից գործող Ազգային անվտանգության հայեցակարգը վերանայելու և Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավման օգտին: Մոլդովայի պարագայում, թերևս, հետագա զարգացումների շուրջ եզրակացություններ անելն ամենադժվարն է, քանզի, ինչպես արդեն քննարկվել է, երկրում առկա չէ ներքին փոխհամաձայնություն երկրի արտաքին քաղաքական կողմնորոշման շուրջ: Այստեղ անգամ խորհրդարանական խմբակցությունների կազմը կայուն չէ. ՄԴԿ-ն, որ 2014 թ. ընտրությունների արդյունքում ստացել էր ընդամենը 19 մանդատ, սակայն այսօր տիրապետում է 42 մանդատի, իսկ ՄԼԴԿ-ն և ՄՅԿԿ-ն, որոնք սկզբնապես ստացել էին համապատասխանաբար 23 և 21 մանդատ, ներկայում ունեն ընդամենը 6 և 5 մանդատ:

Մոլդովայի ներկայիս խորհրդարանական դիսկուրսում եվրոպական ինտեգրման շուրջ պատկերացումները տարբեր են: ՄԴԿ ներկայացուցիչ Վ. Իվանովը գտնում է, որ Մոլդովան կատարել է ԵՄ

անդամ դառնալու համար անհրաժեշտ քայլերի մեծ մասը, և ակնկալում է, որ ապագայում Մոլդովյան կստանա անդամակցության թեկնածուի կարգավիճակ. «Մենք անցել ենք տարբեր դժվարությունների միջով, սակայն կարողացել ենք հասնել այս պահի առավելագույնին՝ ասոցացմանը: Մի քանի տարի հետո մենք արդեն իրավասու լինենք դառնալ ԵՄ անդամ» [170]: Հակառակ դիրքորոշում ունի ՄՅՍԿ ներկայացուցիչ Ա. Լեբեդիևսկին, որի դիտարկմամբ՝ ԵՄ անդամակցությանը ձգտելու որևէ շարժառիթ չկա, քանի որ այն կարող է միայն սահմանափակել երրորդ երկրների հետ շփվելու Մոլդովյանի ազատությունը. «Այս պահին ասոցացված կարգավիճակն ավելի ձեռնտու է, քանի որ կարող ենք հավասարը հավասարի խոսել ԵՄ-ի հետ, իսկ անդամակցությունից հետո մեր փոխարեն մեծամասնությունը պետք է որոշում կայացնի» [171]: Այս երկու կուսակցություններն այսօր որոշիչ դեր ունեն Մոլդովյան արտաքին քաղաքականության ձևավորման գործում, քանզի ՄԴԿ-ն, դաշինք կազմելով, Լիբերալ կուսակցության հետ, մեծամասնություն է կազմում խորհրդարանում և տիրապետում է վարչապետի պաշտոնն ու նախարարական պորտֆելների մեծ մասը, իսկ ՄՅՍԿ-ն տիրապետում է նախագահի պաշտոնը: Նման տարամետ դիրքորոշումները կարող են անկանխատեսելի հետևանքների հանգեցնել, հատկապես որ 2018 թ. Մոլդովյան անցկացվելու են խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում պատգամավորական տեղերի բաշխումից է կախված կառավարության ձևավորումն ու երկրի հետագա զարգացումը: Ընդ որում, հասարակական հարցումների համաձայն՝ ձայների շուրջ 40%-ը բաժին կհասնի ՄՅՍԿ-ին, 16-ական տոկոսը՝ ՄԴԿ-ին ու «Գործողություն և համերաշխություն» կուսակցությանը, որի առաջնորդ Մայա Սանդուկուն 2016 թ. նախագահական ընտրություններում Ի. Դոդոնի հետ միասին երկրորդ փուլ անցավ, իսկ շուրջ 7%-ը՝ ՄՅԿԿ-ին և «Արժանապատվություն և իրավունք» կուսակցությանը [150]: ՄՅՍԿ-ի իշխանության գալու դեպքում եթե անգամ ԱՅ-ն չեղյալ չհամարվի, ԵՄ անդամակցությունը որոշակի ժամանակով կկորցնի արդիականությունը Մոլդովյան արտաքին քաղաքականությունում, իսկ ՌԴ-ի հետ հարաբերությունները կինտենսիվանան:

Մուլ դոլայի համար եվրոպական ինտեգրման մեկ այլ նախադրյալ է Ռուսիայի հետ կապը: Ռուսիանախուս բազմաթիվ մուլ դոլացիներ կարող են ստանալ Ռուսիայի քաղաքացիությունը՝ այդպիսով դառնալով ԵՄ քաղաքացիներ, ինչը, իհարկե, առաջին հերթին, կնպաստի առանց այն էլ մտահոգիչ արտագաղթին: Տեսականորեն հնարավոր է նաև Ռուսիային միանալու հեռանկարը, ինչը Մուլ դոլան ավտոմատ կերպով կդարձնի ԵՄ անդամ: Այս պարագայում Մուլ դոլան կարիք չի ունենա բավարարելու Կոպենհագենյան չափանիշներին և անցնելու բանակցությունների երկարատև գործընթացի միջով: Այնուամենայնիվ, այս գաղափարը ներկայումս լայն տարածում չունի և հատկապես ռուսամետ քաղաքական ուժերի ազդեցիկ դերի պայմաններում դրա իրագործումն իրատեսական չէ:

Այսպիսով, հարկ է նշել, որ ԵՄ-ի հետ հարաբերությունների հետագա զարգացման հարցում Յայաստանի, Վրաստանի և Մուլ դոլայի ճանապարհները նույնական չեն՝ պայմանավորված մի շարք գործոններով՝ ներքաղաքական փոփոխություններից մինչև ՌԴ ազդեցությունը: Ընդ որում, կարևոր է ընդգծել, որ այս զարգացումներում փոփոխություններ մտցնելու ԵՄ ներուժը սահմանափակ է, և չնայած վերջինիս կողմից գործընկեր երկրներին առաջարկվող մեծածավալ ֆինանսական և այլ տեսակի աջակցությանը՝ երկկողմ համագործակցությունը հաճախ ակնկալվող մակարդակից ավելի ցածր է լինում կամ ձեռքբերված մակարդակի պահպանումը խնդրահարույց է դառնում:

ԵՃՐԱԿԱՏՈՒ ԹՅՈՒՆ

Ատենախոսական աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- Չարևան տարածաշրջանների հետ ԵՄ-ի հարաբերությունները սովորաբար հիմնված են եղել տեխնիկական համագործակցության և ԵՄ-ի կողմից ֆինանսական աջակցության վրա, և միայն ԳՀՀ-ների ստորագրմամբ ավելացավ համագործակցության քաղաքական բաղադրիչը, որը թեև ամրապնդվեց ԵՀԶ-ի հիմնմամբ, սակայն իրապես նպատակաուղղված արտաքին քաղաքականության վերածվեց միայն Ալ Գ-ի և ԵՄԳ-ի ստեղծմամբ, քանզի որոշակի տարբերակում մտցվեց գործընկեր երկրների միջև: Այնուամենայնիվ, Ալ Գ-ին մասնակցող երկրների քաղաքական և սոցիալ-մշակութային տարբերությունները և, իհարկե, աշխարհաքաղաքական դրությունները ԵՄ-ին ստիպեցին Էլ ավելի նկատելի տարբերակումներ դնել գործընկեր երկրների միջև, ինչը դրսևորվեց երկկողմ համաձայնագրերի կնքմամբ և 2011 ու 2015 թթ. ԵՀԶ-ի վերանայումներով:

- ԵՄ-ի կողմից հարևան երկրների հետ գործակցային հարաբերությունների զարգացման հիմնական նպատակը ԵՄ արտաքին անվտանգության ապահովումն է, իսկ արժեքային ընդլայնումն ու տնտեսական համագործակցության խորացումն առավելապես ծառայում են առաջնային նպատակի իրագործմանը: Այս եզրականացումը կարելի է նաև բացատրել ԵՄ-ի կողմից Ալ Գ երկրների միջև անբավարար տարբերակումը: Բացի այդ, ԵՄ արտաքին գործողությունները մեծապես պայմանավորված են ԵՄ ներքին փոփոխություններով, ինչի ընդհանուր ապացույցը ԵՀԶ հիմնումն էր՝ որպես 2004 թ. ԵՄ արևելյան ընդլայնումից բխող աշխարհաքաղաքական հետևանքների կառավարման միջոց:

- Չայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ ԵՄ-ի հարաբերությունները ԵՀԶ-ի, իսկ հետագայում՝ Ալ Գ-ի շրջանակներում կառուցված են եղել գրեթե նույն առաջնահեր-

թու թյ ու ն ն եր ի վր ա ն ն ա ս ա կ ե ն ու ն ե գ ե լ եր ե ք եր կր ն եր ը Ե Մ-ի հ ե տ ա ս ո ց ա ց ն ե լ ու մ ի ջ ո ց ո վ հ ա ս ն ե լ ու ա վ ե լ ի բ ա ր ձ ր մ ա կ ա ր դ ա կ ի հ ա մ ա գ ո Ր ծ ա կ ց ու թ յ ա ն : Ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ , ա յ ս եր կր ն եր ու մ Ա լ Գ-ի իր ա կ ա ն ա ց մ ա ն վր ա ա գ դ ե լ ե ն մ ի շ ա ր ք գ ո Ր ծ ո ն ն եր , ո Ր ո ն ք ձ և ա փ ո խ ե լ ե ն ա յ ն : Ա յ դ գ ո Ր ծ ո ն ն եր ի ց ա ա վ ե լ ն շ ա ն ա կ ա լ ի ե ն Ե Մ-Ռ Դ ա շ խ ա ր հ ա ք ա ղ ա ք ա կ ա ն մ Ր ց ա կ ց ու թ յ ու ն ը և Ռ ու ս ա ս ա տ ա ն ի ձ ե ո ք ու մ ա ա կ ա ա գ դ ե ց ու թ յ ա ն մ ի ջ ո ց ն եր ը , Լ ե ո ն ա յ ի ն Ղ ա ր ա ք ա ղ ի , Ա բ խ ա գ ի ա յ ի , Յ վ . Օ ս ի ա յ ի ու Մ եր ձ դ ն ե ս տր ի հ ա կ ա մ ա ր տ ու թ յ ու ն ն եր ու մ և ա յ ս ա փ ս ո վ Յ ա յ ա ս տ ա ն ի , Վր ա ս տ ա ն ի ու Մ ո լ դ ո վ ա յ ի ա ն վ տ ա ն գ ա յ ի ն օ Ր ա կ ա ր գ ու մ Ե Մ-ի ա ն բ ա վ ա ր ա ր ն եր գր ա վ վ ա ծ ու թ յ ու ն ը , Վր ա ս տ ա ն ի և Մ ո լ դ ո վ ա յ ի դ ե ա ք ու մ ` Ա լ Գ-ի իր ա կ ա ն ա ց մ ա ն ա ր դ յ ու ն ք ու մ Ե Մ-ի ն ա ն դ ա մ ա կ ց ու թ յ ա ն հ ե ո ա ն կ ա Ր ի բ ա ց ա կ ա յ ու թ յ ու ն ը և Մ ո լ դ ո վ ա յ ի պ ա ր ա գ ա յ ու մ ` ն եր ք ի ն դ Ր ու թ յ ու ն ն ու Ե Մ-ի ն կ ա տ մ ա մ ք դ ի Ր ք ո Ր ո շ ու մ ն եր ի հ ա ճ ա փ ա կ ի փ ո փ ո խ ու թ յ ու ն ն եր ը : Ա յ ս գ ո Ր ծ ո ն ն եր ի ա գ դ ե ց ու թ յ ու ն ը վ եր լ ու ծ ե լ ո վ ` կ ա ր ե լ ի Է ե գր ա կ ա ց ն ե լ ն ա ն , ո Ր Յ ա յ ա ս տ ա ն ու մ , Վր ա ս տ ա ն ու մ և Մ ո լ դ ո վ ա յ ու մ Ա լ Գ-ի իր ա կ ա ն ա ց ու մ ն ա ա վ ե լ ա պ ե ս հ ի մ ն վ ե լ Է ու ժ ա հ ե ն մ ո դ ե լ ի , ա յ ս ի ն ք ն ` ա շ խ ա ր հ ա ք ա ղ ա ք ա կ ա ն մ Ր ց ա կ ց ու թ յ ա ն վր ա :

▪ Ե Յ Բ ա ս տ ի ճ ա ն ա կ ա ն վ եր ա փ ո խ ու մ ն եր ի և Ե Յ Բ վ եր ա ն ա յ մ ա ն ա ր դ յ ու ն ք ու մ Ե Մ-ն ն կ ա տ ե լ ի ո Ր ե ն տ ա ր բ եր ա կ ե ց հ ա ր ա ք եր ու թ յ ու ն ն եր ն Ա լ Գ եր կր ն եր ի հ ե տ ` (չ) ս տ ո Ր ա գր ե լ ո վ տ ա ր բ եր մ ա կ ա ր դ ա կ ի շ Ր ջ ա ն ա կ ա յ ի ն հ ա մ ա ձ ա յ ն ա գր եր : Ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ , ա յ ս ս կ գ բ ու ն ք ն ի Ր հ եր թ ի ն մ ա ս ն ա կ ի ո Ր ե ն ձ ա փ ո ղ ե ց Ա լ Գ-ո վ ս ա հ մ ա ն վ ա ծ « ա վ ե լ ի հ ա վ ա կ ն ո տ գ ո Ր ծ ը ն կ եր ու թ յ ա ն » գ ա ղ ա փ ա ր ը , ք ա ն ի ո Ր ծ Ր ա գր ու մ ն եր ա ա վ ա ծ վ ե ց եր կր ն եր ի ց չ ո Ր ս ի հ ե տ գ ո Ր ծ ը ն կ եր ու թ յ ու ն ը տ ե ղ ա փ ո խ վ ե ց ն ո Ր մ ա կ ա ր դ ա կ , մ ի ն չ դ ե ո Ա դ Ր բ ե ջ ա ն ի ու Բ ե լ ա ու ս ի հ ա ր ա ք եր ու թ յ ու ն ն եր ը դ ե ո և ս մ ե ծ հ ա շ վ ո վ մ ն ու մ ե ն ն ու յ ն վ ի ճ ա կ ու մ , ի ն չ մ ի ն չ և Ա լ Գ մ ե կ ն ա ր կ ը :

▪ Յ ա յ ա ս տ ա ն -Ե Մ Յ Ը Գ Յ -ո վ , Վր ա ս տ ա ն -Ե Մ Ա Յ -ո վ և Մ ո լ դ ո վ ա -Ե Մ Ա Յ -ո վ ս ա հ մ ա ն վ ո ղ հ ա մ ա գ ո Ր ծ ա կ ց ու թ յ ա ն ո լ ո Ր տ ն եր ը հ ի մ ն ա կ ա ն ու մ ն ու յ ն ն ե ն ` ք ա ղ ա ք ա կ ա ն գ ո Ր ծ ա կ ց ու թ յ ու ն և ա ն վ տ ա ն գ ու թ յ ու ն , ա ր դ ա ր ա դ ա տ ու թ յ ու ն , տ ն տ ե ս ա կ ա ն և ա ա ն տր ա յ ի ն հ ա մ ա գ ո Ր ծ ա կ ց ու թ յ ու ն և ա յ լ ո լ ո Ր տ ն եր : Ա յ ս փ ա ս տ ա ր ղ թ եր ի ա ա ն ց ք ա յ ի ն տ ա ր բ եր ու թ յ ու ն ն ա ա ն տր ի ո լ ո Ր տ ու մ Է : Վր ա ս տ ա ն ի և

Մոլդովայի հետ կնքված ԱՅ-ները ներառում են նաև ԽՅԱԱԳ-ներ, որոնք ապահովում են ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժ երկու կողմերի միջև, մինչդեռ Հայաստանի հետ կնքված ՀԸԳՀ-ում այս բաղադրիչը ներառված չէ՝ պայմանավորված ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո ստանձնած պարտավորություններով: Երեք երկրների հետ համագործակցությունն առավել նկատելիորեն տարբերակվում է ԵՄ-ի կողմից տրամադրվելիք ֆինանսական միջոցների ծավալի տեսանկյունից: Մասնավորապես՝ Հայաստանը 2017-2020 թթ. ԵՄ-ի կողմից ստանալու է կիսով չափ պակաս աջակցություն, քան Մոլդովան, և ավելի քան 60%-ով պակաս, քան Վրաստանը: Իհարկե, շրջանակային համաձայնագրերի իրագործման վրա կարևոր ազդեցություն է ունենալու նաև մարդկանց ազատ տեղաշարժը, որը Վրաստանի և Մոլդովայի պարագայում արդեն ուժի մեջ է մտել, իսկ Հայաստանի դեպքում դեռևս չեն սկսվել դրաշուրջ բանակցությունները:

▪ ԵՄ-ի կարևոր ձեռքբերում է Հայաստանի հետ ՀԸԳՀ-ի կնքումը, քանզի դրա միջոցով ԵՄ-ն գործնականում կիրառեց ԵՀԲ 2015 թ. վերանայումը և ցույց տվեց, որ երրորդ երկրների հետ ծավալվող համագործակցության ու կնքվող փաստաթղթերի հարցում առկա է ավելի շատ ճկունություն և հաշվի են առնվում այդ երկրների առանձնահատկությունները: ՀՀ-ի հետ ԱՅ-ի ստորագրման անհնարինությունն ու ուկրաինական ճգնաժամը ԵՄ-ին ստիպեցին նոր մոտեցում որդեգրել ԱԳ տարածաշրջանի երկրների հանդեպ՝ չափանշելով բացարձակ եվրոպականացում, այլ բավարարվելով սահմանափակ համագործակցությամբ: Իհարկե, ԵԱՏՄ-ին միանալով և ԵՄ-ի հետ ոչ թե ԱՅ-ի, այլ ՀԸԳՀ-ի ստորագրմամբ Հայաստանը չստացավ ԵՄ-ի հետ ազատ առևտրի հնարավորություն, սակայն ճկուն արտաքին քաղաքականության շնորհիվ ՌԴ-ի հետ ռազմավարական դաշնակցությունն ու ԵԱՏՄ-ին անդամակցությունը լրացվեց ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացմամբ՝ համատեղելով երկու ինտեգրացիոն նախագծերը և խուսափելով ՌԴ-ԵՄ շահերի բախման կիզակետի նկատմամբ:

▪ Վրաստանի և Մոլդովայի հետ հարաբերությունները, կառուցված լինելով արդեն գործող Ասոցացման համաձայնագրերի և

Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրերի վրա, լուրջ հիմք են ապահովում երկկողմ համագործակցության զարգացման ու խորացման համար, ինչը պայմանավորված է նաև այս երկրներում հակամարտության ու նենտերի կարգավորմանը տրվող նշանակությունով: Եթե անվտանգային հիմնահարցը գերակա խնդիր է Հայաստանի արտաքին հարաբերությունների կառուցման տեսանկյունից, ապա Վրաստանում ու Մոլդովայում եվրոպական ինտեգրմանը վերագրվող կարևորությունը համեմատելի է հակամարտության ու նենտերի կարգավորմանը տրվող նշանակության հետ: Երկարաժամկետ բարեփոխումների իրականացման պարագայում այս երկու երկրները կարող են հավակնել նաև ԵՄ անդամակցության, որը չպետք է բացառվի օրակարգից: Եթե մինչ այժմ ԵՄ-ի կողմից առաջարկված խթանիչների հաշվին Վրաստանը և Մոլդովան ակտիվորեն ձգտել են սեփական քաղաքական ու տնտեսական համակարգերը համապատասխանեցնել ԵՄ չափանիշներին, ապա հետագա համագործակցությունը կարող է խաթարվել նոր խթանիչի՝ ԵՄ անդամակցության հնարավորության բացակայության պատճառով:

▪ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարանական ուժերի շրջանում ընդհանուր առմամբ առկա է դրական մոտեցում ԵՄ-ի նկատմամբ, իսկ վերջինիս հետ համագործակցությունն ընկալվում է իբրև կարևոր խթան երկրի զարգացման համար: Այնուամենայնիվ, առկա են որոշ տարբերություններ, որոնք հակիրճ կարելի է նկարագրել հետևյալ կերպ: Վրաստանում ԵՄ-ն դիտարկվում է բացարձակապես դրական լույսի ներքո, իսկ եվրոպական ինտեգրացիան բոլոր խորհրդարանական ուժերի համար գերակա ուղղություն է: Հայաստանում խնդրի շուրջ առկա է պրագմատիկ մոտեցում, և թեև ԵՄ-ի հետ համագործակցությունը դիտարկվում է որպես զարգացման կարևոր խթան, սակայն ոչ մի կուսակցության կողմից եվրոպական ինտեգրումը չի ընկալվում որպես գերակա արտաքին քաղաքական ուղղություն: Մոլդովայում ԵՄ-ի նկատմամբ դիրքորոշումներն ավելի մասնատված են. խորհրդարանական ոչ բոլոր ուժերն են սատարում երկկողմ հարաբերությունների զարգացման ընթացքը:

▪ Աշխարհաքաղաքական տեսանկյունից Յայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարանական դիսկուրսներն առավել նկատելիորեն են տարբերվում: Վրաստանում ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացումն ու ԵՄ լիարժեք անդամակցությունն արտաքին քաղաքական առաջնահերթություն են, որոնք պայմանավորված չեն ՌԴ-ի կամ այլ դերակատարների հետ հարաբերությունների զարգացման դինամիկայով: Այստեղ Ռուսաստանը չի ընկալվում որպես գործընկեր, և միայն մեկ փոքրաթիվ խորհրդարանական խմբակցություն է վերջինիս հետ հարաբերությունները բարելավելու իրական անհրաժեշտություն տեսնում: Յայաստանում և Մոլդովայում իրավիճակն էապես այլ է: Այստեղ Ռուսաստանը հիմնականում ընկալվում է որպես կարևոր գործընկեր, որի հետ սերտ հարաբերություններն էական նշանակություն ունեն երկու երկրների անվտանգային քաղաքականության համատեքստում: Յայաստանում և Մոլդովայում ոչ մի քաղաքական կուսակցության ներկայացուցիչ չի սատարում ՌԴ-ի հետ հարաբերությունների մակարդակի իջեցումը, առավել ևս՝ խզումը: Արտաքին քաղաքական դաշտում ԵՄ-ի ու ՌԴ-ի միջև հավասարակշռության պահպանումը դիտարկվում է որպես պետության գերակա շահերի իրականացման նախապայման:

▪ Յաջվի առնելով թե՛ Յայաստանում, թե՛ Վրաստանում, թե՛ Մոլդովայում գործում է կառավարման խորհրդարանական համակարգը, հարկ է նշել, որ ԵՄ-ի հետ երեք երկրների հարաբերությունների հետագա զարգացումն էապես պայմանավորված է լինելու խորհրդարանական ուժերի շրջանում դրա նկատմամբ առկա դիրքորոշումների փոփոխություններով: Մասնավորապես՝ եթե Յայաստանում և Վրաստանում այս իմաստով առկա է որոշակի կայունություն, ապա Մոլդովայի խորհրդարանական խմբակցությունների զբաղեցրած տեղերը, հետևաբար՝ նաև արտաքին քաղաքականության շուրջ մոտեցումները հաճախ փոփոխվում են: Նման փոփոխություն Մոլդովայում կարող է տեղի ունենալ նաև 2018 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

Ի ամփոփումն՝ կատարենք նաև երկու տեսական ընդհանրացում.

▪ «Եվրոպականացումը» չափազանց լայն հասկացություն է և տարբեր համատեքստերում կարող է ընդունել առանձին ձև և նշանակություն: Հարևան տարածաշրջանների հետ հարաբերությունների պարագայում այն ԵՄ-ի կողմից արտաքին կառավարում իրականացնելու և դեպի երրորդ երկրներ սեփական նորմերը, ինստիտուցիոնալ սկզբունքները, կառավարման նմուշներն ու արժեքները «արտահանելու» գործիք է:

▪ Եվրոպականացումը սովորաբար սկզբնավորվել և որոշակի ձև է ստացել ԵՄ-ի կողմից՝ հիմնվելով ԵՄ շահերի ու քաղաքական առաջնահերթությունների վրա՝ այդպիսով այն դարձնելով ուղղահայաց հարաբերություն ԵՄ-ի և գործընկեր երկրների միջև, որոնք ստիպված են եղել կա՛մ ընդունել համագործակցության առաջարկված շրջանակը, կա՛մ մերժել այն: Այսպիսով, առնվազն ԱԼԳ երկրների պարագայում եվրոպականացումը զարգացել է որպես համակարգային փոխակերպման գործիք, սակայն դրա փաստացի կիրառության արդյունքները մեծապես կախված են թե՛ ԵՄ ներսում տեղի ունեցող փոփոխություններից, թե՛ գործընկեր երկրում ԵՄ-ի շուրջ առկա պատկերացումներից, թե՛ արտաքին գործոններից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գրքեր

1. **Քոթանջյան Ջ.Ս.**, *Հայաստանի ազգային անվտանգության նախնականության մշակման ու դեցողյուները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում*, Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2008:
2. **Քոթանջյան Ջ.Ս.**, *Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս – Աֆղանստան*, Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2009:
3. **Քոթանջյան Ջ.Ս.**, *Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի նախնական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները*, Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010:
4. **Байор П. (ред.)**, *Восточное партнерство: цели - опыт - вызовы. Анализ процесса имплементации в государствах охваченных программой*, Краков, 2013.
5. **Бенюк В.**, *Европейские интеграционные процессы: Теории, концепции, понятия*, Кишинёв: Центрул Едиториал ал УСМ, 2006.
6. **Громогласова Е.**, *Теория и практика политического управления в Европейском Союзе*, Москва: ИММО РАН, 2009.
7. **Andersen S.S., Eliassen K.A. (eds.)**, *Making Policy in Europe. The Europeification of National Policy-making*, London, Thousand Oaks, New Delhi: SAGE Publications, 1993.
8. **Bretherton C., Vogler J.**, *The European Union as a Global Actor*, 2nd ed., London: Routledge, 2006.
9. **Checkel J.T. (ed.)**, *International Institutions and Socialization in Europe*, Cambridge: Cambridge University Press, 2007.
10. **Cowles M.G., Caporaso J.A., Risse T. (eds.)**, *Transforming Europe. Europeanization and Domestic Change*, New York: Cornell University Press, 2001.
11. **McCormick J.**, *Europeanism*, Oxford: Oxford University Press, 2010.
12. *Moldova and EU in the European Neighbourhood Policy Context: Implementation of the EU-Moldova Action Plan (February 2005 - January 2008)*, Chisinau, 2008.
13. **Featherstone K., Radaelli C. (eds.)**, *The Politics of Europeanization*, Oxford: Oxford University Press, 2003.

14. **Freyburg T., Lavenex S., Schimmelfennig F., Skripka T., Wetzel A.,** *Democracy Promotion by Functional Cooperation: The European Union and Its Neighbourhood*, Basingstoke: Palgrave Macmillan, 2015.
